© 2021. Զեկույցը հրապարակվել է «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության կողմից:

© 2021. Նկարազարդումը՝ «Խաղաղության երկխոսություն» ՀԿ:

Ծրագրի տնօրեն՝ Էդգար Խաչատրյան

Հարցերի համար դիմել Մարիաննա Խաժակյանին, էլ. հասցե՝ khazhakyan.marianna@peacedialogue.am:

© 2021. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ.-ի գործողությունների ծրագրի պաշտպանական ոլորտին վերաբերող միջոցառումների կատարման մշտադիտարկումն իրականացվում է «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության կողմից Գերմանիայի արտաքին գործերի նախարարության (ի դեմ՝ Հայաստանում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանության) եւ Բաց Հասարակության Հիմնադրամներ – Հայաստանի կողմից տրամադրված դրամաշնորհների շրջանակներում:

German Foreign Office

Deutsche Botschaft Eriwan

Բաց Հասարակության Հիմնադրամներ Հայաստան

Հրապարակման բովանդակության պատասխանատվությունը կրում է «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպությունը, եւ այն չի արտացոլում Գերմանիայի արտաքին գործերի նախարարության եւ Բաց Հասարակության Հիմնադրամներ – Հայաստանի տեսակետները:

Վանաձոր, 2021

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարությունից բխող 2020-2022 թթ. գործողությունների ծրագրի շրջանակներում պաշտպանական ոլորտի միջոցառումների մշտադիտարկման արդյունքները

ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Զեկույցը կազմեց
Անի Հարությունյանը

Ծրագրի տնօրեն՝
Էդգար Խաչատրյան

Խմբագիր՝
Վահագն Անտոնյան

Ծրագրի փորձագետներ՝
Արմեն Գրիգորյան,
Դիանա Տեր-Ստեփանյան
Արթուր Սուքիասյան

Հունվարի 01 – Դեկտեմբերի 31 | 2020

© 2021. Զեկույցը հրապարակվել է «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության կողմից:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարությունից բխող 2020-2022 թթ. գործողությունների ծրագրի շրջանակներում պաշտպանական ոլորտի միջոցառումների մշտադիտարկման արդյունքները

Տարեկան զեկույց

ՀՈՒՆՎԱՐ 01
ԴԵԿՏԵՄԲԵՐ 31 | 2020

© 2021. Զեկույցը հրապարակվել է «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության կողմից:

© 2021. Զեկույցը հրապարակվել է «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության կողմից:

© 2021. Նկարազարդումը՝ «Խաղաղության երկխոսություն» ՀԿ:

Ծրագրի տնօրեն՝ Էդգար Խաչատրյան

Հարցերի համար դիմել Մարիաննա Խաժակյանին, էլ. հասցե՝
khazhakyan.marianna@peacedialogue.am:

© 2021 «Խաղաղության երկխոսություն»

Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, 2002,
ք. Վանաձոր; Մյասնիկյան 12, բն. 40, «ԽԵ»
գրասենյակ

Հեռ.՝ +374 (322) 21340;
Բջջ.՝ +374 (55) 820 632; (93) 820 632

Էլ. փոստ՝ ekhachatryan@peacedialogue.am;
mailbox@peacedialogue.am

Կայք՝ http://www.peacedialogue.am;
http://www.safesoldiers.am

Զեկույցը կազմեց
Անի Հարությունյանը

Ծրագրի տնօրեն՝
Էդգար Խաչատրյան

Խմբագիր՝
Վահագն Անտոնյան

Ծրագրի փորձագետներ՝
Արմեն Գրիգորյան,
Դիանա Տեր-Ստեփանյան
Արթուր Սուքիասյան

© 2021. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ.-ի գործողությունների ծրագրի պաշտպանական ոլորտին վերաբերող միջոցառումների կատարման մշտադիտարկումն իրականացվում է «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության կողմից Գերմանիայի արտաքին գործերի նախարարության (ի դեմ՝ Հայաստանում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանության) եւ Բաց Հասարակության Հիմնադրամներ – Հայաստանի կողմից տրամադրված դրամաշնորհների շրջանակներում:

German Foreign Office
Deutsche Botschaft Eriwan
Բաց Հասարակության Հիմնադրամներ Հայաստան

Հրապարակման բովանդակության պատասխանատվությունը կրում է «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպությունը, եւ այն չի արտացոլում Գերմանիայի արտաքին գործերի նախարարության եւ Բաց Հասարակության Հիմնադրամներ – Հայաստանի տեսակետները:

Վանաձոր, 2021

Բովանդակություն

Հապավումներ **4**

Ներածություն **5**

Մեթոդաբանություն **7**

Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության մասին **8**

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրի պաշտպանական ոլորտին վերաբերող միջոցառումների մշտադիտարկման արդյունքները **10**

ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ **11**
- Գործողություն 1 12
- Գործողություն 2 25
- Գործողություն 3 35
- Գործողություն 4 38

ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻ ԱՐԳԵԼՔ **41**
- Գործողություն 12 43
- Գործողություն 14 45
- Գործողություն 15 47
- Գործողություն 18 48
- Գործողություն 26 52

ԳՈՐԾԻ ԱՐԴԱՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ **65**
- Գործողություն 27 66
- Գործողություն 28 67
- Գործողություն 34 68

ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ, ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՔ **77**
- Գործողություն 48 78

COVID-19 ..... **81**

ՄԻՊ ռազմավարության եւ դրանից բխող 2020-2022թթ. ԳԾ-ի վերաբերյալ ընդհանուր եզրակացություններ եւ առաջարկներ **85**

Հապավումներ

ԳԾ	Գործողությունների ծրագիր
ԵԱՀԿ	Եվրոպայում անվտանգության եւ համագործակցության կազմակերպություն
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
Զ ու ԶՀԾ	Զորամասեր ու զորակոչային եւ զորահավաքային համալրման ծառայություն
ԶՈՒ	Զինված ուժեր
ԶՔԳՎ	Զինվորական քննչական գլխավոր վարչություն
ԹՊԻՀ	Թմրամիջոցների դեմ պայքարի եւ իրավապահ համագործակցության
ԽԵ	«Խաղաղության երկխոսություն» ՀԿ
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՇՖ	Հրամանատարաշտաբային ֆակուլտետ
ՀՔԾ	Հատուկ քննչական ծառայություն
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԻԵԴ	Մարդու իրավունքների եվրոպական դատարան
ՄԻԵԿ	Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա
ՄԻՊ	Մարդու իրավունքների պաշտպան
ՄԻՊ	Մարդու իրավունքների պաշտպանություն
ՅՈՒՆԻՍԵՖ	ՄԱԿ-ի երեխաների հիմնադրամ
ՊՆ	Պաշտպանության նախարարություն
ՌՈ	Ռազմական ոստիկանություն
ՍՈԲԿ	Սպաների որակավորման բարձրացման կենտրոն
ՖԴԿ	Ֆինանսական դիտարկումների կենտրոն
EBRD	Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկ
GIZ	Միջազգային համագործակցության գերմանական ընկերություն
HELP	Իրավաբան մասնագետների համար մարդու իրավունքների ուսուցում
IAJ	Դատավորների միջազգային միություն
IDLO	Իրավունքի միջազգային զարգացման կազմակերպություն
IRZ	Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամ

Ներածություն

2015թ.-ից «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ն իրականացրել է մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2014-2016թթ. եւ 2017-2019թթ. գործողությունների ծրագրերի շրջանակներում, հատկապես՝ զինված ուժերում (այսուհետ՝ ԶՈՒ) մարդու իրավունքների վիճակի եւ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության (այսուհետ՝ ՊՆ) գործողությունների մշտադիտարկում: Կազմակերպությունը հավատացած է, որ սեկտորալ մշտադիտարկումներն առավել արդյունավետ են եւ հնարավորություն են տալիս իրականացնել ոլորտի թիրախային եւ խորքային ուսումնասիրություն անգամ սուղ միջոցներով:

Վերջին տարիներին միջազգային եւ տեղական հեղինակավոր կառույցների զեկույցներում հաճախ են հիշատակվում ՀՀ ԶՈՒ-ում մահվան, խոշտանգումների եւ վատ վերաբերմունքի դեպքերի, դրանց կապակցությամբ տարվող քննության արդյունավետության, արդար դատաքննության իրավունքի իրացման պայմանների եւ դատական համակարգի անկախության ու անկողմնակալության շուրջ խնդիրները: Այս լրջագույն խնդիրների առկայության մասին են վկայում ոչ միայն իրավապաշտպան խմբերի հայտարարություններն ու զեկույցները, այլեւ հեղինակավոր միջազգային կառույցների (Խոշտանգումների եւ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի (ԽԿԿ), Խոշտանգումների դեմ կոմիտեի (ԽԴԿ)) կողմից պարբերաբար բարձրաձայնվող հարցադրումները, ինչպես նաեւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) Հայաստանի Հանրապետության դեմ կայացրած մի շարք վճիռներն ու դրանց կատարողականների վերաբերյալ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի որոշումները:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2019թ. դեկտեմբերի 26-ի N 1978–Լ որոշմամբ ընդունվել է Մարդու իրավունքների պաշտպանության (այսուհետ՝ ՄԻՊ) ազգային ռազմավարությունը եւ դրանից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագիրը (այսուհետ՝ ԳԾ): Կառավարության վերոնշյալ որոշումը սահմանում է, որ ռազմավարության առաջնահերթությունները պայմանավորված են մարդու իրավունքների ոլորտում ՀՀ-ի կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման հրամայականով: Այս ռազմավարության իրագործմամբ կառավարությունն ակնկալում է ապահովել միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների կողմից արձակված ակտերի, հանձնարարականների եւ առաջարկությունների կատարումը, ինչպես նաեւ շտկել պարբերական եւ արտահերթ զեկույցներում բարձրացված խնդիրները:

2020թ.-ի սկզբին ԽԵ-ն նախաձեռնել է **«Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված պետական քաղաքականության մշակման եւ իրականացման գործընթացներում քաղաքացիական հասարակության դերի բարձրացումը»** ծրագիրը: Այս նախաձեռնությամբ կազմակերպությունը ձգտում է նպաստել ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանվածությանը՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար արդյունավետ մեխանիզմ ձեւավորելով մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրի շրջանակներում

պաշտպանական ոլորտում իրականացվող գործողությունների մշտադիտարկման նպատակով:

Նախաձեռնության շրջանակներում ձեւավորված, ՀՀ Երեւան քաղաքում եւ մարզերում գործող, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներից բաղկացած մշտադիտարկող խումբն իրականացնում է ՄԻՊ ռազմավարության եւ 2020-2022թթ. ԳԾ-ի պաշտպանական ոլորտին վերաբերող միջոցառումների կատարման մշտադիտարկումը:

Հաշվի առնելով ամբողջ աշխարհում ընթացող կորոնավիրուսի (COVID-19) հետեւանքների չեզոքացման եւ վարակի հետագա տարածումը կանխարգելող գործողությունների իրականացման կարեւորությունը՝ մշտադիտարկման ընթացքում առանձնակի ուշադրություն է դարձվել նաեւ ՀՀ ԶՈՒ-ում վարակի տարածումը կանխելու նպատակով իրականացվող գործողությունների ուսումնասիրությանը:

Սույն զեկույցը հիմնված է 2020թ. հունվարի 1-ից մինչեւ դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում պաշտպանական ոլորտին առնչվող գործողությունների կատարման ընթացքի դիտարկման արդյունքների վրա:

Մեթոդաբանություն

ՄԻՊ ռազմավարության եւ 2020-2022թթ. ԳԾ-ով սահմանված առանձին գործողությունների կատարման ընթացքի մշտադիտարկման նպատակով «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ն հարցումներ է ուղարկել պաշտպանական ոլորտում այդ իրավունքների պաշտպանության համար լիազոր եւ ԳԾ-ով որպես պատասխանատու եւ (կամ) համակատարող հանդիսացող պետական մարմիններին: Ստացված պատասխան գրությունների հիման վրա իրականացվել է վերլուծություն:

Գործողությունների կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկությունները ստացվել են նաեւ բաց աղբյուրներից, այդ թվում՝ ՄԻՊ ռազմավարությանը եւ ԳԾ-ին նվիրված e-rights.am կայքից, 2020թ. առաջին կիսամյակային հաշվետվությունից, Արդարադատության ակադեմիայի, պաշտպանության նախարարության, ԵԽ երեւանյան գրասենյակի պաշտոնական կայքերից:

Նախապես մշակված եւ պարբերաբար կատարելագործվող մեթոդաբանության հիման վրա՝ «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ի նախաձեռնությամբ ձեւավորված ՄԻՊ ռազմավարության մշտադիտարկող խումբը 2020թ. օգոստոսին իրականացրել է ստանդարտացված հարցազրույցներ զորակոչիների շրջանում՝ պարզելու համար, թե ինչ միջոցառումներ է ձեռնարկել պետությունը COVID-19 համաճարակային իրավիճակի պայմաններում զորակոչի անվտանգ կազմակերպման համար, որքանով են զորակոչիկները տեղյակ ՄԻՊ ռազմավարությունից բխող գործողությունների շրջանակով պայմանավորված իրավունքներից եւ այդ իրավունքների իրացման ինչ փորձ ունեն: Դիտարկումն իրականացվել է զինկոմիսարիատներում՝ հաշվի առնելով, որ ՄԻՊ ռազմավարությամբ նախատեսված գործողությունների մի մասն առնչվում է զինկոմիսարիատներին: Մշտադիտարկումն իրականացվել է Երեւան քաղաքում եւ բոլոր մարզերում: Հարցվողների ընտրությունն իրականացվել է ձնակույտի մեթոդով, զորակոչիկների կուտակման հիմնական վայրերում՝ զինկոմիսարիատներում, տարածքային ստորաբաժանումներում եւ բժշկական զննությունների անցկացման հաստատություններում: Ներկայացուցչական ընտրանք իրականացնելն անհնարին է եղել, քանի որ մշտադիտարկող խմբի անդամներին չէր կարող հասանելի լինել զորակոչվողների ամբողջական ցանկը: Մշտադիտարկման շրջանակներում հարցվել է 196 զորակոչիկ:

2020թ. նախատեսված տարեկան գործողությունների կատարման ընթացքը մշտադիտարկվել է նաեւ ՄԻՊ ռազմավարության եւ 2020-2022թթ. ԳԾ-ի համակարգային (systemic) վերլուծությամբ՝ այն խնդիրները վերհանելու նպատակով, որոնք կարող են խոչընդոտ հանդիսանալ ՄԻՊ ռազմավարության եւ ԳԾ-ի լիարժեք կատարման համար:

Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության մասին

2019թ. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունն ընդունվեց 2018թ. հեղափոխության արդյունքում իշխանության եկած կառավարության կողմից, ինչը նշանակում էր, որ այդուհետ նպատակ էր դրվել ստեղծել իրավունքակենտրոն կառավարման համակարգ:[1] Նոր ձեւավորված կառավարությունը կարեւորագույն առաջնահերթություն էր հռչակել անձանց խախտված իրավունքների վերականգնումը, ինչպես նաեւ՝ մարդու իրավունքների երաշխավորման եւ պաշտպանության ինստիտուցիոնալ եւ համակարգված քաղաքականության մշակումն ու իրականացումը:[2] Այսպես, մի շարք այլ ոլորտային ռազմավարությունների հետ միասին մշակվեց նաեւ ՄԻՊ ռազմավարությունը:

Մարդու իրավունքների պաշտպանության այս նոր ռազմավարությունը մատնանշում է միջազգային կառույցների զեկույցներում բարձրացված մարդու իրավունքներին առնչվող օրենսդրական եւ գործնական կիրառման խնդիրները, որոնց շարքում առանձնացվել են, օրինակ, զինված ուժերում մահվան, վատ վերաբերմունքի դեպքերը եւ դրանց կապակցությամբ հարուցված քրեական գործերի ոչ արդյունավետ քննությունը, արդար դատաքննության իրավունքի իրացման ոչ բավարար պայմանները, իրավահավասարության մթնոլորտի ու գործելակերպի ապահովման, խտրականության դեմ պայքարի ուղղությամբ անբավարար քայլերը, մարդու իրավունքների խախտումների նկատմամբ պետության անհամարժեք արձագանքը:[3]

Ռազմավարությունն առանձնացրել է երեք ռազմավարական գերակայություններ.

- քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների պաշտպանություն,
- սոցիալ-տնտեսական իրավունքների պաշտպանություն,
- հավասար իրավունքների եւ հավասար հնարավորությունների ապահովում:

Փաստաթուղթն առանձնացրել է ՄԻՊ ռազմավարության եւ գործողությունների ծրագրի կատարման ընթացքում չորս **հնարավոր ռիսկեր**. **ֆինանսական միջոցների բացակայություն կամ ոչ բավարար տրամադրում, լրացուցիչ/չպլանավորված աշխատանքներ, կազմակերպչական մարտահրավերներ, պետական մարմինների միջեւ ոչ բավարար համագործակցություն**:

2020 թվականի սկզբից ամբողջ աշխարհում բռնկված COVID-19 համաճարակը, իսկ ավելի ուշ՝ Ադրբեջանի կողմից սանձազերծած պատերազմական գործողություններն ի հայտ բերեցին այն փաստը, որ

1. ՄԻՊ ռազմավարություն, էջ 9
2. ՄԻՊ ռազմավարություն, էջ 9
3. ՄԻՊ ռազմավարություն, էջ 10-11

ռազմավարական փաստաթղթի մշակման ընթացքում հաշվի չեն առնվել ոչ պատերազմի վերսկսման կամ, անգամ, սահմանային լարվածության ավելացման վտանգները, ոչ համաճարակով պայմանավորված սահմանափակումներն ու ճգնաժամը: Վերոնշյալ երկու գործոններն էլ կտրուկ բովանդակային փոփոխության են ենթարկել Հայաստանի Հանրապետության քաղաքական, քաղաքացիական եւ սոցիալ-տնտեսական միջավայրը՝ բազմապատկելով պետության առջեւ ծառացած թե՛ անվտանգության և թե՛ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտի մարտահրավերները: Այս հանգամանքը, կարծում ենք, հիմք է հանդիսանալու ոչ միայն ՄԻՊ ռազմավարությունից բխող 2020-2022թթ.-ի գործողությունների ծրագրում պաշտպանական ոլորտին վերաբերող միջոցառումների, այլեւ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության և ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարությունների, ինչպես նաև պաշտպանական ոլորտում մարդու իրավունքների պաշտպանության քաղաքականության վերանայման եւ արդիականացման համար:

Ուշագրավ է, որ 2019թ. սկզբին «Խաղաղության երկխոսությունը» ներգրավվել է «Անվտանգության ոլորտի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության ազգային հարթակի» աշխատանքներում: ՀՀ ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի խորհրդատվական մարմին հանդիսացող այս հարթակի նպատակն է խթանել Հայաստանում անվտանգության ոլորտի ժողովրդավարական-քաղաքացիական վերահսկողությանը: Այն միավորում է անվտանգության ոլորտում գործող պետական կառույցների, արտաքին վերահսկողության մարմինների եւ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներին: Բացի այդ, 2020թ-ին «Խաղաղության երկխոսություն» հկ-ն ընդգրկվել է 2020-2022թթ. ՄԻՊ ԳԾ-ի համակարգումը եւ մշտադիտարկումն իրականացնող համակարգող խորհրդի կազմում:

Հավատացած ենք, որ մշտադիտարկման արդյունքում վերհանված խնդիրները և մշտադիտարկող խմբի կողմից արված առաջարկները արժեքավոր ներդրում կարող են հանդիսանալ Հայաստանի Հանրապետությունում պաշտպանական ոլորտում մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված քաղաքականության բարեփոխումների կարևորագույն գործում:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրի պաշտպանական ոլորտին վերաբերող միջոցառումների մշտադիտարկման արդյունքները

«Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ն մշտադիտարկման շրջանակներում կենտրոնացել է հատկապես զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող գործողությունների կատարման մշտադիտարկման վրա: Մասնավորապես, մշտադիտարկվել են զինված ուժերում **կյանքի իրավունքին, խոշտանգումների արգելքին, գործի արդար քննության իրավունքին, ինչպես նաեւ իրավահավասարության եւ խտրականության արգելքի համատեքստում կանանց իրավունքներին վերաբերող գործողությունները:**

ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ

ՄԻՊ ռազմավարությունը եւ 2020-2022թթ. գործողությունների ծրագիրը թիրախավորում են հատկապես պետության հոգածության ներքո գտնվող եւ կյանքի համար վտանգավոր իրավիճակներում հայտնված անձանց կյանքի իրավունքի պաշտպանության խնդիրները: Այդպիսի անձանց ցանկում են նաեւ զինծառայողները, որոնց իրավունքների պաշտպանության շրջանակներում ռազմավարությունը պետության համար լրջագույն մարտահրավեր է ճանաչում խաղաղ պայմաններում կանոնադրային հարաբերությունների խախտումների արդյունքում զինծառայողների մահվան դեպքերը:[4]

Միեւնույն ժամանակ, ՄԻՊ 2020-2022թթ. ԳԾ-ի փաստաթղթում կյանքի իրավունքի ապահովմանն ուղղված բոլոր գործողությունների նպատակը եւ խնդիրները հիմնավորված են միայն ընտանեկան բռնության վերաբերյալ վիճակագրական տվյալներով: Միայն ընտանեկան բռնության համատեքստում է նպատակ դրվում քրեական գործերն ավելացնել որոշակի տոկոսով[5]: Նման չափելի նպատակ չի սահմանվում զինված ուժերում մահվան դեպքերի նվազեցման եւ (կամ) դրանց վերաբերյալ գործերի քննության ավելացման առումով: Սրան գումարվում է այն, որ ներկա իրավիճակի վերաբերյալ ելակետային տվյալներ եւս չկան: Այս տվյալների բացակայության պայմաններում անհնարին է դառնում գործողությունների ազդեցության չափումը, այսինքն, հնարավոր չէ արձանագրել, թե ինչ դրական իրավիճակային փոփոխություն է արձանագրվելու այս կամ այն ռազմավարական գործողության իրականացման արդյունքում:

Չնայած 2020թ. երկրորդ կիսամյակում ԳԾ փոփոխությունների նախագծի առաջարկություններով հստակեցվել են որոշ ելակետային տվյալներ, սակայն դրանք կրկին վերաբերել են միայն ընտանեկան բռնությանը:

4. ՄԻՊ ռազմավարություն, էջ 19
5. ՄԻՊ 2020-2022թթ. ԳԾ, էջ 1

Գործողություն 1

Իրականացնել վերապատրաստումներ (դասընթացներ) կյանքի իրավունքի թեմայով՝ միջազգային չափանիշներին համապատասխան, այդ թվում՝ ԶՈՒ հրամանատարների, ռազմական ոստիկանների, քննիչների, դատախազների, դատավորների, փաստաբանների համար

ՄԻՊ ԳԾ կյանքի իրավունքին նվիրված առաջին գործողությամբ նախատեսվել է իրականացնել վերապատրաստումներ (դասընթացներ) կյանքի իրավունքի թեմայով՝ միջազգային չափանիշներին համապատասխան, այդ թվում՝

- ԶՈՒ հրամանատարների,
- ռազմական ոստիկանների,
- քննիչների,
- դատախազների,
- դատավորների,
- փաստաբանների համար:

Որպես այս գործողությունից ակնկալվող անմիջական արդյունքներ՝ նախատեսվել է 2020-2022թթ. ընթացքում «Մարդու իրավունքները զինված ուժերում» առարկան ներառել Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանի Սպաների որակավորման բարձրացման կենտրոնի (ՍՈԲԿ) եւ հրամանատարա-շտաբային ֆակուլտետի (ՀՇՖ) ուսումնական ծրագրերում, ինչպես նաեւ կյանքի իրավունքի թեմայով վերապատրաստել

- հրամանատարների 18%-ին,
- ռազմական ոստիկանների 17%-ին,
- քննիչների 8%-ին,
- դատախազների 4%-ին,
- դատավորների 41%-ին:

Ակնկալվում է, որ **«Մարդու իրավունքները զինված ուժերում»** առարկայի՝ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանի Սպաների որակավորման բարձրացման կենտրոնի (ՍՈԲԿ) եւ հրամանատարա-շտաբային ֆակուլտետի (ՀՇՖ) ուսումնական ծրագրերում ներառմամբ եւ հրամանատարների վերապատրաստմամբ **կնվազեն զինված ուժերում մահվան դեպքերը**: Ակնկալվում է նաեւ, որ

- ռազմական ոստիկանների վերապատրաստման արդյունքում **կնվազեն ԶՈՒ-ում մահվան դեպքերը, դրանց վերաբերյալ քրեական գործերով հետաքննության ընթացքում մարդու իրավունքների խախտումները**,
- քննիչների դեպքում՝ **ԶՈՒ-ում մահվան դեպքերի վերաբերյալ քրեական գործերով նախաքննության ընթացքում մարդու իրավունքների խախտումները**,
- դատախազների դեպքում՝ **ԶՈՒ-ում մահվան դեպքերը, դրանց վերաբերյալ քրեական գործերով մինչդատական քննության ընթացքում մարդու իրավունքների խախտումները**,
- իսկ դատավորների դեպքում՝ **ԶՈՒ-ում մահվան դեպքերի վերաբերյալ քրեական**

գործերով կնվազեն դատական քննության ընթացքում մարդու իրավունքների խախտման դեպքերը:

«Մարդու իրավունքները զինված ուժերում» առարկան Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանի ուսումնական ծրագրերում ներառելու եւ կյանքի իրավունքի թեմայով հրամանատարների վերապատրաստման համար պատասխանատու պետական մարմին է սահմանվել ՀՀ պաշտպանության նախարարությունը, իսկ որպես համակատարող մարմին՝ ՄԻԵԴ-ում ՀՀ ներկայացուցչի գրասենյակը:

Կյանքի իրավունքի թեմայով ռազմական ոստիկանների վերապատրաստման համար պատասխանատու մարմինը եւս պաշտպանության նախարարությունն է, իսկ համակատարող մարմինները՝ ՀՀ ոստիկանության ակադեմիան՝ համաձայնությամբ, եւ ՄԻԵԴ-ում ՀՀ ներկայացուցչի գրասենյակը:

Քննիչների, դատախազների եւ դատավորների վերապատրաստումների համար պատասխանատու մարմինը ՀՀ արդարադատության նախարարությունն է:

Քննիչների վերապատրաստման իրականացման համար համակատարող մարմիններ են նախանշվել ՀՀ Արդարադատության ակադեմիան՝ համաձայնությամբ, ՀՀ քննչական կոմիտեն՝ համաձայնությամբ, եւ ՄԻԵԴ-ում ՀՀ ներկայացուցչի գրասենյակը, դատախազների վերապատրաստման համար՝ ՀՀ Արդարադատության ակադեմիան՝ համաձայնությամբ, եւ ՄԻԵԴ-ում ՀՀ ներկայացուցչի գրասենյակը, իսկ դատավորների վերապատրաստման համար՝ ՀՀ Արդարադատության ակադեմիան՝ համաձայնությամբ, Դատավորների ընդհանուր ժողովի ուսումնական հարցերի հանձնաժողովը՝ համաձայնությամբ, եւ ՄԻԵԴ-ում ՀՀ ներկայացուցչի գրասենյակը:

Գործողություն 1-ի իրականացման ֆինանսավորումը կատարվում է պետական բյուջեից եւ օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Այս գործողությամբ որպես ակնկալվող անմիջական արդյունք ներառված չէ կյանքի իրավունքի թեմայով փաստաբանների վերապատրաստումը, չնայած այն բանին, որ նախատեսված է բուն գործողությունում:

2020թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին կյանքի իրավունքի թեմայով հրամանատարների, ռազմական ոստիկանների, քննիչների համար նախատեսված վերապատրաստումները (դասընթացները) եւ Արդարադատության ակադեմիայի՝ դատախազների համար մշակված «Մարդու իրավունքների միջազգային իրավունքի արդի հարցեր» թեմայով տարեկան դասընթացը չեն իրականացվել՝ կորոնավիրուսային վարակով պայմանավորված[6]:

ՀՀ օրենսդրության համաձայն՝ ՀՀ Արդարադատության ակադեմիան իրականացնում է տարեկան վերապատրաստումներ քննիչների, դատախազների, դատավորների

6. ՊՆ/510ԳՔ/2707-2020, 28 օգոստոսի, 2020թ.; ՔԿ, 12/12/47261-20, 28 օգոստոսի, 2020թ.; ՀՀ արդարադատության նախարարության 2020թ. հոկտեմբերի 14-ի գրություն Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող դասընթացների վերաբերյալ

համար: ՀՀ արդարադատության նախարարությունն այս դասընթացներին է հղում կատարել՝ որպես 2020-2022թթ. ԳԾ-ով նախատեսված կյանքի իրավունքի թեմայով վերապատրաստումներ: ՀՀ օրենսդրության համաձայն՝ ՀՀ Արդարադատության ակադեմիան քննիչների, դատախազների, դատավորների վերապատրաստումներն իրականացնում է օրենքով սահմանված ժամկետներում՝ հաստատելով ուսուցման ծրագրերը եւ մասնակիցների ցանկերը: Յուրաքանչյուր հաջորդ տարվա համար որոշումը կայացվում է նախորդ տարի[7]: Մարդու իրավունքների ազգային ռազմավարությունը եւ դրանից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագիրը ՀՀ կառավարության թիվ 1978-Լ որոշմամբ հաստատվել է 2019թ. դեկտեմբերի 26-ին: Վերապատրաստվող քննիչներին ու դատախազներին ներգրավելու եւ ուսուցման ծրագրերի վերաբերյալ որոշումները կայացվել են ավելի շուտ: Դա նշանակում է, որ թեմաների եւ մասնակիցների շրջանակը սահմանվել են ՄԻՊ ռազմավարության եւ ԳԾ որոշման ընդունումից առաջ եւ անկախ ՄԻՊ ռազմավարությունից եւ ԳԾ-ից: Հետեւաբար, դրանք չեն կարող ներկայացվել որպես 2020-2022թթ. ԳԾ-ից բխող կատարված գործողություններ:

Բացի այդ, ինչպես տեղեկացել ենք Դատավորների ընդհանուր ժողովի ուսումնական հարցերի հանձնաժողովից, այն 2020թ. տարեկան վերապատրաստման համար դատավորների, դատավորների թեկնածուների ուսուցման ծրագրերում ներառելու նպատակով առարկայական կուրսերի (թեմաների) վերաբերյալ իր առաջարկություններն Արդարադատության ակադեմիա է ներկայացրել դեռեւս 2019թ. հուլիսի 31-ի որոշմամբ, հետեւաբար՝ նշված գործողությունները եւս չէին կարող հանդիսանալ 2020-2022թթ. ԳԾ-ի մաս[8]:

Ինչպես նշել է արդարադատության նախարարությունը, կյանքի իրավունքի թեմայով քննիչների, դատախազների եւ դատավորների վերապատրաստումներն իրականացվելու են

- Եվրոպայի խորհրդի,
- ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի,
- ՅՈՒՆԻՍԵՖ-ի,
- ՄԱԿ-ի զարգացման ծրագրի,
- Եվրոպական միության,
- Իրավունքի միջազգային զարգացման կազմակերպության (IDLO),
- Միջազգային համագործակցության գերմանական ընկերության (GIZ),
- Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ),
- Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի (EBRD) հետ համագործակցությամբ[9]:

Այդ համագործակցությունների ձեւաչափերի եւ բովանդակության հետ կապված մանրամասնություններ չեն տրամադրվել:

---

7. Տես՝ «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենք, հոդված 14(1)(3), հոդված 19(2)(2) եւ 19(2)(3), հոդված 19 (6.1), հոդված 19 (7.1), հոդված 20(1) եւ (2), հոդված 21(6); «Դատախազության մասին» ՀՀ օրենք, հոդված 38.1
8. Դատավորների ընդհանուր ժողովի ուսումնական հարցերի հանձնաժողով, N-00/20-Ու, Ե-6451, 11 սեպտեմբերի 2020թ.
9. ՀՀ արդարադատության նախարարության 2020թ. հոկտեմբերի 14-ի գրություն Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող դասընթացների վերաբերյալ

Ըստ արդարադատության նախարարության տրամադրած տվյալների՝ ակադեմիայում քննիչների, դատախազների եւ դատավորների վերապատրաստման նպատակով յուրաքանչյուր դասընթացի վերաբերյալ ունկնդիրներին տրամադրվում է ուսումնասիրության համար պարտադիր տեսական գրականության եւ դատական նախադեպային որոշումների ցանկ: Տեսական գրականության հեղինակները դասընթացավարներն են կամ ոլորտի ակնառու իրավաբան-գիտնականներ[10]: Եվրոպայի խորհրդի, Եվրոպական միության եւ Արդարադատության ակադեմիայի համագործակցությամբ մշակվել եւ վերապատրաստման ծրագրերում ներդրվել է Ս. Առաքելյանի, Ջ. Կոզմայի **«Կյանքի իրավունքին, խոշտանգումների եւ վատ վերաբերմունքի այլ ձեւերի արգելքին առնչվող գործերի քննությունը»** վերտառությամբ ձեռնարկը[11]:

Արդարադատության նախարարությունը «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ի՝ վերապատրաստումներին ԶՔԳՎ կոնկրետ օղակի քննիչների, զինվորական դատախազների եւ կոնկրետ ատյանի դատավորների մասնակցության, նրանց ընտրության սկզբունքի վերաբերյալ հարցին ի պատասխան հղում է կատարել ՀՀ օրենսդրությանը՝ նշելով, որ վերապատրաստմանը քննիչները, դատավորները մասնակցում են առանց առանձնացված մասնագիտացումների, իսկ դատավորներն՝ անկախ ատյանից[12]:

Ինչպես նշել ենք վերեւում, Արդարադատության ակադեմիայում քննիչների, դատախազների, դատավորների՝ օրենքով սահմանված տարեկան եւ պարբերական վերապատրաստումները դուրս են ՄԻՊ 2020-2022թթ. ԳԾ շրջանակներից, քանի որ 2020-2021թթ. մասով դրանք իրականացվում են ԳԾ-ի պահանջներից անկախ:

Արդարադատության նախարարությունը, կրկին անդրադառնալով Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող դասընթացներին, նշել է, որ ուսումնական նյութերի պատրաստման աշխատանքներում ներգրավված են

- Արդարադատության ակադեմիան,
- ՀՀ դատախազությունը,
- Ֆինանսական դիտարկումների կենտրոնը (ՖԴԿ),
- ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամը,
- ՅՈՒՆԻՍԵՖ-ը,
- ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը,
- Եվրոպական միությունը,
- Եվրոպայի խորհուրդը[13]:

Վերոնշյալ կազմակերպությունների ներգրավվածությանը վերաբերող մանրամասներ չեն տրամադրվել:

---

10. ՀՀ արդարադատության նախարարության 2020թ. հոկտեմբերի 14-ի գրություն Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող դասընթացների վերաբերյալ
11. նույն տեղում
12. նույն տեղում; «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 24(1); «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենք, հոդված 36 (1); «Դատախազության մասին» ՀՀ օրենք, հոդված 48 (1)(7), հոդված 51(1); «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենք, հոդված 70 (2)(9)
13. ՀՀ արդարադատության նախարարության 2020թ. հոկտեմբերի 14-ի գրություն Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող դասընթացների վերաբերյալ

Վերապատրաստված քննիչների, դատախազների ու դատավորների գնահատման հարցի առնչությամբ արդարադատության նախարարությունը եւս հղում է կատարել «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքին, որի համաձայն՝ քննիչը, դատախազը, դատավորը համարվում են վերապատրաստումը կամ լրացուցիչ վերապատրաստումն անցած, եթե մասնակցել են վերապատրաստման կամ լրացուցիչ վերապատրաստման համապատասխան առարկայական կուրսի բոլոր ժամերին[14], կամ որպես դասախոս ներգրավված են եղել ակադեմիայում 14-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված անձանց ուսուցման գործընթացին[15]: Այսինքն՝ օրենքով նախատեսված չէ քննիչների, դատախազների ու դատավորների վերապատրաստման արդյունքների գնահատում[16]: Հավաստագրեր եւս չեն տրամադրվում[17]:

Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող կյանքի իրավունքի թեմայով վերապատրաստումների նյութերը, այդ թվում՝ հրապարակային ուսումնական ձեռնարկները, հասանելի են Արդարադատության ակադեմիայի պաշտոնական կայքում՝ հետեւյալ էջում. http://www.justiceacademy.am/#143: Արդարադատության նախարարությունը չի տրամադրել չհրապարակված ուսումնական նյութերը՝ պատճառաբանելով հեղինակային իրավունքներով[18]:

Արդարադատության նախարարությունից «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ին նաեւ տեղեկացրել են, որ Արցախի Հանրապետության քննիչները եւ դատախազները եւս ընդգրկվում են վերապատրաստման դասընթացներին: Մանրամասներ, սակայն, չեն ներկայացվել[19]:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ. ՀՐԱՄԱՆԱՏԱՐՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ըստ ՀՀ պաշտպանության նախարարությունից ստացված տեղեկությունների՝ 2020թ. հունվար-օգոստոս ամիսներին նախարարությունում դիտարկվել են կյանքի իրավունքի թեմայով վերապատրաստումների ուսումնական ծրագրերի մշակման ձեւաչափը եւ մասնագետների շրջանակը[20]: Ըստ ՄԻՊ ռազմավարության 2020-2022թթ. ԳԾ-ի 2020թ. առաջին կիսամյակային հաշվետվության՝ 2020թ. հուլիսի 20-ի դրությամբ քննարկվել է նաեւ վերապատրաստման դասընթացի ձեւաչափը[21]:

---

14. «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենք, հոդված 28 (4)
15. ՀՀ արդարադատության նախարարության 2020թ. հոկտեմբերի 14-ի գրություն Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող դասընթացների վերաբերյալ; «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենք, հոդված 21(8); «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենք, հոդված 28(4), հոդված 14 (1)(3)
16. ՀՀ արդարադատության նախարարության 2020թ. հոկտեմբերի 14-ի գրություն Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող դասընթացների վերաբերյալ; տե՛ս նաեւ՝ ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի ուսումնական հարցերի հանձնաժողով, N-00/20-Ու, Ե-6451, 11 սեպտեմբերի, 2020թ.
17. ՀՀ արդարադատության նախարարության 2020թ. հոկտեմբերի 14-ի գրություն Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող դասընթացների վերաբերյալ
18. նույն տեղում
19. ՀՀ արդարադատության նախարարության 2020թ. հոկտեմբերի 14-ի գրություն Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող դասընթացների վերաբերյալ
20. ՊՆ/510-ԳՔ/1575-20, 15 մայիսի, 2020թ.; ՊՆ գրություն, 25 օգոստոսի, 2020 թ.
21. Կիսամյակային հաշվետվություն, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրով՝ 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ, 20 հուլիսի, 2020 թ., էջ 18

2020թ. մայիսի 23-ին ընդունվել է պաշտպանության նախարարի հրաման, որով սահմանվել են պատասխանատու ստորաբաժանումները եւ ստորաբաժանումների կողմից իրականացվելիք միջոցառումների պլան-ժամանակացույցը[22]: Զեկույցի հրապարակման պահին «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ին հասանելի չէ այդ պլան-ժամանակացույցը կամ տեղեկություններ դրա բաց կամ փակ լինելու մասին:

Ըստ պաշտպանական գերատեսչությունից ստացված տվյալների՝ հրամանատարների վերապատրաստմանն ուղղված դասընթացների կազմակերպմանն ու իրականացմանը մասնակցում է նաեւ Երեւանում Եվրոպայի խորհրդի գրասենյակը: 2020թ. օգոստոսի դրությամբ Եվրոպայի խորհրդի գրասենյակի եւ ՀՀ ՊՆ համագործակցության շրջանակում պայմանավորվածություն է ձեռք բերվել վերապատրաստման նյութերի մշակման եւ դասընթացների կազմակերպման ընթացքում ներգրավել նաեւ միջազգային փորձագետների[23]:

2020-2022թթ. ԳԾ-ով ՄԻՊ-ը չի նշվում որպես հրամանատարների վերապատրաստման գործում համակատարող մարմին, սակայն, ինչպես տեղեկանում ենք նրա գրասենյակից, ՄԻՊ աշխատակազմը Եվրոպայի խորհրդի հետ համագործակցությամբ մասնակցում է **«Մարդու իրավունքները զինված ուժերում»** HELP առցանց դասընթացի մշակման աշխատանքներին, որը նախատեսում է ոչ միայն զինծառայողների, այլեւ սպայական կազմի ներկայացուցիչների վերապատրաստում[24]: Զեկույցի հրապարակման պահին «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ին հայտնի չէ HELP ծրագիրը բխում է ՄԻՊ ռազմավարության 2020-2022թթ. ԳԾ-ից, թե՞ ոչ:

2020թ. օգոստոսի դրությամբ ՄԻԵԴ-ում ՀՀ ներկայացուցչի գրասենյակը ներգրավված չի եղել հրամանատարների վերապատրաստումների գործողության կատարման մեջ[25], սակայն, ըստ ՄԻԵԴ-ում ՀՀ ներկայացուցչի գրասենյակի կողմից տրամադրված տեղեկատվության, գրասենյակը պաշտպանության նախարարության հետ նախատեսում է նախաձեռնել բանակցային գործընթաց ՀՀ զինված ուժերում կյանքի իրավունքի թեմայով դասընթացի մոդուլներ մշակելու եւ վերապատրաստումներ իրականացնելու ուղղությամբ[26]:

Հրամանատարների վերապատրաստման համար օգտագործվող ուսումնական նյութերը «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ին տրամադրելու հետ կապված՝ ՊՆ-ից նշել են, որ այդ հարցին կանդրադառնան վերապատրաստումների ծրագրի վերջնական տարբերակի հաստատումից հետո[27]:

Պաշտպանության նախարարությունը տեղեկություններ չի տրամադրել վերապատրաստվող հրամանատարների՝ կոնկրետ օղակներին պատկանելության եւ ուսումնական նյութերի հրապարակային կամ փակ լինելու վերաբերյալ: Ինչ վերաբերում է գնահատմանն ու հավաստագրերի տրամադրմանը, ապա ՊՆ-ն

---

22. Կիսամյակային հաշվետվություն, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրով՝ 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ, 20 հուլիսի, 2020 թ., էջ 18
23. ՊՆ/510ԳՔ/2707-2020, 28 օգոստոսի, 2020թ.
24. ՄԻՊ, 01/13.7/4678-20, 28 սեպտեմբերի, 2020թ.
25. ՄԻԵԴ-ում ՀՀ ներկայացուցչի գրասենյակից գրություն, 26 օգոստոսի, 2020թ.
26. ՄԻԵԴ-ում ՀՀ ներկայացուցչի գրասենյակից գրություն, 26 օոգոստոսի 2020թ.
27. ՊՆ գրություն, 25 օգոստոսի, 2020թ.

նշել է, որ վերապատրաստված անձնակազմի գնահատում եւ հավաստագրեր ՄԻՊ ռազմավարությամբ նախատեսված չեն[28]:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ. Վ. ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՍՊԱՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ (ՍՈԲԿ) ԵՒ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ (ՀՇՖ) ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ «ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ» ԱՌԱՐԿԱՅԻ ՆԵՐԱՌՈՒՄ

Ըստ պաշտպանության նախարարության տրամադրած տեղեկության՝ 2020թ. հունվար-օգոստոս ամիսներին ՀՀ պաշտպանության նախարարության եւ Եվրոպայի խորհրդի երեւանյան գրասենյակի գործակցությամբ ԵԽ փորձագետները մշակել են «Մարդու իրավունքները զինված ուժերում» առարկայի ծրագիրը[29]:

Պլանավորվել է նաեւ 2020-2021 ուստարվա ընթացքում ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական եւ Ա. Խամփերյանցի անվան ռազմական ավիացիոն համալսարաններում իրականացվելիք սպաների որակավորման բարձրացման դասընթացների ծրագրում ներառել կյանքի իրավունքի թեմայով դասախոսություններ[30]:

2020թ. օգոստոս-դեկտեմբեր ամիսներին ՊՆ ռազմական բարձրագույն հաստատություններում որակավորման բարձրացման դասընթացներին ընդգրկվել է շուրջ 130 սպա: Վերապատրաստման դասընթացներում ներառվել են նաև «կյանքի իրավունք» թեմայով մոդուլներ[31]:

Ըստ ՊՆ գրության՝ ուսումնական ծրագրերի եւ նյութերի մշակման համար օգտագործվել են հայերեն ձեռնարկներ մարդու իրավունքների եւ զինված ուժերում մարդու իրավունքների, դրանց դասավանդման մասին, ռուսերեն ՄԻԵԿ մեկնաբանություն, մարդու իրավունքների մասին ձեռնարկներ եւ ՄԻԵԿ հոդվածների ուղեցույցներ, որոնք հեղինակել են տեղացի եւ միջազգային մասնագետներ[32]:

Մասնավորապես, օգտագործվել է հետեւյալ գրականությունը. **«Զինված ուժերի անձնակազմի մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների մասին»** ձեռնարկ (ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների եւ մարդու իրավունքների գրասենյակ, «Ասողիկ» հրատարակչություն, 2008թ.), **«Զինված ուժերի անձնակազմի մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների վերաբերյալ դասընթացի կազմակերպման եւ անցկացման»** ուսումնական ձեռնարկ, հեղ.՝ Վ. Ավետիսյան, Ս. Սահակյան, Կ. Բաղալյան (ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների եւ մարդու իրավունքների գրասենյակ, «Ասողիկ», 2008թ.), **«Զինված ուժերում մարդու իրավունքների վերաբերյալ Եվրոպայի խորհրդի փաստաթղթեր»** (Երեւան, «Անտարես» հրատարակչություն, 2017թ.), **«Մարդու իրավունքների դասընթաց»** ուսումնական ձեռնարկ, Վ. Կառաստիլյով (2012թ.), **Комментарий к Конвенции о**

28. ՊՆ/510ԳՔ/2707-2020, 28 օգոստոսի, 2020թ.
29.ՊՆ/510-ԳՔ/2919-20, 17 սեպտեմբերի, 2020թ.
30. ՊՆ գրություն, 25 օգոստոսի, 2020թ.
31. ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվություն, էջ 1
32. ՊՆ/510-ԳՔ/2919-20, 17 սեպտեմբերի, 2020թ.

защите прав человека и основных свобод и практике её применения, Туманов В. А., Энтин Л. М. (общ. ред.) М. Норма 2002г., Курс **Права человека**: учебное пособие/ (сост. В. Карастелев). – М.: Московская Хельсинская группа, 2012г., **Руководство по статье 6 Конвенции: Право на справедливое судебное разбирательство (уголовно-правовой аспект)**. Совет Европы/ Европейский суд по правам человека, 2014г., **Введение в вопросы международной защиты прав человека**, учебное пособие. Под ред. Р. Хански и М. Сукси, Институт прав человека. Университет «Або Академии», Турку/Або 1997г.[33]

Նախատեսվել է հրամանատարա-շտաբային ֆակուլտետի, Սպաների որակավորման բարձրացման եւ ՌՄՈՒ կենտրոններում դասընթացին հատկացնել նախնական 10 ժամ[34]:

2020թ. սեպտեմբերի 17-ի դրությամբ իրականացվել է Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանի բակալավրիատում դասավանդվող առարկայի եւ ԵԽ փորձագետների մշակած ծրագրերի համադրում[35]: Որեւէ տեղեկություն չի տրամադրվել այն մասին, թե ինչով է տարբերվում նոր ծրագիրը նախկինում դասավանդվող **«Մարդու իրավունքները զինված ուժերում»** առարկայից:

ՊՆ-ից հայտնում են, որ 2020թ. սեպտեմբերի 17-ի դրությամբ Երեւանում ԵԽ գրասենյակի եւ ՀՀ պաշտպանության նախարարության համագործակցության շրջանակներում պայմանավորվածություն է ձեռք բերվել վերապատրաստել առարկան դասավանդող մասնագետներին[36]:

Ուսումնական ծրագիրը չի տրամադրվել դրանց վերջնական հաստատված չլինելու պատճառով[37]:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ. ՌԱԶՄԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ըստ ՄԻՊ ռազմավարության եւ ԳԾ առաջին կիսամյակային հաշվետվության՝ 2020թ. հուլիսի 20-ի դրությամբ սահմանված է եղել այս գործողությամբ իրականացվելիք միջոցառումների պլան-ժամանակացույցը, քննարկվել է վերապատրաստման դասընթացի ձեւաչափը[38], զեկույցի հրապարակման պահին, սակայն, պլան-ժամանակացույցը հասանելի չէ «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ին:

Երեւանում Եվրոպայի խորհրդի գրասենյակը եւս ներգրավված է եղել վերապատրաստումների նյութերի մշակման եւ դասընթացների կազմակերպման ընթացքում[39]: Բացի այդ՝ Երեւանում ԵԽ գրասենյակի եւ ՀՀ ՊՆ համագործակցության շրջանակներում պայմանավորվածություն է ձեռք բերվել վերապատրաստման

33. ՊՆ/510-ԳՔ/2919-20, 17 սեպտեմբերի, 2020թ.
34. ՊՆ/510-ԳՔ/2919-20, 17 սեպտեմբերի, 2020թ.
35. նույն տեղում
36. նույն տեղում
37. նույն տեղում
38. Կիսամյակային հաշվետվություն, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրով 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ, 20 հուլիսի, 2020 թ., էջ 18
39. ՊՆ/510ԳՔ/2707-2020, 28 օգոստոսի, 2020թ.

նյութերի մշակման եւ դասընթացների կազմակերպման ընթացքում ներգրավել նաեւ միջազգային փորձագետների[40]:

Չնայած այն փաստին, որ ՀՀ ոստիկանության ակադեմիան որպես համակատարող մարմին ներառված է գործողությունում, ռազմական ոստիկանների վերապատրաստումների վերաբերյալ «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ի կողմից ուղղված գրությանն ի պատասխան հայտնել են, որ ՀՀ ոստիկանության կրթահամալիրում 2020թ. օգոստոսի 18-ի դրությամբ կյանքի իրավունքի թեմայով միջազգային չափանիշներին համապատասխան, այդ թվում՝ ԶՈՒ հրամանատարների, ռազմական ոստիկանների, քննիչների, դատախազների, դատավորների, փաստաբանների վերապատրաստումներ (դասընթացներ) չեն իրականացվել, քանի որ ՀՀ կառավարության 2019թ. դեկտեմբերի 26-ի թիվ 1978-Լ որոշմամբ հաստատված Մարդու իրավունքների ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրի առաջին կետով պատասխանատու մարմինը ՀՀ պաշտպանության նախարարությունն է, իսկ համակատարողը՝ ՄԻԵԴ-ում ՀՀ ներկայացուցչի գրասենյակը[41]:

ՊՆ-ն տեղեկություններ չի տրամադրել ուսումնական նյութերի եւ դրանց հեղինակների վերաբերյալ՝ նշելով, որ ուսումնական նյութերի տրամադրման հարցին կանդրադառնա վերապատրաստումների ծրագրի վերջնական տարբերակի հաստատումից հետո[42]:

Ըստ ՊՆ գրության՝ կյանքի իրավունքի թեմայով դասընթացներին նախատեսվել է ընդգրկել ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության բաժինների եւ բաժանմունքների ծառայողներին, որոնց մասնակցության շրջանակը կորոշվի ծառայողական պարտականություններից ելնելով[43]:

ՊՆ-ն նաեւ տեղեկացրել է, որ վերապատրաստված անձնակազմի գնահատում եւ մասնակիցների համար հավաստագրեր նախատեսված չեն[44]:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ. ՔՆՆԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀՀ քննչական կոմիտեից «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ին տեղեկացրել են, որ 2020թ. օգոստոսի 28-ի դրությամբ ՀՀ քննչական կոմիտեն Արդարադատության ակադեմիայի հետ քննարկում է կյանքի իրավունքի թեմայով քննիչների վերապատրաստումների ձեւաչափերը[45]:

Ըստ արդարադատության նախարարության տրամադրած տեղեկության և ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվության՝ ՀՀ քննչական կոմիտեի ծառայողների (քննիչների)՝ ՀՀ Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող դասընթացների 2020թ. տարեկան վերապատրաստման ուսուցման ծրագրում

40. ՊՆ/510ԳՔ/2707-2020, 28 օգոստոսի, 2020թ.
41. Ոստիկանության կրթահամալիր, N 9/10-2097, 25 օգոստոսի, 2020թ.
42. ՊՆ/510ԳՔ/2707-2020, 28 օգոստոսի, 2020թ.
43. ՊՆ/510ԳՔ/2707-2020, 28 օգոստոսի, 2020թ.
44. ՊՆ/510ԳՔ/2707-2020, 28 օգոստոսի, 2020թ.
45. ՔԿ, 12/12/47261-20, 28 օգոստոսի, 2020թ.

ընդգրկվել է **«Քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր»** վերտառությամբ դասընթացը[46]: Վերջինս ներառում է քրեական իրավունքի եւ դատավարության ոլորտում Եվրոպական կոնվենցիայով եւ միջազգային այլ պայմանագրերով երաշխավորված իրավունքների (այդ թվում՝ կյանքի իրավունքի) պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ արդի նախադեպային իրավունքը եւ ՀՀ նկատմամբ դրա կիրառման հիմնահարցերը, ինչպես նաեւ դրանց վերաբերյալ ՄԻԵԴ իրավական դիրքորոշումները եւ քննչական կոմիտեում դրանց կիրառման հմտությունները: 2020թ. հուլիս-դեկտեմբեր ամիսներին վերապատրաստվել է 5 քննիչ՝ 5,1%-ը[47]:

ՀՀ քննչական կոմիտեի ծառայողների (քննիչների) 2020թ. տարեկան վերապատրաստման ուսուցման ծրագրում ընդգրկվել է նաեւ **«Զինվորական ենթակայության կարգի եւ զինծառայողների կանոնագրքային փոխհարաբերությունների դեմ ուղղված հանցագործությունների քրեաիրավական խնդիրները»** վերտառությամբ դասընթաց: Այն ներառում է ՀՀ գործող քրեական օրենսգրքի եւ ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծի՝ զինվորական հանցագործություններ նախատեսող հանցակազմերի մանրամասն ներկայացումը, զինվորական կարգապահության խախտումների եւ զինվորական հանցագործությունների տարանջատման հարցերը, մասնավորապես՝ նույն արարքի համար կրկին պատասխանատվության չենթարկվելու սկզբունքի տեսանկյունից, զինվորական հանցագործությունների ընդհանուր եւ որակյալ հանցակազմերի որակման առանձնահատկությունները: Այս մասով նախատեսված է եղել 2020թ. հուլիս-դեկտեմբեր ամիսներին վերապատրաստել 11 քննիչների՝ 11.3%-ը[48]:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ. ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ըստ դատախազության տրամադրած տեղեկության՝ 2020թ. մարտի 12-ին զինվորական դատախազության 15 ներկայացուցիչ, այսինքն՝ զինվորական դատախազների 10,5%-ը, մասնակցել է ԵԽ երեւանյան գրասենյակի եւ Արդարադատության ակադեմիայի համատեղ կազմակերպած աշխատաժողովին՝ նվիրված զինված ուժերում նաեւ մահվան դեպքերի արդյունավետ քննությանը[49]: Եվրոպայի խորհրդի պաշտոնական կայքից տեղեկանում ենք, որ մասնակցել է 14 դատախազ: Աշխատաժողովն անցկացրել (վարել) են ԵԽ միջազգային խորհրդատուներ Ու. Ջորդաշը, որը ներկայացրել է արդյունավետ քննության հարցերը, եւ Է. Դուբանը՝ ներկայացրել է կին զինծառայողներին ներառող գործերի քննության առանձնահատկությունները[50]:

Ըստ արդարադատության նախարարության տրամադրած տեղեկության՝ ՀՀ Արդարադատության ակադեմիայի կողմից դատախազների համար իրականացվող

46. ՀՀ արդարադատության նախարարության 2020թ. հոկտեմբերի 14-ի գրություն Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող դասընթացների վերաբերյալ
47. ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվություն, էջ 2
48. ՀՀ արդարադատության նախարարության 2020թ. հոկտեմբերի 14-ի գրություն Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող դասընթացների վերաբերյալ
49. Դատախազություն, 44/6/19412-2020, 28 օգոստոսի, 2020թ.
50. ԵԽ երեւանյան գրասենյակ, Հայաստանի դատավորները եւ դատախազները մասնակցեցին զինված ուժերում խոշտանգումների, վատ վերաբերմունքի եւ մահվան դեպքերի արդյունավետ քննությանը նվիրված դասընթացին, 12 մարտի, 2020թ.

2020թ. տարեկան վերապատրաստման ուսուցման ծրագրում ներառվել է **«ՀՀ քրեական իրավունքի արդի հարցեր»** դասընթացը, որի անբաժան մասն է կազմում նաեւ կյանքի իրավունքին վերաբերող միջազգային եւ ներպետական դատական պրակտիկայի, իրավական ակտերի ուսումնասիրությունը[51]: Որպես առանձին թեմա, նախատեսվել են կյանքի դեմ ուղղված հանցագործություններին առնչվող հարցերը: Թեմայի շրջանակներում ուսումնասիրվում են կյանքի՝ որպես քրեաիրավական պաշտպանության օբյեկտի բնութագիրը, անձի կյանքի քրեաիրավական պաշտպանության միջոցները, կյանքի դեմ ուղղված հանցագործությունների մեկնաբանությունները, որակման առանձնահատկությունները և այլն[52]:

«ՀՀ քրեական դատավարության արդի հարցեր» վերտառությամբ դասընթացի առարկայական ծրագրում նախատեսվել են կյանքի իրավունքի վերաբերյալ գործերի քննության միջազգային չափորոշիչների, անձի կյանքի դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ հաղորդումների քննարկման առանձնահատկությունների և այս հանցատեսակի վերաբերյալ գործերով վարույթ նախաձեռնելու հիմնախնդիրների վերաբերյալ առանձին հարցադրումներ[53]: 2020թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին վերապատրաստվել է 32 դատախազ՝ 47%-ը[54]: **«Զինվորական հանցագործությունների որակման եւ քննության մեթոդիկայի առանձնահատկությունները»** դասընթացը ներառվել է տարեկան վերապատրաստման ծրագրում՝ նախատեսվելով վերապատրաստել 24 դատախազ՝ 35,2%-ը, 2020թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին, ինչպես նաեւ **«ՀՀ քրեական դատավարության արդի հարցեր»** դասընթացը՝ վերապատրաստում նախատեսելով 9 դատախազի համար՝ 13,2%-ը, նույնպես 2020թ. սեպտեմբերից դեկտեմբեր ընկած ժամանակահատվածում[55]:

«Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ն նաեւ դիմել է Գլխավոր դատախազություն՝ մանրամասներ ստանալու զինվորական դատախազների վերապատրաստումների համար օգտագործվող ուսումնական նյութերի մասին: Դատախազությունից նշել են, որ ուսումնական նյութերը գտնվում են հետագա մշակման եւ (կամ) վերամշակման փուլում, ուստի հրապարակման կամ տրամադրման ենթակա չեն[56]:

Զեկույցի հրապարակման պահին մշտադիտարկող խմբին պարզ չէ, թե ինչու են 2020թ. օգոստոսի դրությամբ վերապատրաստման նյութերը գտնվում մշակման կամ վերամշակման ընթացքում, եթե Արդարադատության ակադեմիան տվյալ տարվա ուսումնական ծրագրերը որոշած պետք է լիներ դեռեւս նախորդ տարի: Ո՞րն է եղել մշակման կամ վերամշակման անհրաժեշտությունը: Բացի այդ, եթե դասընթացը վերամշակման փուլում է այժմ, նշանակում է, որ առկա է եղել դրա մեկ այլ տարբերակ, որը եւս չի տրամադրվել «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ին:

---

51. ՀՀ արդարադատության նախարարության 2020թ. հոկտեմբերի 14-ի գրություն Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող դասընթացների վերաբերյալ
52. ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվություն, էջ 2-3
53. նույն տեղում
54. նույն տեղում
55. ՀՀ արդարադատության նախարարության 2020թ. հոկտեմբերի 14-ի գրություն Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող դասընթացների վերաբերյալ
56. Դատախազություն, 44/6/19412-2020, 28 օգոստոսի, 2020թ.

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ. ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ըստ ՄԻՊ ռազմավարության եւ ԳԾ 2020թ. կիսամյակային ու տարեկան հաշվետվությունների՝ ՀՀ արդարադատության ակադեմիայի վերապատրաստման ուսուցման 2020թ. ծրագրում ընդգրկվել է **«ՀՀ քրեական իրավունքի արդի հարցեր»** վերտառությամբ դասընթացը, որի առարկայական կուրսում, որպես առանձին թեմա, նախատեսվել են կյանքի դեմ ուղղված հանցագործություններին առնչվող հարցերը: Թեմայի շրջանակներում ուսումնասիրվում են կյանքի՝ որպես քրեաիրավական պաշտպանության օբյեկտի բնութագիրը, անձի կյանքի քրեաիրավական պաշտպանության միջոցները, կյանքի դեմ ուղղված հանցագործությունների մեկնաբանությունները, որակման առանձնահատկությունները եւ այլն: Սույն դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են նաեւ կյանքի իրավունքի վերաբերյալ միջազգային եւ ներպետական դատական պրակտիկան եւ իրավական այլ ակտերը[57]: 2020թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին վերապատրաստվել է 12 դատավոր՝ 15,38%-ը[58]:

Վերապատրաստման ուսուցման ծրագրում ընդգրկվել է նաեւ **«Քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր»** վերտառությամբ դասընթացը, որի ծրագրում, ի թիվս այլնի, ներառվել են կյանքի իրավունքի պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ արդի նախադեպային իրավունքը եւ ՀՀ նկատմամբ դրա կիրառման հիմնահարցերը[59]: Այս դասընթացի շրջանակներում նախատեսված է եղել սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին վերապատրաստել 42 դատավոր՝ 53,84%-ը[60]:

«ՀՀ սահմանադրական իրավունքի գիտության եւ սահմանադրական արդարադատության արդի միտումները» դասընթացի շրջանակներում նախատեսվել են կյանքի իրավունքի, այդ իրավունքի սահմանափակումների սահմանադրական եւ կոնվենցիոն հիմքերի վերաբերյալ առանձին թեմաներ: Վերապատրաստման իրականացումը 2020թ. ապրիլ-մայիս ամիսներին եղել է անհնար[61]:

«ՀՀ քրեական դատավարության արդի հարցեր» վերտառությամբ դասընթացի առարկայական ծրագրում նախատեսվել են կյանքի իրավունքի վերաբերյալ գործերի քննության միջազգային չափորոշիչների, անձի կյանքի դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ հաղորդումների քննարկման

57. Կիսամյակային հաշվետվություն, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրով 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ, 20 հուլիսի, 2020 թ., էջ 20-21; ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվություն, էջ 3
58. ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվություն, էջ 3
59. Կիսամյակային հաշվետվություն, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրով 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ, 20 հուլիսի, 2020 թ., էջ 20-21; ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվություն, էջ 4
60. ՀՀ արդարադատության նախարարության 2020թ. հոկտեմբերի 14-ի գրություն Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող դասընթացների վերաբերյալ
61. Կիսամյակային հաշվետվություն, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրով 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ, 20 հուլիսի, 2020 թ., էջ 35; ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվություն, էջ 41

առանձնահատկությունների եւ այս հանցատեսակի վերաբերյալ գործերով վարույթ նախաձեռնելու հիմնախնդիրների վերաբերյալ առանձին հարցադրումներ[62]: Այս դասընթացի շրջանակներում նախատեսված է եղել սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին վերապատրաստել 24 դատավոր՝ 30.76%-ը[63]:

Ըստ դատավորների ընդհանուր ժողովի ուսումնական հարցերի հանձնաժողովի գրության՝ 2020թ. դատավորներն ամենամյա պարտադիր վերապատրաստում են անցնում, որը ներառում է այնպիսի թեմաներ, ինչպիսիք են ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասով նախատեսված հանցավոր արարքների, մասնավորապես՝ կյանքի իրավունքի եւ առողջության դեմ ուղղված հանցագործությունների ճշգրիտ որակման հիմնահարցերը, հարակից հանցակազմերը միմյանցից սահմանազատելու հիմնախնդիրները եւ դրանց լուծման ոլորտում օրենսդրական եւ իրավակիրառ փորձը՝ **«ՀՀ քրեական իրավունքի արդի հարցերը»** թեմայի շրջանակներում[64]:

Եվրոպայի խորհրդի կայքից տեղեկանում ենք, որ 2020թ. ապրիլի 8-ին քրեաիրավական մասնագիտացմամբ 10 դատավոր մասնակցել է **«Քրեական գործերով կայացվող դատական ակտերի պատճառաբանումը»** թեմայով HELP հեռավար ուսուցման ութշաբաթյա դասընթացին: Թեման առնչվել է նաեւ ՄԻԵԿ-ի՝ կյանքի իրավունքին նվիրված 2-րդ հոդվածի համատեքստում քրեական գործերով ներպետական դատարանների կողմից կայացվող դատական ակտերի պատճառաբանմանը: Նախատեսված է եղել դասընթացը հաջողությամբ ավարտած բոլոր մասնակիցներին շնորհել ավարտական վկայագրեր Եվրոպայի խորհրդի եւ Արդարադատության ակադեմիայի կողմից[65]: **«Քրեական գործերով կայացվող դատական ակտերի պատճառաբանումը»** թեմայով HELP հեռավար ուսուցման երկրորդ դասընթացը տեղի է ունեցել 2020թ. մայիսի 12-ին, որտեղ եւս քննարկվել է նաեւ ՄԻԵԿ կյանքի իրավունքին նվիրված քրեական գործերով դատական ակտերի պատճառաբանումը: Այս անգամ մասնակցել է քրեաիրավական մասնագիտացմամբ 17 դատավոր: Դասընթացը տեւել է ութ շաբաթ եւ հաջողությամբ ավարտած մասնակիցներին այս անգամ եւս շնորհվել են հավաստագրեր[66]: Ձեկույցի հրապարակման պահին «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ին հայտնի չէ՝ արդյո՞ք նշված HELP հեռավար ուսուցման դասընթացները բխում են ՄԻՊ ռազմավարությունից եւ 2020-2022թթ. ԳԾ-ից: Տեղեկություններ հայտնի չեն նաեւ այն մասին, թե որքանով են այս դասընթացներն անդրադարձել կամ անդրադարձե՞լ են, արդյոք, զինված ուժերում կյանքի իրավունքին վերաբերող գործերի շրջանակներում պատճառաբանման նրբություններին:

---

62. Կիսամյակային հաշվետվություն, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրով 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ, 20 հուլիսի, 2020 թ., էջ 20-21; ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվություն, էջ 4
63. ՀՀ արդարադատության նախարարության 2020թ. հոկտեմբերի 14-ի գրություն Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող դասընթացների վերաբերյալ
64. Դատավորների ընդհանուր ժողովի ուսումնական հարցերի հանձնաժողով, N-00/20-Ու, Ե-6451, 11 սեպտեմբերի 2020թ.; տես նաեւ՝ Ուսումնական ծրագիր. դատավորների եւ դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց տարեկան վերապատրաստման, Հավելված 1, Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի 2019թ. նոյեմբերի 29-ի թիվ ԿԽ-010/19/1 որոշման
65. ԵԽ երեւանյան գրասենյակ, Դատավորներն ու դատական ծառայողները բարեհաջող ավարտեցին HELP նոր հեռավար դասընթացը, 8 ապրիլի, 2020թ.
66. ԵԽ երեւանյան գրասենյակ, Դատավորների երկրորդ խումբը մասնակցում է «Քրեական գործերով կայացվող դատական ակտերի պատճառաբանումը» թեմայով HELP հեռավար ուսուցման դասընթացին, 12 մայիսի, 2020թ.

Գործողություն 2

Բարձրացնել կյանքի իրավունքի վերաբերյալ զորակոչիկների, զինծառայողների իրազեկվածությունը

ՄԻՊ 2020-2022թթ. ԳԾ երկրորդ գործողությամբ նախատեսվում է բարձրացնել կյանքի իրավունքի վերաբերյալ զորակոչիկների, զինծառայողների իրազեկվածությունը: 2020-2022թթ. ընթացքում ակնկալվում է.

- զորամասերի եւ զինկոմիսարիատների 60%-ում փակցնել մարդու իրավունքների (կյանքի իրավունք, խոշտանգումների արգելք) վերաբերյալ պաստառներ,
- զորամասերում եւ զինկոմիսարիատներում իրականացնել կյանքի իրավունքի վերաբերյալ թվով 15 իրազեկման ակցիա,
- մշակել եւ զորամասերում ու զինկոմիսարիատներում տարածել մարդու իրավունքների վերաբերյալ առնվազն 3 տեղեկատվական նյութ, այդ թվում՝ իրավունքների պաշտպանության միջոցների մասին,
- մշակել եւ զանգվածային լրատվության միջոցներով տարածել զինված ուժերում մարդու իրավունքների վերաբերյալ առնվազն 3 տեսաձայնագրություն:

Ակնկալվում է, որ այս տեղեկատվական միջոցառումների իրականացմամբ եւ կյանքի իրավունքի վերաբերյալ զորակոչիկների ու զինծառայողների իրազեկվածության բարձրացմամբ կնվազեն ԶՈՒ-ում մահվան դեպքերը:

Գործողության կատարման պատասխանատու մարմինը ՀՀ պաշտպանության նախարարությունն է, համակատարող մարմինները՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը՝ համաձայնությամբ, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը՝ համաձայնությամբ, ՄԻԵԴ-ում ՀՀ ներկայացուցչի գրասենյակը:

Ֆինանսավորումը կատարվում է պետական բյուջեից եւ օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Գործողության նկարագրում առկա չեն բանակում մահվան դեպքերի թվերի նվազեցման վրա զինկոմիսարիատներում ու զորամասերում իրազեկման ակցիաների, տեղեկատվական նյութերի եւ ԶԼՄ-ներով դրանց վերաբերյալ տեսաձայնագրությունների տարածման միջոցառումների ազդեցությունը գնահատելու չափորոշիչները:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ. ՊԱՍՏԱՌՆԵՐ

Ըստ 2020թ. տարեկան հաշվետվության՝ Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի և ՀՀ ՊՆ գործակցությամբ մշակվել և տպագրվել են **«կյանքի իրավունք»** և **«խոշտանգումների արգելք»** թեմաներով տեղեկատվական պաստառներ, որոնք

փակցվել են բոլոր զորամասերում, զինկոմիսարիատներում և ՌՈ տարածքային ստորաբաժանումներում[67]: 2020թ. մայիս ամսվա դրությամբ՝ Եվրոպայի խորհրդի երեւանյան գրասենյակի կայքում, սակայն, նշվում է պաստառները միայն զորամասերին եւ զինկոմիսարիատներին տրամադրելու մասին[68]:

Մարդու իրավունքների վերաբերյալ պաստառների առկայության դիտարկման նպատակով «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ի մշտադիտարկող խումբը 2020թ. օգոստոս ամսին այցելել է զինկոմիսարիատներ Երեւանում եւ բոլոր մարզերում: Կյանքի իրավունքին նվիրված պաստառները փակցված են եղել դիտարկված 39 զինկոմիսարիատներից կամ տարածքային ստորաբաժանումներից 35-ում: Արարատի, Մասիսի եւ Ստեփանավանի բաժանմունքներում բացակայել են կյանքի իրավունքի վերաբերյալ պաստառները: Խոշտանգումների եւ վատ վերաբերմունքի այլ ձեւերի արգելքին նվիրված պաստառը փակցված է եղել դիտարկված 39 զինկոմիսարիատներից կամ տարածքային ստորաբաժանումներից 30-ում: Աբովյանի, Ապարանի, Թալինի, Ճամբարակի, Նաիրիի, Ախուրյանի, Աշոցքի բաժանմունքներում բացակայել են խոշտանգումների եւ վատ վերաբերմունքի այլ ձեւերի վերաբերյալ պաստառները: Միայն մեկ դեպքում՝ Երեւանի երկրորդ զինկոմիսարիատում, մշտադիտարկողին չեն թույլատրել մուտք գործել զինկոմիսարիատի տարածք:

Կյանքի իրավունքի վերաբերյալ զորակոչիկների եւ զինծառայողների իրազեկվածության բարձրացման գործողության իրականացմանն աջակցում է Եվրոպայի խորհրդի «Մարդու իրավունքները եւ կանայք Հայաստանի զինված ուժերում» ծրագիրը[69]:

Ինչ վերաբերում է Արցախի զորամասերում կյանքի իրավունքի եւ խոշտանգումների արգելքի վերաբերյալ պաստառների փակցմանը, ՊՆ-ն նշել է, որ դրանք իր նախաձեռնությամբ նաեւ առաքվել են Արցախի ՊԲ զորամասեր: Հաշվի է առնվել այն հանգամանքը, որ պաստառները տպագրվել են անհրաժեշտ թվաքանակից ավել եւ պարունակում են այնպիսի տեղեկատվություն, որը վերաբերում է մարդու իրավունքներին, մասնավորապես՝ կյանքի իրավունքին, խոշտանգումների արգելքին, կյանքի իրավունքի պաշտպանության ոլորտում պետությունների պարտավորություններին[70]:

Պաստառների մշակման գործում ՄԻՊ եւ ՄԻԵԴ-ում ՀՀ ներկայացուցչի գրասենյակի ներգրավվածության մասին տեղեկություններ «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ին հայտնի չեն:

Ըստ ՊՆ գրության՝ պաստառների մշակման աղբյուրներ են հանդիսացել 1948թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, 1950թ. Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան, 1966թ.

---

67. ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվություն, էջ 6
68. ԵԽ երեւանյան գրասենյակ, Հայաստանի զորամասերին եւ զինկոմիսարիատների կտրամադրվեն զորակոչիկներին եւ ծառայողների համար մշակված կյանքի իրավունքի վերաբերյալ պաստառի 1000 օրինակ, 29 մայիսի, 2020թ.
69. ԵԽ երեւանյան գրասենյակ, Հայաստանի զորամասերին եւ զինկոմիսարիատների կտրամադրվեն զորակոչիկներին եւ ծառայողների համար մշակված կյանքի իրավունքի վերաբերյալ պաստառի 1000 օրինակ, 29 մայիսի, 2020թ.
70. ՊՆ/510-ԳՔ/2709-2020, 28 օգոստոսի, 2020թ.

Քաղաքական եւ քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը, 1984թ. Խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ կոնվենցիան, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը եւ այլ իրավական ակտեր[71]:

ՊԱՍՏԱՌՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Կյանքի իրավունքին նվիրված պաստառի նմուշը հասանելի է առցանց[72]: Այն պարունակում է տեղեկատվություն յուրաքանչյուրի կյանքի իրավունքի, դրա պաշտպանության ոլորտում պետության պարտավորությունների մասին, այդ թվում՝ նաեւ զորակոչի եւ զինվորական ծառայության ժամանակ: Պաստառում ներառված են այն մարմինների տվյալները, որոնց զինծառայողը կարող է դիմել իրավունքի խախտման դեպքում:

Խոշտանգումների եւ վատ վերաբերմունքի այլ ձեւերի արգելքի մասին պաստառը ներառում է տեղեկատվություն խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի սահմանումների, զինված ուժերի անձնակազմին խոշտանգումից եւ վատ վերաբերմունքի այլ ձեւերից զերծ պահելու պետության պարտականությունների վերաբերյալ: Պաստառում ներկայացվում են նաեւ այն մարմինների տվյալները, որոնց հետ կարելի է կապվել խոշտանգումներից եւ վատ վերաբերմունքի այլ ձեւերից զերծ մնալու իրավունքի խախտման դեպքում[73]:

ՊԱՍՏԱՌՆԵՐԻ ՏԵՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

«Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ի մշտադիտարկող խումբը 2020թ. օգոստոս ամսին իրականացրել է դիտարկումներ եւ զորակոչիների շրջանում հարցազրույցներ անցկացրել Երեւանի եւ բոլոր մարզերի զինկոմիսարիատներում ու տարածքային ստորաբաժանումներում: Խմբի նպատակն է եղել պարզել, արդյո՞ք զորակոչիկները տեսել են զինկոմիսարիատներում փակցված պաստառներ եւ, եթե այո, որքանո՞վ են դրանք օգտակար համարել:

Հարցված 196 քաղաքացուց 132-ն (67%) ասել է, որ զինկոմիսարիատում չի տեսել մարդու իրավունքների վերաբերյալ պաստառներ, իսկ 64-ը (33%) տեսել է:
(Տես՝ նկ. 1).

71. ՊՆ/510-ԳՔ/2709-2020, 28 օգոստոսի, 2020թ.
72. Տես՝ կյանքի իրավունքին նվիրված պաստառը այստեղ
73. ԵԽ երեւանյան գրասենյակ, Տպագրվել է Հայաստանի զորակոչիկների եւ զինծառայողների համար մշակված խոշտանգումների եւ վատ վերաբերմունքի այլ ձեւերի արգելքի մասին պաստառի հազար օրինակ, 22 հուլիսի, 2020թ.

ՆԿ.1. ԱՐԴՅՈ՞Ք ԶՈՐԱԿՈՉԻԿՆԵՐԸ ՏԵՍԵԼ ԵՆ ԶԻՆԿՈՄԻՍԱՐԻԱՏՆԵՐՈՒՄ ՓԱԿՑՎԱԾ ՊԱՍՏԱՌՆԵՐԸ: (N=196)



Պաստառները նկատած հարցվածների կեսը նշել է, որ չի կարդացել դրանք: Հարցված զորակոչիկների կեսը պաստառների գոյության մասին տեղեկանալուց հետո նաեւ հրաժարվել է գնալ եւ տեղում կարդալ դրանք: Պաստառներին ծանոթանալու պատրաստակամություն է հայտնել 17%-ը, ովքեր այնուհետեւ նշել են, որ սովորեցին, որ վերադասը կամ այլ զինծառայողներ չեն կարող իրենց կամ այլ զինծառայողների նկատմամբ բռնություն կիրառել, ինչպես նաեւ, որ զինծառայողները կարող են անվճար բժշկական օգնություն ստանալ: Ոմանք նշել են նաեւ, որ իմացան, թե ինչ մարմինների կարող են դիմել իրենց խախտված իրավունքների վերականգնման համար: Հարցվածների 9%-ը նշել է, որ բանակում պաստառները դժվար թե օգնեն իրենց:

Հետաքրքրական է, որ մշտադիտարկող խմբի հարցման արդյունքում պարզվել է, որ 196 զորակոչիկից 122-ը (մոտ 62%) գտնում է, որ միայն ինքը, կամ առաջին հերթին ինքն է պատասխանատու զինվորական ծառայության ընթացքում իր կյանքի եւ առողջության պաշտպանության համար: 60 հարցված (մոտ 30,5%) գտնում է, որ իր կյանքի եւ առողջության պաշտպանության համար պատասխանատու է կամ առաջին հերթին պատասխանատու է պետությունը:

Ծառայության ընթացքում ո՞վ է պատասխանատու քո կյանքի եւ առողջության պաշտպանության համար հարցին զորակոչիկները պատասխանել են հետեւյալ կերպ (Տե՛ս նկ. 2).

ՆԿ.2. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ Ո՞Վ Է ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՔՈ ԿՅԱՆՔԻ ԵՒ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ: (N=196)



- Ես - 105 հոգի (53.5%),
- Առաջին հերթին ես, հետո՝ նաեւ հրամանատարությունը - 17 հոգի (8.6%),
- Հրամանատարությունը, ՊՆ-ն, պետությունը - 57 հոգի (29%),
- Առաջին հերթին հրամանատարությունը, հետո՝ նաեւ ես - 3 հոգի (1.5%),
- Չգիտեմ - 7 հոգի (3.5%),
- Դժվարանում եմ պատասխանել - 4 հոգի (2%),
- Այլ - 3 հոգի (1.5%):

Տեղյակ եք, թե որ մարմիններին կարող եք դիմել զինվորական ծառայության ընթացքում ծառայակիցների կամ հրամանատարության կողմից Ձեր կամ Ձեր ընկերների իրավունքների խախտման դեպքում հարցին պատասխանել են հետեւյալ կերպ (Տես նկ. 3).

- Չգիտեմ - 80 հոգի (40,8%),
- Չեմ դիմի, քանի որ մեկ է չեն օգնի - 30 հոգի (15,3%),
- Հրամանատարությանը, վերադասին - 23 հոգի (11,7%),
- ՊՆ/Թեժ գիծ - 20 հոգի (10,2%),
- Ռազմական ոստիկանություն - 12 հոգի (6,1%),
- Որեւէ մարմնի դիմելու կարիք չի լինի - 9 հոգի (4,5%),
- ՄԻՊ - 6 հոգի (3%),
- Վարչապետին - 6 հոգի (3%),
- Իրավապաշտպան կազմակերպություններին - 3 հոգի (1,5%),
- Այլ - 7 հոգի (3,5%):

ՆԿ. 3. ԳԻՏԵՍ, ԹԵ ՈՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ԿԱՐՈՂ ԵՍ ԴԻՄԵԼ, ԵԹԵ ՔՈ ԿԱՄ ԸՆԿԵՐՈՋԴ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԾԱՌԱՅԱԿԻՑՆԵՐԴ ԿԱՄ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՆԵՐԴ ԽԱԽՏԵՆ: (N=196)



Չնայած, որ պաստառների բովանդակությունն օգտակար է եղել կյանքի իրավունքի եւ խոշտանգումներից ու վատ վերաբերմունքի այլ ձեւերից զերծ մնալու իրավունքի մասին իրազեկելու տեսանկյունից, զինկոմիսարիատներում դրանց փակցված լինելը, սակայն, զորակոչիկների մեծ մասը չի նկատել, նկատածների կեսն էլ դրանք չի կարդացել: Հարցվածների կեսը նաեւ հրաժարվել է գնալ եւ տեղում կարդալ դրանք: Մշտադիտարկող խմբի համար, հետեւապես, պարզ չէ, թե որքանով է պաստառների փակցնելը զինկոմիսարիատներում նպաստում զորակոչիկների շրջանում իրենց իրավունքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ. ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԱԿՑԻԱՆԵՐ

2020թ. հունվար-օգոստոս ամիսներին զորամասերում եւ զինկոմիսարիատներում կյանքի իրավունքի վերաբերյալ իրազեկման ակցիաներ չեն իրականացվել՝ պայմանավորված համաճարակային սահմանափակումներով, սակայն ստորաբաժանման ղեկավարներին համապատասխան հանձնարարական է տրվել, որպեսզի ստորաբաժանման իրավաբանների ներգրավմամբ իրականացվի իրազեկում, մասնավորապես այն մասին, որ յուրաքանչյուր քաղաքացու/զինծառայողի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով[74]: 2020թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին անցկացվել են թվով 4 իրազեկման պարապմունքներ[75]:

74. ՊՆ/510-ԳՔ/2709-2020, 28 օգոստոսի, 2020թ.
75. ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվություն, էջ 5

Զեկույցի հրապարակման պահին «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ին տեղեկություններ չեն տրամադրվել Արցախի ՊԲ զորամասերում իրազեկման ակցիաների անցկացման վերաբերյալ:

Տեղեկություններ չեն տրամադրվել նաեւ նման իրազեկման ակցիաների իրականացման գործում միջազգային եւ (կամ) տեղական կազմակերպությունների հետ համագործակցության մասին:

ՄԻՊ գրասենյակից նշել են, որ ՄԻՊ աշխատակազմը, որպես աշխատանքային գործունեության սկզբունք, զորամասեր մշտադիտարկման այցեր իրականացնելիս ունենում է առանձնազրույցներ, այդ թվում նաեւ իրազեկման աշխատանքներ է իրականացնում զինծառայողների շրջանում[76]:

«Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ն չի ստացել նաեւ տեղեկություններ այն մասին, թե ինչ են իրենցից ներկայացում իրազեկման ակցիաները, ինչ եղանակով են դրանք իրականացվել, ինչ նյութեր են օգտագործվել եւ ովքեր են նյութերի հեղինակները, ինչպես նաեւ, թե որն է եղել զորամասերի եւ (կամ) զինկոմիսարիատների՝ նման ակցիաների մեջ ներառելու սկզբունքը:

Կարելի՞ է, արդյոք, տեղում մշտադիտարկել իրազեկման ակցիաների ընթացքը հարցին ի պատասխան՝ պաշտպանության նախարարությունից նշել են, որ մշտադիտարկման նպատակով իրազեկման ակցիաներին քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցության հարցին անդրադարձ կկատարվի ակցիաների իրականացման ընթացքում[77]: Վերոնշյալ 4 իրազեկման պարապմունքների և դրանք մշտադիտարկելու հնարավորության մասին, սակայն, «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ն նախօրոք չի տեղեկացվել:

Մշտադիտարկող խմբի համար պարզ չէ զորամասերում եւ զինկոմիսարիատներում իրականացվելիք կյանքի իրավունքի վերաբերյալ իրազեկման ակցիաների էությունը: Մասնավորապես, թե ի՞նչ է նշանակում իրազեկման ակցիա, ի՞նչ միջոցառումներ է ներառում, ի՞նչ մեթոդներով են այդ ակցիաներն իրականացվելու եւ ինչպե՞ս է չափվելու դրանց ազդեցությունը բանակում մահվան դեպքերի թվի փոփոխության վրա: Չափելիության հարց առաջացել է նաեւ զորամասերում ու զինկոմիսարիատներում մարդու իրավունքների վերաբերյալ տեղեկատվական նյութերի մշակման ու տարածման, ինչպես նաեւ զանգվածային լրատվության միջոցներով զինված ուժերում մարդու իրավունքների վերաբերյալ տեսաձայնագրությունների հետ կապված:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՏԱՐԱԾՈՒՄ

Ինչպես տեղեկացրել են պաշտպանության նախարարությունից, 2020թ. օգոստոսի 31-ի դրությամբ, մարդու իրավունքների, դրանց պաշտպանության միջոցների

76. ՄԻՊ, 01/13.7/4678-20, 28 սեպտեմբերի, 2020թ.
77. ՊՆ/510-ԳՔ/2709-2020, 28 օգոստոսի, 2020թ.

վերաբերյալ առնվազն 3 տեղեկատվական նյութ, նախատեսված զորամասերում ու զինկոմիսարիատներում տարածելու համար, մշակված չի եղել[78]:

2020թ. երկրորդ կիսամյակում անձնակազմի հետ տարվող աշխատանքների շաբաթական պլաններում և ստորաբաժանումների դասացուցակներում որպես տեղեկատվության թեմաներ ընդգրկելու և անձնակազմին հասցնելու համար ՀՈՒ համապատասխան վարչությունից զորամասեր է առաքվել մարդու իրավունքների, այդ թվում՝ իրավունքների պաշտպանության միջոցների մասին տեղեկատվական 6 նյութ[79]:

2020թ. սեպտեմբերի 27-ին Արցախի և Հայաստանի դեմ սանձազերծած պատերազմի կապակցությամբ արձակվել է մարտական գործողությունների ընթացքում զինված ուժերի անձնակազմի կողմից Միջազգային մարդասիրական իրավունքի դրույթների պահպանման և հակառակորդի զինծառայողների նկատմամբ հակահիրավական գործողություններ կատարելուց զերծ մնալու վերաբերյալ ՀՈՒ ԳՇ պետի համապատասխան հրաման[80]:

Զեկույցի հրապարակման պահին «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ին հայտնի չեն զորամասերում եւ (կամ) զինկոմիսարիատներում նյութերի տարածման, դրանց մշակման գործում միջազգային կամ տեղական կազմակերպությունների հետ համագործակցության, ՄԻՊ-ի, ՄԻԵԴ-ում ՀՀ ներկայացուցչի գրասենյակների ներգրավվածության, նյութերի տարածման եղանակների, զորամասերի եւ (կամ) զինկոմիսարիատների ընտրության սկզբունքի մասին տեղեկություններ:

Մշտադիտարկման արդյունքները. զինված ուժերում մարդու իրավունքների վերաբերյալ տեսաձայնագրությունների տարածում

2020թ. առաջին կիսամյակում նախատեսված 3 տեսաձայնագրությունը զինված ուժերում մարդու իրավունքների վերաբերյալ դեռեւս մշակված չի եղել[81]:

2020թ. երկրորդ կիսամյակի դրությամբ, ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվության համաձայն, Երևանում Եվրոպայի խորհրդի և ՀՀ ՄԻՊ գրասենյակի հետ համատեղ մշակվել է մեկ տեսանյութ՝ իրավունքների պաշտպանության միջոցների մասին: Դրա բովանդակությունը քննարկվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ներկայացուցչի հետ[82]: Զեկույցի հրապարակման պահին տվյալ տեսանյութը հասանելի չէ «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ին:

2020թ. առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ հանրային հեռարձակողի խորհուրդը «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ին գրությամբ տրամադրել է թվով 9 ռեպորտաժների հղումներ, որոնք եթեր են հեռարձակվել Հանրային հեռուստաընկերության «Առաջին ալիքի» «Լուրերի» թողարկումներում՝ 2020թ. հունվարից մինչեւ օգոստոս ընկած ժամանակահատվածում[83]:

---

78. ՊՆ/510-ԳՔ/2710-2020, 31 օգոստոսի, 2020թ.
79. ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվություն, էջ 5
80. ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվություն, էջ 5
81. ՊՆ/510-ԳՔ/2710-2020, 31 օգոստոսի, 2020թ.
82. ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվություն, էջ 5
83. ՀՀ Հանրային հեռարձակողի խորհուրդ, խորհրդի նախագահ, 01/1152/1-2020, 4 դեպտեմբերի, 2020թ.

Տվյալ ռեպորտաժներից երեքը վերաբերում են, մասնավորապես, բանակում ոչ մարտական պայմաններում մի շարք ժամկետային զինծառայողների մահվան դեպքերին: 2020թ. հունվարի 18-ի ռեպորտաժը նվիրված է 2016թ. հուլիսի 3-ին բանակում ոչ մարտական պայմաններում հրազենային վնասվածքից մահացած շարքային Արսեն Մխիթարյանի գործին, որն, ըստ պաշտոնական վարկածի, որակվել էր որպես ինքնասպանություն: Զինծառայողի ծնողները եւ փաստաբանը պնդում են, որ գործի բացահայտման համար քննիչները պատշաճ գործունեություն չեն իրականացնում: Ծնողները պահանջում են, որպեսզի պարզվեն իրենց որդու մահվան իրական հանգամանքները, պատճառները եւ մեղավորները[84]:

2020թ. փետրվարի 20-ի ռեպորտաժում զինծառայողների ծնողները՝ «Սեւազգեստ մայրերը», ՀՀ կառավարության շենքի դիմաց պահանջում են հանդիպում վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ: Ազգային ժողովի փոխխոսնակ Ալեն Սիմոնյանը խոստանում է նրանց պահանջը փոխանցել վարչապետին[85]:

2020թ. հուլիսի 3-ի ռեպորտաժը վերաբերում է բանակում ոչ մարտական պայմաններում մահացած զինծառայողների ծնողների հետ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հունիսի 13-ի հանդիպմանը: Վերջինս առաջարկում է զինծառայողների ծնողներին գործերն ուսումնասիրել նրանց եւ վարչապետի կողմից ներկայացված երեքական իրավաբանների կողմից: Ձեւավորված խումբը քննում է 8 գործ, այդ թվում՝ նաեւ Արսեն Մխիթարյանի վերոնշյալ գործը: Ծնողներն իրենց վստահությունն են հայտնում վարչապետին, որպեսզի գործընթացը սկսվի, եւ հույս հայտնում, որ այդ նախաձեռնությունը դրական արդյունքների կհանգեցնի[86]:

2020թ. մայիսի 2-ի եւ օգոստոսի 31-ի երկու ռեպորտաժ նվիրված է Արցախի պաշտպանության բանակի զորամասերում ներդրված սննդի ապահովման նոր համակարգին[87], ինչպես նաեւ ՀՀ վարչապետի եւ Արցախի նախագահի այցելությանը զորամասերից մեկը[88]: Ըստ նոր կարգավորումների՝ բանակի զորամասերում սնունդն ապահովում է մասնավոր ընկերությունը, իսկ զինվորներն այլեւս չեն իրականացնում ճաշարանի ներքին վերակարգի ծառայություն:

2020թ. ապրիլի 19-ի ռեպորտաժում ներկայացվում է COVID-19-ի պայմաններում «Հայրենիքի պաշտպանի» կենտրոնի բուժաշխատողների եւ բուժվող զինծառայողների առօրյան՝ ներառյալ մեկուսացման միջոցները[89]:

2020թ. հուլիսյան դեպքերի առթիվ երկու ռեպորտաժ է ուղարկվել, որոնցում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը[90], նախագահ Արմեն Սարգսյանն

84. Առաջին ալիք, Սպանություն էր, թե՞ ինքնասպանություն. զինվորի մահվան հանգամանքը երեք ու կես տարի անց չի բացահայտվել, 18 հունվարի, 2020թ.
85. Առաջին ալիք, «Լուրեր» 20.02.2020, 20 փետրվարի, 2020թ., 8:19 րոպեից
86. Առաջին ալիք, Զոհված զինծառայողների քրեական գործերը կուսումնասիրեն հարազատների եւ վարչապետի ներկայացրած 6 իրավաբան, 3 հուլիսի, 2020թ.
87. Առաջին ալիք, Արցախի եւս մեկ զորամաս անցավ սննդի ապահովման նոր համակարգին, 2 մայիսի, 2020թ.
88. Առաջին ալիք, Փաշինյանն ու ԱՀ նախագահը ՊԲ զորամասերից մեկում ներկա են գտնվել նորակառույց ճաշարանի բացմանը, 31 օգոստոսի, 2020թ.
89. Առաջին ալիք, Հայրենիքի պաշտպանի կենտրոնից 1 ամիս տուն չեն գնացել բժիշկ, բուժքույր, խոհարար. Բեռլինի պատ Երեւանում, 19 ապրիլի, 2020թ.
90. Առաջին ալիք, Լուրեր. Գլխավոր թողարկում, 22.07.2020, 22 հուլիսի, 2020թ., 8:19 րոպեից

այցելում են վիրավոր զինծառայողներին: ՊՆ-ին հղում կատարելով՝ մանրամասներ է ներկայացվում վիրավորների առողջական վիճակի մասին[91]:

2020թ. օգոստոսի 6-ի ռեպորտաժը նվիրված է «Զինծառայողների ապահովագրության հիմնադրամի» ստեղծման գաղափարին, գործունեությանն ու փոխհատուցում ստանալու մանրամասներին[92]:

Վերոնշյալ տեսաձայնագրությունները՝ ռեպորտաժները, որոշակի առումով ներառում են մարդու իրավունքներին առնչվող թեմաներ, ինչպիսիք են՝ բանակում ոչ մարտական պայմաններում զինծառայողների մահացության դեպքերի արդար քննությունը, պետության պարտավորությունները կյանքի իրավունքի նյութական եւ ընթացակարգային ասպեկտների հետ կապված, սննդի եւ բուժսպասարկման պատշաճ կազմակերպումը՝ որպես զինծառայողների առողջության իրավունքի ապահովման միջոց: Զինված ուժերում մարդու իրավունքների վերաբերյալ առնվազն 3 տեսաձայնագրությունների տարածումը, սակայն, նախանշված է որպես անմիջական արդյունք կյանքի իրավունքի վերաբերյալ զորակոչիկների եւ զինծառայողների իրազեկվածությունը բարձրացնելու գործողության իրականացման համատեքստում: Մշտադիտարկող խումբը գտնում է. տվյալ գործողության նպատակն է, որպեսզի զորակոչիկները եւ զինծառայողները ավելի լավ իրազեկված լինեն իրենց իրավունքներին եւ դրանց խախտման դեպքում արդյունավետ պաշտպանության միջոցներին: Այս գործողության պահանջները, հետեւաբար, կարող էին բավարարել այնպիսի տեսաձայնագրությունները, որոնք մշակված կլինեին մարդու իրավունքների համապատասխան մասնագետների հետ համատեղ, կպարունակեին տեղեկություններ կյանքի իրավունքի ապահովման գործում պետության պարտավորության, իրավունքի խախտումների դեպքում այդ խախտումների վերացման ու իրավունքի վերականգնման համար գործնական մեխանիզմների մասին: 2020թ. հունվար-օգոստոս ամիսներին տարածված տեսաձայնագրությունները ռեպորտաժների տեսքով միայն որոշ առումով են ներառում զինված ուժերում մարդու իրավունքներին վերաբերող տեղեկություններ եւ, ըստ էության, չեն հանդիսանում զորակոչիկների ու զինծառայողների համար իրենց իրավունքների եւ դրանց պաշտպանության համար արդյունավետ մեխանիզմների մասին իրազեկման միջոցառումներ:

91. Առաջին ալիք, Իրավիճակը սահմանին, Լուրեր. Հատուկ թողարկում, 18 հուլիսի, 2020թ., 42:22 րոպեից
92. Առաջին ալիք, 2020 թ. Զինծառայողների ապահովագրության հիմնադրամին նվիրաբերվել է 600 հազար դոլար, 6 օգոստոսի, 2020թ.

Գործողություն 3

Զինված ուժերում ամրապնդել հանդուրժողականության եւ փոխադարձ հարգանքի մթնոլորտը

ՄԻՊ 2020-2022թթ. ԳԾ կյանքի իրավունքի ապահովմանն ուղղված երրորդ գործողությամբ նախատեսվել է 2020-2022թթ. ընթացքում զինված ուժերում ամրապնդել հանդուրժողականության եւ փոխադարձ հարգանքի մթնոլորտը, որով ակնկալվում է նվազեցնել ԶՈՒ-ում ոչ կանոնադրային հարաբերությունների հետեւանքով մահվան դեպքերը: Նման մթնոլորտի ամրապնդման համար ակնկալվում է.

- ուսումնասիրություն կատարել ԶՈՒ-ում անհանդուրժողականության դրսեւորումների պատճառների, նպաստող գործոնների եւ դրանց հաղթահարման ուղիների վերաբերյալ,
- ինչպես նաեւ զորամասերի 30%-ում կազմակերպել հոգեբանների դասախոսություններ:

Գործողության կատարման համար պատասխանատու մարմինը ՀՀ պաշտպանության նախարարությունն է, իսկ համակատարող մարմինները՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը՝ համաձայնությամբ, ՄԻԵԴ-ում ՀՀ ներկայացուցչի գրասենյակը:

Ֆինանսավորումը կատարվում է պետական բյուջեից եւ օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

Մշտադիտարկման արդյունքները. ընդհանուր դիտարկումներ
Պաշտպանության նախարարությունից տեղեկացրել են, որ կորոնավիրուսային վարակի ներթափանցման վտանգով պայմանավորված՝ զինված ուժերում հանդուրժողականության եւ փոխադարձ հարգանքի մթնոլորտի ապահովման գործողության համատեքստում չի կատարվել նախատեսված ուսումնասիրությունը՝ ԶՈՒ-ում անհանդուրժողականության դրսեւորումների պատճառների, նպաստող գործոնների եւ դրանց հաղթահարման ուղիների վերաբերյալ[93]:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Ըստ պաշտպանության նախարարության տրամադրած տեղեկության՝ 2020թ. հունիսի 4-ի դրությամբ ՄԻՊ ռազմավարությամբ 2020-2022թթ. ԳԾ նախատեսված միջոցառումների կատարումն ապահովելու նպատակով ընդունվել է պաշտպանության նախարարի հրաման, որով սահմանվել է ստորաբաժանումների կողմից

93. ՊՆ/510-ԳՔ/1793-20, 4 հունիսի, 2020թ.; ՊՆ/510-ԳՔ/2711-20, 2 սեպտեմբերի, 2020թ.; ՄԻՊ, 01/13.7/4678-20, 28 սեպտեմբերի, 2020թ.

իրականացվելիք միջոցառումների պլան-ժամանակացույց եւ յուրաքանչյուր միջոցառման կատարման համար նշանակվել է պատասխանատու ստորաբաժանում՝ այդ թվում նաեւ ԶՈՒ-ում անհանդուրժողականության դրսեւորումների պատճառների, նպաստող գործոնների եւ դրանց հաղթահարման ուղիների վերաբերյալ ուսումնասիրությունն իրականացնելու համար[94]: Պլան-ժամանակացույցի վերաբերյալ մանրամասներ չեն տրամադրվել:

2020թ. հուլիսի 16-ի դրությամբ, ըստ «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ին պաշտպանության նախարարության ուղարկած գրության, զինված ուժեր է առաքվել վերլուծական նյութ ոչ կանոնագրքային փոխհարաբերությունների դրսեւորման դեպքերը ծնող պատճառների քննարկման եւ գործուն միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտության վերաբերյալ[95]:

2020թ. սեպտեմբերի 2-ի դրությամբ, զինված ուժերի համապատասխան վարչության կողմից զորամասերում պայմանագրային եւ ժամկետային պարտադիր զինծառայողների շրջանում անցկացվել են սոցիոլոգիական հարցումներ, որոնք վերլուծվել են, եւ արդյունքներն ուղարկվել են զորամիավորումների, միավորումների եւ զորամասների հրամանատարներին՝ անհրաժեշտ աշխատանքներ իրականացնելու նպատակով: Բացի այդ՝ նույն վարչության սպաների կողմից անցկացվել են դաստիարակչական աշխատանքներ ստորաբաժանման կազմով[96]: Զեկույցի հրապարակման պահին վերոնշյալ սոցիոլոգիական հարցումների եւ դաստիարակչական աշխատանքների վերաբերյալ մանրամասն տեղեկություններ հայտնի չեն:

2020թ. ընթացքում Երեւանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի հետ համագործակցության շրջանակներում փորձագիտական խմբի կողմից նախապատրաստվել է **«ՀՀ զինված ուժերում ոչ ֆորմալ փոխհարաբերությունների վարքային նորմերը և զինվորների մոտ քրեական ենթամշակույթի դրսևորման սոցիալական և հոգեբանական հիմնախնդիրների վերաբերյալ»** հետազոտության մեթոդաբանության նախագիծը, քննարկվել շահագրգիռ կողմերի մասնակցությամբ, սակայն դեռևս գործածության մեջ չի դրվել[97]:

Զեկույցի հրապարակման պահին «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ին հայտնի չեն տեղեկություններ ուսումնասիրության իրականացման ժամանակացույցի, մեթոդաբանության, հեղինակների, ուսումնասիրության կատարման գործում ՄԻՊ կամ ՄԻԵԴ-ում ՀՀ ներկայացուցչի գրասենյակի ներգրավվածության եւ ուսումնասիրության արդյունքների հիման վրա ձեռնարկվելիք գործողությունների վերաբերյալ:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ. ՀՈԳԵԲԱՆՆԵՐԻ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ըստ պաշտպանության նախարարության տրամադրած տեղեկության՝ 2020թ. հունիսի 4-ի դրությամբ ՄԻՊ ռազմավարությամբ 2020-2022թթ. ԳԾ նախատեսված

94. ՊՆ/510-ԳՔ/1793-20, 4 հունիսի, 2020թ.
95. ՊՆ/510-ԳՔ/2230-2020, 16 հուլիսի, 2020թ.
96. ՊՆ/510-ԳՔ/2711-20, 2 սեպտեմբերի, 2020թ.; ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվություն, էջ 8
97. ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվություն, էջ 6

միջոցառումների կատարումն ապահովելու նպատակով ընդունվել է պաշտպանության նախարարի հրաման, որով սահմանվել է ստորաբաժանումների կողմից իրականացվելիք միջոցառումների պլան-ժամանակացույց, եւ յուրաքանչյուր միջոցառման կատարման համար նշանակվել է պատասխանատու ստորաբաժանում՝ այդ թվում նաեւ հոգեբանների դասախոսություններն իրականացնելու համար[98]:

Ըստ ՊՆ գրության՝ ՀՀ ՊՆ նախարարի հրամանի համաձայն՝ սեպտեմբերի 1-ից նոյեմբերի 28-ը նախատեսված է եղել կազմակերպել սպա-հոգեբանների դասընթացներ, այդ թվում՝ **«Հանդուրժողականության եւ փոխադարձ հարգանքի մթնոլորտի ամրապնդում»** թեմայով դասախոսություն: Դասախոսության նյութերում ներառված են եղել դեպքեր, ծառայողական քննության օրինակներ, որտեղ նշված են եղել զորամասերի տեղակայման վայրերը եւ համարները, ուստի ուսումնական նյութերը հրապարակման ենթակա չեն[99]: Ըստ 2020թ. ՄԻՊ ԳԾ տարեկան հաշվետվության՝ համաձայն ՀՀ պաշտպանության նախարարի **«ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանում սպա-հոգեբանների վերապատրաստման դասընթաց կազմակերպելու մասին»** հրամանի՝ 2020թ. սեպտեմբերի 1-ից մեկնարկել են սպա-հոգեբանների վերապատրաստման դասընթացներ, որոնք, սակայն, մարտական գործողությունների պատճառով ընդհատվել են սեպտեմբերի 27-ից[100]:

2020թ. հուլիսի 16-ի դրությամբ, ըստ «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ին ուղղված ՊՆ գրության, «ԱՐԱՐ» քաղաքակրթական հետազոտությունների հիմնադրամի հետ համագործակցությամբ մշակման փուլում են գտնվել հոգեբանների դասախոսությունների թեմաները[101]: Բացի «ԱՐԱՐ» հիմնադրամից՝ այլ տեղական կամ միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության մասին տեղեկություններ չեն տրամադրվել:

Մշտադիտարկող խմբին չեն տրամադրվել տեղեկություններ զորամասերում հոգեբանների դասախոսությունների նյութերի, դրանց մշակման, մեթոդաբանության, անցկացնողների, դրանցում ՄԻՊ կամ ՄԻԵԴ-ում ՀՀ ներկայացուցչի գրասենյակի ներգրավման, դասախոսություններն անցկացնողների եւ թիրախային խմբերի, ինչպես նաեւ Արցախում տեղակայված զորամասերում հոգեբանների դասախոսությունների անցկացման վերաբերյալ:

Զորամասերում հոգեբանների դասախոսությունների կազմակերպումը ԳԾ-ում նշվում է որպես զինված ուժերում հանդուրժողականության եւ փոխադարձ հարգանքի մթնոլորտն ամրապնդելու գործողության անմիջական ակնկալվող արդյունք:

Մշտադիտարկող խմբի կարծիքով, սակայն, հոգեբանների դասընթացները պետք է դիտարկել ոչ այնքան որպես գործողության անմիջական արդյունք, այլ դրա կատարմանը հասնելու միջոց: Այսինքն՝ ոչ թե հանդուրժողականության ապահովման արդյունքում են հոգեբանները դասընթացներ անցնում, այլ հոգեբանների դասընթացները նպաստում են զինված ուժերում հանդուրժողականության ամրապնդմանը:

98. ՊՆ/510-ԳՔ/1793-20, 4 հունիսի, 2020թ.
99. ՊՆ/510-ԳՔ/2711-20, 2 սեպտեմբերի, 2020թ.
100. ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվություն, էջ 7
101. ՊՆ/510-ԳՔ/2230-2020, 16 հուլիսի, 2020թ.

Գործողություն 4

Սահմանել զինված ուժերում մահվան դեպքերի արագ եւ թափանցիկ քննության վերաբերյալ իրազեկման չափորոշիչներ

ՄԻՊ 2020-2022թթ. ԳԾ կյանքի իրավունքի ապահովմանն ուղղված չորրորդ գործողությամբ նախատեսվել է սահմանել զինված ուժերում մահվան դեպքերի արագ եւ թափանցիկ քննության վերաբերյալ իրազեկման չափորոշիչներ:

Այս գործողությամբ ակնկալվում է նվազեցնել զինված ուժերում մահվան դեպքերի վերաբերյալ քրեական գործերով մինչդատական վարույթի ընթացքում մարդու իրավունքների խախտման դեպքերը: Դրա իրականացման համար ակնկալվում է մինչեւ 2022թ. առաջին կիսամյակը ընդունել զինված ուժերում մահվան դեպքերի արագ եւ թափանցիկ քննության վերաբերյալ գերատեսչական ակտեր (ուղեցույցներ)՝ քննչական եւ դատավարական գործողությունների վերջնաժամկետների, եղանակների, տուժողների իրավահաջորդների/ ներկայացուցիչների եւ հանրությանը իրազեկման պարբերականության վերաբերյալ:

Գործողության կատարման եւ անմիջական արդյունքի համար որպես պատասխանատու մարմին է սահմանվել ՀՀ գլխավոր դատախազությունը՝ համաձայնությամբ, իսկ համակատարող մարմիններն են արդարադատության նախարարությունը, պաշտպանության նախարարությունը, ՀՀ քննչական կոմիտեն՝ համաձայնությամբ, ՀՀ ոստիկանությունը, ՄԻԵԴ-ում ՀՀ ներկայացուցչի գրասենյակը: Ըստ ԳԾ փաստաթղթի՝ ֆինանսավորումը կատարվելու է օրենքով չարգելված աղբյուրներից, իսկ պետական բյուջեից ֆինանսավորում չի պահանջվում:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ըստ 2020թ. տարեկան հաշվետվության՝ ՀՀ գլխավոր դատախազությունում մշակվել է ՀՀ զինված ուժերում մահվան դեպքերի արագ և թափանցիկ քննության չափորոշիչներ սահմանելու վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազի հրամանի նախագիծ, որը 2021թ. հունվարի 20-ին քննարկման նպատակով ուղարկվել է Ծրագրի տվյալ կետով համակատարող հանդիսացող պետական այլ մարմիններին[102]:

102. ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվություն, էջ 7

ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

- *Սահմանել չափելի նպատակ զինված ուժերում մահվան դեպքերի նվազեցման եւ դրանց վերաբերյալ գործերի քննության ավելացման առումով՝ ի հավելումն ներկա իրավիճակին վերաբերող ելակետային տվյալների սահմանման:*

- *Կյանքի իրավունքի նյութական եւ ընթացակարգային ասպեկտների մասին փաստաբանների խորը գիտելիքները եւ գործնական հմտությունները հավելյալ երաշխիք են կյանքի իրավունքի խախտման դեպքերով տուժողների իրավունքների պաշտպանության եւ իրենց դատավարական իրավունքների խախտումները կանխելու տեսանկյունից: Սա հատկապես վերաբերում է զինված ուժերում կյանքի իրավունքի խախտումների դեպքերին, քանի որ տուժողների իրավունքներն ավելի խոցելի են դառնում ոլորտի զգայունության եւ գաղտնիք պարունակող տեղեկատվության հետ աշխատանքի պայմաններում: Ուստի, անհրաժեշտ է փաստաբաններին եւս ներգրավել զինված ուժերում կյանքի իրավունքի թեմայով վերապատրաստումներում:*

- *Համաձայն ՀՀ-ում արտակարգ դրություն հայտարարելու մասին ՀՀ կառավարության 2020թ. մարտի 16-ի որոշման՝ արտակարգ դրության ամբողջ ընթացքում դադարեցվել է ուսումնական կազմակերպություններում ուսումնական գործընթացը՝ բացառությամբ հեռավար ուսուցման: Այս սահմանափակումը չի տարածվել ռազմական ուսումնական հաստատությունների վրա[103]: Հետեւաբար, կորոնավիրուսային համաճարակի պայմաններում վերապատրաստումների կազմակերպումը հնարավոր կարող էր լինել՝ օգտվելով դասավանդման առցանց միջոցներից: Անհրաժեշտ է մշակել եւ կիրառել միջոցներ, այդ թվում առցանց, COVID-19 համավարակի պայմաններում վերապատրաստումներն ու դասընթացներն անվտանգ իրականացնելու համար:*

- *ՄԻՊ ԳԾ-ում անհրաժեշտ է ներառել կյանքի իրավունքի թեմայով հենց միջազգային իրավունքին ու չափանիշներին համապատասխան առանձին վերապատրաստումներ քննիչների, դատախազների ու դատավորների համար:*

- *Մշակել եւ կիրառել հստակ չափորոշիչներ, որոնցով հնարավոր կլինի գնահատել զինկոմիսարիատներում ու զորամասերում իրազեկման ակցիաների, տեղեկատվական նյութերի եւ ԶԼՄ-ներով դրանց վերաբերյալ*

---

103. «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 298-Ն որոշում, 16 մարտի, 2020թ.

տեսաձայնագրությունների տարածման միջոցառումների ազդեցությունը բանակում մահվան դեպքերի թվերի նվազման վրա:

- *Պատրաստել ու տարածել այնպիսի տեսաձայնագրություններ, որոնք մշակված կլինեն մարդու իրավունքների համապատասխան մասնագետների հետ համատեղ եւ կպարունակեն տեղեկություններ կյանքի իրավունքի ապահովման գործում պետության պարտավորության, իրավունքի խախտումների դեպքում դրանց վերացման ու վերականգնման համար գործնական մեխանիզմների մասին:*

- *Պարզաբանել, թե զորամասերում եւ զինկոմիսարիատներում իրականացվելիք ինչ իրազեկման ակցիաների մասին է խոսքը ՄԻՊ ԳԾ-ում:*

- *Մշակել հստակ չափորոշիչներ՝ սահմանելու համար զինկոմիսարիատներում փակցված պաստառների ազդեցությունը մարդու իրավունքների վերաբերյալ զորակոչիկների իրազեկվածության բարձրացման վրա:*

- *Նախատեսել ՀՈւ-ում անհանդուրժողականության դրսեւորումների պատճառների ուսումնասիրությունների կատարման եւ հոգեբանների դասընթացների անցկացման այնպիսի մեխանիզմներ, որոնք թույլ կտան իրականացնել այդ գործողությունները կորոնավիրուսային համաճարակի պայմաններում:*

- *Դիտարկել զորամասերում հոգեբանների դասախոսությունները ոչ թե որպես հանդուրժողականության եւ փոխադարձ հարգանքի ամրապնդման անմիջական արդյունք, այլ դրան հասնելու միջոց:*

- *Մշակել եւ կիրառել հստակ չափորոշիչներ՝ չափելու համար զինված ուժերում հոգեբանների դասախոսությունների կազմակերպման, ինչպես նաեւ ՀՈւ-ում անհանդուրժողականության դրսեւորումների պատճառների, նպաստող գործոնների եւ դրանց հաղթահարման ուղիների վերաբերյալ ուսումնասիրության կատարման ազդեցությունը ՀՈւ-ում հանդուրժողականության, փոխադարձ հարգանքի մթնոլորտի ապահովման ու դրա հետեւանքով ՀՈւ-ում ոչ կանոնադրային հարաբերությունների արդյունքում մահվան դեպքերի նվազման վրա:*

ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻ ԱՐԳԵԼՔ

ՄԻՊ ռազմավարությունը նշում է, որ չնայած խոշտանգումների դեմ պայքարի ոլորտում վերջին տարիներին իրականացված օրենսդրական բարեփոխումներին եւ գործնականում դրանց կիրառման մեխանիզմների ներդրմանը, Հայաստանում դեռեւս առկա են մի շարք օրենսդրական, գործնական բացեր ու խնդիրներ, որոնք հնարավորություն չեն տալիս ամբողջությամբ ապահովելու այս իրավունքի արդյունավետ պաշտպանությունն ու երաշխավորումը[104]:

ՄԻՊ ռազմավարությամբ նշվում է, որ բացի պաշտոնական վիճակագրությամբ արտացոլված դեպքերից՝ խոշտանգումների բազմաթիվ դեպքեր կարող են մնալ անհայտ, որ հանրությանը հայտնի դարձած խոշտանգման դեպքերը եւս մտահոգիչ են, իսկ դրանց մի մասը մնում է չբացահայտված[105]:

ՄԻՊ ռազմավարությունում եւ 2020-2022թթ. ԳԾ-ում տվյալներ չկան այն մասին, թե խոշտանգման դեպքերի ինչ պաշտոնական վիճակագրության մասին է խոսքը, եւ ինչ սկզբունքով են նման դեպքերը դիտարկվել որպես «խոշտանգման դեպքեր»: Պարզ չէ անգամ, թե ինչ սկզբունքով են նման դեպքերը համարվել բացահայտված կամ չբացահայտված: 2020-2022թթ. ԳԾ-ով նպատակ է դրվել դատարան ուղարկված խոշտանգման հիմքով հարուցված քրեական գործերի թվի առնվազն 5% աճը[106]: Հարց է առաջանում, սակայն, արդյո՞ք գործերը դատարան ուղարկելու փուլը միայն թույլ է տալիս եզրակացնել, որ խոշտանգումների դեպքերը բացահայտվում են, ինչն էլ իր հերթին, ըստ ԳԾ-ի, հանգեցնելու է խոշտանգումների եւ վատ վերաբերմունքի դեպքերի նվազմանը:

«Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ին հայտնի չեն այնպիսի դատական գործեր, որոնցում, համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 309.1 հոդվածի, մեղավոր ճանաչված եւ դատապարտված լինի խոշտանգում իրականացրած որեւէ պաշտոնատար անձ: Այսինքն, այստեղ մենք բախվում ենք ոչ միայն օրենսդրական, այլ նաեւ իրավակիրառ խնդրի՝ այդ թվում զինված ուժերում խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի այլ ձեւերի առնչությամբ:

Ի տարբերություն կյանքի իրավունքի թեմայի՝ 2020-2022թթ. ԳԾ-ով զինված ուժերում խոշտանգման արգելքի վերաբերյալ իրազեկման ակցիաներ, տեսաձայնագրություններ, այլ իրազեկող նյութերի տարածում չի նախատեսվել: Եվ դա այն դեպքում, երբ ՄԻՊ ռազմավարությունում եւս շեշտվում է

---

104. ՄԻՊ ռազմավարություն, էջ 22
105. նույն տեղում
106. ՄԻՊ 2020-2022թթ. ԳԾ, էջ, 10

խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի բացարձակ արգելքը[107]: Այս արգելքը, ի տարբերություն կյանքի իրավունքի, բացարձակ է նաեւ միջազգային իրավունքի, այդ թվում՝ զինված հակամարտությունների միջազգային նորմերի տեսանկյունից:

Բացի այդ, հրամանատարների համար խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի թեմայով վերապատրաստումները չեն նախատեսվել, այնինչ զորամասերում հենց հրամանատարներն են պատասխանատու ինչպես խոշտանգումները կանխելու, այնպես էլ նախնական փուլում դրանց հետաքննության համար:

107. ՄԻՊ ռազմավարություն, էջ 21

Գործողություն 12

Ռազմական ոստիկանության բաժիններում տեղադրել տեսաձայնագրման միջոցներ

ՄԻՊ 2020-2022թթ. ԳԾ խոշտանգումների արգելքին նվիրված 12-րդ գործողությամբ նախատեսվել է մինչեւ 2021թ. երկրորդ կիսամյակը ռազմական ոստիկանության բաժիններում՝

- ՀՀ ռազմական ոստիկանության 13 բաժնում,
- 3 բաժանմունքում,
- 1 զորամասում,

տեղադրել տեսաձայնագրման միջոցներ, յուրաքանչյուրում՝ 8 տեսախցիկ :

Ակնկալվում է, որ տվյալ գործողության կատարմամբ կնվազեն ռազմական ոստիկանության բաժիններում խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեպքերը, քրեական գործերի մինչդատական վարույթում քրեական դատավարության մասնակիցների իրավունքների խախտումները, քննչական եւ դատավարական գործողությունների իրականացման կարգի խախտմամբ ապացույցների ձեռքբերման դեպքերը, ինչպես նաեւ տեսաձայնագրությունները կօգտագործվեն որպես ապացույց՝ այդ դեպքերի վերաբերյալ քրեական գործերով:

Ռազմական ոստիկանության մասով գործողության կատարման եւ անմիջական արդյունքի համար պատասխանատու պետական մարմինը պաշտպանության նախարարությունն է, իսկ համակատարող մարմին չի սահմանվել:

Ֆինանսավորումը նախատեսվում է կատարել պետական բյուջեից եւ օրենքով չարգելված այլ աղբյուրներ:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

2020թ. հունվար-օգոստոս ամիսների ընթացքում ռազմական ոստիկանության բաժիններում, բաժանմունքներում եւ զորամասում տեսախցիկներ չեն տեղադրվել: Ըստ ՊՆ գրության՝ 2020թ. ընթացքում իրականացվում է տեսախցիկների տեղադրման ծախսերի հաշվարկ[108]: Տեսախցիկների տեղադրման ավելի մանրամասն ժամանակացույց չի տրամադրվել:

Զեկույցի հրապարակման պահին «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ին հայտնի չեն տեղեկություններ ռազմական ոստիկանությունում տեսաձայնագրման միջոցների տեղադրման գործում միջազգային եւ (կամ) տեղական կազմակերպությունների

108. ՊՆ/510-ԳՔ/2230-2020, 16 հուլիսի, 2020թ.

հետ համագործակցության, ՄԻՊ-ի ու ՄԻԵԴ-ում ՀՀ ներկայացուցչի գրասենյակի ներգրավվածության, բաժինների, բաժանմունքների եւ մեկ զորամասի ընտրության եւ դրանցում տեսախցիկների կոնկրետ տեղադրման վայրերի ընտրության սկզբունքի, տեսախցիկների տեսակների, տեսաձայնագրություններին հասանելիություն ունեցող անձանց կամ գերատեսչությունների շրջանակի, տեսաձայնագրությունների պահման ժամկետների վերաբերյալ:

2021թ. փետրվարի 13-ի դրությամբ՝ ՄԻՊ 2020-2022թթ. ԳԾ-ում փոփոխությունների նախագծով առաջարկվում է ժամկետի փոփոխություն՝ գործողության կատարումը 2021թ. երկրորդ կիսամյակից տեղափոխել 2022թ. երկրորդ կիսամյակ:

Գործողություն 14

Օրենսդրորեն ամրագրել վաղեմության ժամկետի կիրառման սահմանափակումներ խոշտանգման հանցանքի նկատմամբ

ՄԻՊ 2020-2022թթ. ԳԾ խոշտանգումների արգելքին նվիրված 14-րդ գործողությամբ նախատեսվել է մինչեւ 2020թ. երկրորդ կիսամյակ օրենսդրորեն ամրագրել վաղեմության ժամկետի կիրառման սահմանափակումներ խոշտանգման հանցանքի նկատմամբ:

Ակնկալվում է, որ օրենքի նախագծի ընդունման արդյունքում կնվազեն խոշտանգման դեպքերը, դրանց վերաբերյալ քրեական գործերի հարուցումը մերժելու կամ դրանք կարճելու մասին որոշումները:

Գործողության կատարման եւ անմիջական արդյունքի համար պատասխանատու պետական մարմինն արդարադատության նախարարությունն է, իսկ համակատարող մարմինները՝ ՀՀ գլխավոր դատախազությունը՝ համաձայնությամբ, ՀՀ քննչական կոմիտեն՝ համաձայնությամբ, ՀՀ ոստիկանությունը եւ ՄԻԵԴ-ում ՀՀ ներկայացուցչի գրասենյակը:

Պետական բյուջեից ֆինանսավորում չի պահանջվում:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՀՀ արդարադատության նախարարության տրամադրած տեղեկության համաձայն՝ ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծում տեղ գտած իրավակարգավորումներով վաղեմության ժամկետներ չեն կիրառվում խաղաղության եւ մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցանքների, ինչպես նաեւ խոշտանգում կատարած անձանց նկատմամբ[109]: Մինչդեռ 2020-2022թթ. ԳԾ-ում նախատեսվել էր օրենսդրորեն ամրագրել վաղեմության ժամկետի կիրառման սահմանափակումներ խոշտանգման հանցանքի նկատմամբ: Միջազգային չափանիշների համաձայն՝ խոշտանգման հանցանքի համար պետք է ոչ թե ամրագրել սահմանափակումներ վաղեմության ժամկետի կիրառման գործում, այլ այս հանցագործության համար ընդհանրապես չկիրառել վաղեմության ժամկետներ: Գործողության կատարումը տվյալ դեպքում գերազանցել է ԳԾ-ով դրված բուն գործողությանը, որը համարում ենք դրական իրողություն:

2020թ. դեկտեմբերի 9-ին ՀՀ ԱԺ-ի կողմից առաջին ընթերցմամբ ընդունված ՀՀ նոր քրեական օրենսգրքի նախագծով նախատեսվում է, որ վաղեմության ժամկետը չի կիրառվում խոշտանգման հանցանքի նկատմամբ[110]:

109. ՀՀ արդարադատության նախարարության գրություն, 14 մայիսի, 2020թ.
110. ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվություն, էջ 15-16

ԳԾ-ում նշվում է նաեւ, որ օրենքի նախագծի ընդունման արդյունքում կնվազեն խոշտանգման դեպքերը, դրանց վերաբերյալ քրեական գործերի հարուցումը մերժելու կամ դրանք կարճելու մասին որոշումները: Վերեւում արդեն նշել ենք նման դեպքերի նվազման կապակցությամբ ելակետային տվյալների բացակայության խնդիրը: Բացի այդ, պետք է նշել, որ վաղեմության ժամկետներ չկիրառելու օրենքի պահանջը կատարելու դեպքում ոչ թե պետք է նվազեն, այլ ամբողջությամբ վերանան խոշտանգման դեպքերով քրեական գործերի հարուցումը մերժելու կամ դրանք կարճելու մասին որոշումները, եթե նման որոշումները հիմնված են լինում միայն վաղեմության ժամկետի հանգամանքի վրա:

Գործողություն 15

Մշակել «ֆիզիկական ուժեղ ցավ» եւ «հոգեկան տառապանք» եզրույթների մեկնաբանման եւ կիրառման վերաբերյալ ուղեցույցներ՝ միջազգային չափանիշներին համապատասխան

ՄԻՊ 2020-2022թթ. ԳԾ խոշտանգումների արգելքին նվիրված 15-րդ գործողությամբ նախատեսվել է մինչեւ 2021թ. առաջին կիսամյակը կատարել ուսումնասիրություն խոշտանգումների համատեքստում **«ֆիզիկական ուժեղ ցավ»** եւ **«հոգեկան տառապանք»** եզրույթների սահմանումների, դրսեւորումների վերաբերյալ: Ակնկալվում է նաեւ, որ նույն ժամանակամիջոցում ՀՀ Արդարադատության ակադեմիայի կողմից ընդունված կլինի ուղեցույց իրավակիրառողների համար՝ նշված հասկացությունների մեկնաբանման եւ կիրառման վերաբերյալ, իսկ ուղեցույցը կիրառվելիս կլինի ՀՀ Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող դասընթացների շրջանակներում: Որպես ազդեցություն՝ ակնկալվում է, որ կնվազեն խոշտանգման դեպքերը, դրանց վերաբերյալ քրեական գործերով քրեական գործի հարուցումը մերժելու կամ դրանք կարճելու մասին որոշումները:

Գործողության կատարման համար պատասխանատու մարմինը ՀՀ արդարադատության նախարարությունն է, իսկ համակատարող մարմինները՝

- ՀՀ Արդարադատության ակադեմիան՝ համաձայնությամբ,
- ՀՀ գլխավոր դատախազությունը՝ համաձայնությամբ,
- ՀՀ հատուկ քննչական ծառայությունը՝ համաձայնությամբ,
- ՀՀ ոստիկանությունը:

Ֆինանսավորումը նախատեսվում է կատարել պետական բյուջեից եւ օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հաշվի առնելով, որ այս գործողության կատարումը նախատեսված է եղել մինչեւ 2021թ. առաջին կիսամյակը, «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ն 2020թ. հունվարից մինչեւ օգոստոս ընկած ժամանակահատվածում մշտադիտարկում չի իրականացրել դրա կատարման ընթացքի նկատմամբ:

2020թ. տարեկան հաշվետվությունը չի անդրադառնում այս գործողությանը:

2021թ. փետրվարի դրությամբ ՄԻՊ 2020-2022թթ. ԳԾ-ում փոփոխությունների նախագծով առաջարկվում է ժամկետի փոփոխություն՝ գործողության կատարման վերջնաժամկետը 2021թ. առաջին կիսամյակից տեղափոխել 2022թ. առաջին կիսամյակ:

Գործողություն 18

Ստեղծել խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի մասին հաղորդումներ ներկայացնելու մեխանիզմ, որը կերաշխավորի դիմողի պաշտպանությունը

ՄԻՊ 2020-2022թթ. ԳԾ խոշտանգումների արգելքին նվիրված 18-րդ գործողությամբ նախատեսվել է մինչեւ 2022թ. առաջին կիսամյակը ստեղծել խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի մասին անանուն հաղորդումներ ներկայացնելու մեխանիզմ՝ զինված ուժերում ներդնելով խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի մասին անանուն հաղորդումներ ներկայացնելու միջոցներ: 2021թ. փետրվարի դրությամբ՝ ԳԾ փոփոխությունների նախագծով, սակայն, առաջարկվել է փոփոխել տվյալ գործողությունը՝ դրանից հանելով «անանուն»-ը և ավելացնելով այնպիսի մեխանիզմ, «որը կերաշխավորի դիմողի պաշտպանությունը»:

Նման մեխանիզմի ներդրմամբ ակնկալվում է, որ կնվազեն զինված ուժերում խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեպքերը:

Գործողության կատարման եւ անմիջական արդյունքի համար պատասխանատու մարմինը պաշտպանության նախարարությունն է, իսկ համակատարող մարմինը՝ ՄԻԵԴ-ում ՀՀ ներկայացուցչի գրասենյակը:

ԳԾ փոփոխությունների նախագծում նաև առաջարկվել է գործողության կատարման վերջնաժամկետը 2020թ. առաջին կիսամյակից տեղափոխել 2022թ. երկրորդ կիսամյակ:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

2020թ. ընթացքում զորամասերում փակցվել են ՀՀ ՊՆ «Թեժ գծի» եւ ՀՀ ԶՈՒ «Վստահության գծի» հեռախոսահամարները: ՊՆ ռազմական ոստիկանության հեռախոսահամարը նշված է կյանքի իրավունքի թեմայով տեղեկատվական պաստառում, որը նախատեսելվել էր փակցնել զինկոմիսարիատներում, զորամասերում՝ ըստ 2-րդ գործողության[111]: Ինչպես նշվել է ՊՆ գրությունում, նպատակը զինծառայողների շրջանում իրազեկվածությունը բարձրացնելն ու խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի մասին անանուն հաղորդումներ ներկայացնելու հնարավորություն ապահովելն է:

111. ՊՆ/510-ԳՔ/2230-2020, 16 հուլիսի, 2020թ.; ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվություն, էջ 16

ՆԿ. 4. ՀՐԱՄԱՆԱՏԱՐՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ՞ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻՆ ՀԱՐՎԱԾԵԼՈՒ: (N=196)



ԶՈՐԱԿՈՉԻԿՆԵՐԻ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻ, ԱՆՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՄ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԱՍՏԱՑՆՈՂ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի վերաբերյալ զորակոչիկների ընկալումները պարզելու նպատակով մշտադիտարկող խումբը փորձել է ճշտել, թե արդյոք հրամանատարն իրավունք ունի զինծառայողին հարվածելու, եթե այո, ապա ո՞ր դեպքերում եւ ի՞նչ իրավիճակում: Հարցված 196 զորակոչիկից 17-ը (8,7%) գտնում է, որ որոշ հանգամանքներում հրամանատարը զինծառայողին հարվածելու իրավունք ունի (տե՛ս՝ նկ. 4):

Ըստ նրանց՝ հրամանատարի կողմից զինծառայողի նկատմամբ բռնությունը «արդարացված» կլինի, եթե վերջինս հրաժարվում է կատարել հրամանը, չի ենթարկվել վերադասին կամ հենց ինքն առաջինն է բռնություն գործադրել հրամանատարի նկատմամբ:

Այն հարցին, թե որ մարմնին կդիմեն, եթե արժանանան վատ վերաբերմունքի կամ ականատես լինեն համածառայակցի նկատմամբ վատ վերաբերմունքի, հարցվողներից 114-ը (58%) հայտարարել է, որ չի դիմի ոչ մի մարմնի կամ կփորձի սեփական ուժերով լուծել խնդիրը (տե՛ս՝ նկ. 5): Այսինքն՝ հարցվողների կեսից ավելին անգամ չի դիտարկում վատ վերաբերմունքի արժանանալու դեպքում որեւէ պետական մարմնի դիմելու հավանականությունը:

ՆԿ. 5. Ո՞Ր ՄԱՐՄՆԻՆ ԿԴԻՄԵՍ. ԵԹԵ ԱՐԺԱՆԱՆԱՍ ՎԱՏ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԿԱՄ ԱԿԱՆԱՏԵՍ ԼԻՆԵՍ ՀԱՄԱԾԱՌԱՅԱԿՑԻԴ ՎԱՏ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԱՐԺԱՆԱՆԱԼՈՒ ԴԵՊՔԻ: (N=196)



«ԹԵԺ ԳԻԾ» և «ՎԱՏԱՀՈՒԹՅԱՆ ԳԻԾ»

Ըստ «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ի փորձի՝ քաղաքացիների հավաստմամբ հաճախ դժվարություններ են առաջանում «Թեժ գծին» միանալու ընթացքում: ՊՆ-ի պատճառաբանությունը ծանրաբեռնվածությունն է, հետեւաբար, նախատեսվել է շատացնել քաղաքացիների զանգերի ընդունման գծերը: «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ն մի քանի դեպքերով փորձ է ունեցել, երբ արդյունավետ կիրառվել է «Թեժ գծի» միջոցով իրավունքների խախտման համար անանուն հաղորդումներ ներկայացնելը:

Ինչպես տեղեկանում ենք ՊՆ կայքից, գլխավոր շտաբում 2019թ.-ից գործող «Վստահության գիծն» ամենօրյա ռեժիմով ծառայության է անցել 2020թ. ապրիլի 13-ից: Այն հնարավորություն է տալիս դիմումները, առաջարկները կամ բողոքները, ըստ անհրաժեշտության, ներկայացնել նաեւ անանուն, իսկ զանգերի գաղտնիությունը երաշխավորվում է: ՊՆ կայքից տեղեկանում ենք, որ «Վստահության գծի» նպատակն է չեզոքացնել զինծառայողների իրավունքների իրացմանը խոչընդոտող գործոնները, օպերատիվ արձագանքել բողոքներին ու առաջարկներին, տիրապետել իրավիճակին եւ կայացնել անհրաժեշտ որոշումներ, ինչպես նաեւ ամրապնդել հրամանատար-զինվոր փոխվստահությունը[112]: Կայքից տեղեկանում ենք նաեւ, որ սահմանվել է խիստ վերահսկողություն «Վստահության գիծ» դիմած զինծառայողների նկատմամբ խտրական վերաբերմունքն ու նրանց հետապնդումը բացառելու համար, իսկ դրա ի հայտ գալու դեպքում նշանակվում է ծառայողական քննություն եւ ընդունվում համարժեք որոշում: Ըստ անհրաժեշտության, բարձրացված հարցերի առնչությամբ

112. ՊՆ, ՀՈՒ ԳՇ «Վստահության գիծը» կգործի ամենօրյա ռեժիմով, 17 ապրիլի, 2020թ.

ցուցաբերվում է նաեւ իրավական եւ խորհրդատվական աջակցություն[113]:

«Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ն դեռեւս կոնկրետ փորձ չի ունեցել «Վստահության գծի» գործունեության հետ կապված եւ չի կարող եզրակացություններ կատարել գործնականում դրա աշխատանքի եւ արդյունավետության վերաբերյալ:

Նույնը վերաբերում է ռազմական ոստիկանությունում անանուն հաղորդումներին: Զեկույցի հրապարակման պահին մշտադիտարկող խումբը փորձում է պարզել այս բոլոր մեխանիզմների արդյունավետությունը զինված ուժերում խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի մասին անանուն հաղորդումներ ներկայացնելու գործում:

113. ՊՆ, ԶՈՒ ԳՇ «Վստահության գիծը» կգործի ամենօրյա ռեժիմով, 17 ապրիլի, 2020թ.

Գործողություն 26

Վերապատրաստումներ իրականացնել խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի թեմայով՝ միջազգային չափանիշներին համապատասխան, այդ թվում՝ ռազմական ոստիկանների, քննիչների, դատախազների, դատավորների համար

ՄԻՊ 2020-2022թթ. ԳԾ խոշտանգումների արգելքին նվիրված քսանվեցերորդ գործողությամբ նախատեսվել է վերապատրաստումներ իրականացնել խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի թեմայով՝ միջազգային չափանիշներին համապատասխան: Ակնկալվում է 2020-2022թթ. ընթացքում վերապատրաստել

- ռազմական ոստիկանների 35%-ին,
- քննիչների 51%-ին,
- դատախազների 7%-ին,
- դատավորների 10%-ին:

Ակնկալվում է, որ վերապատրաստումների արդյունքում կնվազեն ռազմական ոստիկանության բաժիններում գտնվող անձանց, քրեական դատավարության մասնակիցների նկատմամբ խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեպքերը:

Ռազմական ոստիկանների վերապատրաստման համար պատասխանատու մարմինը ՀՀ պաշտպանության նախարարությունն է, համակատարող մարմինները՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը՝ համաձայնությամբ, եւ ՄԻԵԴ-ում ՀՀ ներկայացուցչի գրասենյակը:

ՀՀ արդարադատության նախարարությունը խոշտանգումների արգելքի թեմայով քննիչների, դատախազների եւ դատավորների վերապատրաստման համար պատասխանատու մարմին է: Քննիչների վերապատրաստման համար համակատարող մարմիններ են սահմանվել ՀՀ Արդարադատության ակադեմիան՝ համաձայնությամբ, ՀՀ քննչական կոմիտեն՝ համաձայնությամբ, ՀՀ հատուկ քննչական ծառայությունը՝ համաձայնությամբ, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը՝ համաձայնությամբ, եւ ՄԻԵԴ-ում ՀՀ ներկայացուցչի գրասենյակը:

Դատախազների վերապատրաստումների համար որպես համակատարող մարմիններ են նախանշվել ՀՀ Արդարադատության ակադեմիան՝ համաձայնությամբ, ՀՀ գլխավոր դատախազությունը՝ համաձայնությամբ, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը՝ համաձայնությամբ, եւ ՄԻԵԴ-ում ՀՀ ներկայացուցչի գրասենյակը, իսկ դատավորների վերապատրաստումների համար՝ ՀՀ Արդարադատության ակադեմիան՝ համաձայնությամբ, Դատավորների ընդհանուր

ժողովի ուսումնական հարցերի հանձնաժողովը՝ համաձայնությամբ, եւ ՄԻԵԴ-ում ՀՀ ներկայացուցչի գրասենյակը:

Ֆինանսավորումը կատարվելու է պետական բյուջեից եւ օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Ի տարբերություն կյանքի իրավունքի թեմայով վերապատրաստումներին՝ Խոշտանգումների արգելքի վերաբերյալ վերապատրաստումներ չեն նախատեսվել փաստաբանների համար: Խոշտանգումների արգելքի նյութական եւ ընթացակարգային ասպեկտների մասին փաստաբանների խորը գիտելիքները եւ գործնական հմտությունները, սակայն, հավելյալ երաշխիք են դրա խախտման դեպքերով տուժողների իրավունքների պաշտպանության եւ իրենց դատավարական իրավունքների խախտումները կանխելու տեսանկյունից: Սա հատկապես վերաբերում է զինված ուժերում խոշտանգումների եւ վատ վերաբերմունքի այլ ձեւերի դեպքերին, քանի որ տուժողների իրավունքներն ավելի խոցելի են դառնում ոլորտի զգայունության եւ գաղտնիք պարունակող տեղեկատվության հետ աշխատանքի առկայությամբ:

2020թ. ընթացքում կորոնավիրուս հիվանդության համաճարակային միջոցառումների հետ կապված սահմանափակումներով պայմանավորված՝ խոշտանգումների արգելքի թեմայով ռազմական ոստիկանների, քննիչների, ՀՀ Արդարադատության ակադեմիայի կազմակերպած դատախազների վերապատրաստումները տեղի չեն ունեցել[114]:

Համաձայն ՀՀ-ում արտակարգ դրություն հայտարարելու մասին ՀՀ կառավարության 2020թ. մարտի 16-ի որոշման՝ արտակարգ դրության ամբողջ ընթացքում դադարեցվել է ուսումնական կազմակերպություններում ուսումնական գործընթացը՝ բացառությամբ հեռավար ուսուցման[115]:

ՀՀ Արդարադատության ակադեմիան իրականացնում է տարեկան վերապատրաստումներ քննիչների, դատախազների, դատավորների համար: ՀՀ արդարադատության նախարարությունն այս դասընթացներին է հղում կատարել՝ որպես 2020-2022թթ. ԳԾ-ով սահմանված՝ խոշտանգումների արգելքի թեմայով վերապատրաստումներ: Այդ դասընթացներն անդրադարձ են կատարում ՀՀ քրեական իրավունքի մի շարք հարցերի՝ այդ թվում խոշտանգումների ու վատ վերաբերմունքի այլ ձեւերի արգելքին եւ ՄԻԵԴ նախադեպային իրավունքին:

---

114. ՊՆ/510-ԳՔ/2711-20, 2 սեպտեմբերի, 2020թ.; ՄԻՊ 01/13.7/4678-20, 28 սեպտեմբերի, 2020թ.; ՔԿ, 12/12/47261-20, 28 օգոստոսի, 2020թ.; Դատախազություն, 44/6/19412-2020, 28 օգոստոսի, 2020թ.; տես նաեւ՝ ՀՀ արդարադատության նախարարության 2020թ. հոկտեմբերի 14-ի գրություն Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող դասընթացների վերաբերյալ
115. «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 298-Ն որոշում, 16 մարտի, 2020թ.

ՀՀ օրենսդրության համաձայն՝ ՀՀ Արդարադատության ակադեմիան քննիչների, դատախազների, դատավորների վերապատրաստումներն իրականացնում է՝ օրենքով սահմանված ժամկետներում հաստատելով ուսուցման ծրագրերը եւ մասնակիցների ցանկերը: Յուրաքանչյուր հաջորդ տարվա համար որոշումը կայացվում է նախորդ տարի[116]: Մարդու իրավունքների ազգային ռազմավարությունը եւ դրանից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագիրը ՀՀ կառավարության թիվ 1978-Լ որոշմամբ հաստատվել է 2019թ. դեկտեմբերի 26-ին: Վերապատրաստվող քննիչներին ու դատախազներին ներգրավելու եւ ուսուցման ծրագրերի վերաբերյալ որոշումները կայացվում են ավելի շուտ: Դա նշանակում է, որ թեմաների եւ մասնակիցների շրջանակը սահմանվել է («Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ն աշխատանքներ է տանում հստակ տեղեկություն ստանալու համար) ՄԻՊ ռազմավարության եւ ԳԾ ընդունումից առաջ եւ անկախ վերջիններից: Դրանք, հետեւաբար, չեն կարող հանդես գալ որպես 2020-2022թթ. ԳԾ-ից բխող կատարված գործողություն: Բացի այդ, ինչպես տեղեկացել ենք Դատավորների ընդհանուր ժողովի ուսումնական հարցերի հանձնաժողովից, այն 2020թ. տարեկան վերապատրաստման համար Արդարադատության ակադեմիա է ներկայացրել դատավորների, դատավորների թեկնածուների ուսուցման ծրագրերում ներառելու նպատակով առարկայական կուրսերի (թեմաների) վերաբերյալ իր առաջարկությունները դեռեւս 2019թ. հուլիսի 31-ի որոշմամբ եւ վերահիշյալ միջոցառումները, որոնք ներկայացվում են որպես ԳԾ միջոցառումներ, պարզապես չէին կարող ներառված լինել 2020-2022թթ. ԳԾ-ում[117]:

Ինչպես նշել է արդարադատության նախարարությունը, խոշտանգումների արգելքի թեմայով քննիչների, դատախազների, դատավորների վերապատրաստումներն իրականացվելու են

- Եվրոպայի խորհրդի,
- ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի,
- ՅՈՒՆԻՍԵՖ-ի,
- ՄԱԿ-ի զարգացման ծրագրի,
- Եվրոպական միության,
- Միջազգային զարգացման իրավունքի կազմակերպության (IDLO),
- Միջազգային համագործակցության գերմանական ընկերության (GIZ),
- Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ), Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի (EBRD) հետ համագործակցությամբ[118]:

Այդ համագործակցությունների ձեւաչափերի եւ բովանդակության հետ կապված մանրամասնություններ չեն տրամադրվել[119]:

Ըստ արդարադատության նախարարության տրամադրած տվյալների՝ Արդարադատության ակադեմիայում քննիչների, դատախազների, դատավորների վերապատրաստման նպատակով յուրաքանչյուր դասընթացի վերաբերյալ

---

116. Տե՛ս՝ «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենք, հոդված 14(1)(3), հոդված 19(2)(2) եւ 19(2)(3), հոդված 19 (6.1), հոդված 19 (7.1), հոդված 20(1) եւ (2), հոդված 21(6); «Դատախազության մասին» ՀՀ օրենք, հոդված 38.1.
117. Դատավորների ընդհանուր ժողովի ուսումնական հարցերի հանձնաժողով, N-00/20-Ու, Ե-6451, 11 սեպտեմբերի, 2020թ.
118. ՀՀ արդարադատության նախարարության 2020թ. հոկտեմբերի 14-ի գրություն Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող դասընթացների վերաբերյալ
119. նույն տեղում

ունկնդիրներին տրամադրվում է տեսական գրականության եւ դատական նախադեպային որոշումների ցանկ, որոնք պարտադիր են ուսումնասիրության համար: Տեսական գրականության հեղինակները կամ հենց դասընթացավարներն են, կամ ոլորտի ակնառու իրավաբան-գիտնականներ[120]:

Մասնավորապես, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի, ՅՈՒՆԻՍԵՖ-ի, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի եւ Արդարադատության ակադեմիայի համագործակցությամբ մշակվել եւ վերապատրաստման ծրագրերում արդյունավետորեն ներդրվել է **«Խոշտանգման քրեաիրավական բնութագիրը եւ քննության առանձնահատկությունները»** վերտառությամբ ուսումնական ձեռնարկը: Հեղինակներն են՝ Ս. Գալյան, Դ. Թումասյան, Ա. Նիկողոսյան[121]: Բացի այդ՝ Եվրոպայի խորհրդի, Եվրոպական միության եւ Արդարադատության ակադեմիայի գործակցությամբ մշակվել եւ վերապատրաստման ծրագրերում արդյունավետորեն ներդրվել է **«Կյանքի իրավունքին, խոշտանգումների եւ վատ վերաբերմունքի այլ ձեւերի արգելքին առնչվող գործերի քննությունը»** վերտառությամբ ձեռնարկը: Հեղինակներն են՝ Ս. Առաքելյան, Ջ. Կոզմա[122]: Ինչպես տեղեկանում ենք ՄԻՊ ռազմավարության եւ ԳԾ 2020թ. առաջին կիսամյակային հաշվետվությունից, ՀՀ Արդարադատության ակադեմիան նաեւ մշակել եւ ՀՀ իրավական համակարգի համար փոփոխել է **«Վատ վերաբերմունքի արգելքը»** HELP հեռավար ուսուցման դասընթացը[123]:

Արդարադատության նախարարությունը վերապատրաստումներին ԶՔԳՎ կոնկրետ օղակի քննիչների, զինվորական դատախազների եւ կոնկրետ ատյանի դատավորների մասնակցության եւ նրանց ընտրության սկզբունքի վերաբերյալ «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ի հարցին ի պատասխան հղում է կատարել ՀՀ օրենսդրությանը՝ նշելով, որ վերապատրաստմանը քննիչները, դատավորները մասնակցում են առանց առանձնացված մասնագիտացումների, իսկ դատավորները՝ անկախ ատյանից[124]:

Ինչպես նշել ենք վերեւում, Արդարադատության ակադեմիայում քննիչների, դատախազների, դատավորների՝ օրենքով սահմանված տարեկան եւ պարբերական վերապատրաստումները դուրս են ՄԻՊ 2020-2022թթ. ԳԾ շրջանակներից, քանի որ դրանք, առնվազն 2020-2021թթ. մասով, իրականացվում են ԳԾ-ի պահանջներից անկախ:

Արդարադատության նախարարությունը, կրկին անդրադառնալով Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող դասընթացներին, նշել է, որ ուսումնական նյութերի պատրաստման աշխատանքներում ներգրավված են.

- Արդարադատության ակադեմիան,
- ՀՀ դատախազությունը,
- Ֆինանսական դիտարկումների կենտրոնը (ՖԴԿ),

---

120. ՀՀ արդարադատության նախարարության 2020թ. հոկտեմբերի 14-ի գրություն Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող դասընթացների վերաբերյալ
121. նույն տեղում
122. նույն տեղում
123. Կիսամյակային հաշվետվություն, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրով 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ, 20 հուլիսի, 2020 թ., էջ 26
124. նույն տեղում; «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 24(1); «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենք, հոդված 36(1); «Դատախազության մասին» ՀՀ օրենք, հոդված 48(1)(7), հոդված 51(1); «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենք, հոդված 70(2)(9)

- ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամը,
- ՅՈՒՆԻՍԵՖ-ը,
- ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը,
- Եվրոպական միությունը,
- Եվրոպայի խորհուրդը[125]:

Կազմակերպությունների ներգրավվածության մանրամասներ չեն տրամադրվել:

Վերապատրաստված քննիչների, դատախազների ու դատավորների գնահատման հարցի առնչությամբ արդարադատության նախարարությունը եւս հղում է կատարել **«Արդարադատության ակադեմիայի մասին»** ՀՀ օրենքին, որի համաձայն՝ քննիչը, դատախազը, դատավորը համարվում են վերապատրաստումը կամ լրացուցիչ վերապատրաստումն անցած, եթե մասնակցել են վերապատրաստման կամ լրացուցիչ վերապատրաստման համապատասխան առարկայական կուրսի բոլոր ժամերին[126], կամ որպես դասախոս ներգրավված են եղել ակադեմիայում 14-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված անձանց ուսուցման գործընթացին[127]: Այսինքն՝ օրենքով նախատեսված չէ քննիչների, դատախազների ու դատավորների վերապատրաստման արդյունքների գնահատում[128]: Հավաստագրեր եւս չեն տրամադրվում[129]:

Արդարադատության ակադեմիայի կողմից խոշտանգումների արգելքի թեմայով իրականացվող վերապատրաստումների նյութերը, այդ թվում՝ հրապարակային ուսումնական ձեռնարկները, հասանելի են Արդարադատության ակադեմիայի պաշտոնական կայքում՝ հետեւյալ էջում. http://www.justiceacademy.am/#143: Արդարադատության նախարարությունը չի տրամադրել չհրապարակված ուսումնական նյութերը՝ պատճառաբանելով հեղինակային իրավունքներով[130]:

Արդարադատության նախարարությունից «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ին նաեւ տեղեկացրել են, որ Արցախի Հանրապետության քննիչները եւ դատախազները եւս ընդգրկվում են վերապատրաստման դասընթացներին, սակայն այլ մանրամասներ չեն ներկայացվել[131]:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ. ՌԱԶՄԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Խոշտանգումների արգելքի թեմայով ռազմական ոստիկանների վերապատրաստման

---

125. ՀՀ արդարադատության նախարարության 2020թ. հոկտեմբերի 14-ի գրություն Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող դասընթացների վերաբերյալ
126. «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենք, հոդված 28 (4)
127. ՀՀ արդարադատության նախարարության 2020թ. հոկտեմբերի 14-ի գրություն Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող դասընթացների վերաբերյալ; «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենք, հոդված 21(8); «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենք, հոդված 28(4), հոդված 14(1)(3)
128. ՀՀ արդարադատության նախարարության 2020թ. հոկտեմբերի 14-ի գրություն Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող դասընթացների վերաբերյալ; տես նաեւ՝ ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի ուսումնական հարցերի հանձնաժողով, N-00/20-Ու, Ե-6451, 11 սեպտեմբերի, 2020թ.
129. ՀՀ արդարադատության նախարարության 2020թ. հոկտեմբերի 14-ի գրություն Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող դասընթացների վերաբերյալ
130. ՀՀ արդարադատության նախարարության 2020թ. հոկտեմբերի 14-ի գրություն Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող դասընթացների վերաբերյալ
131. նույն տեղում

ժամանակացույցի վերաբերյալ տեղեկություններ չեն տրամադրվել, սակայն նախատեսվում է, որ դասընթացներին ներգրավվելու են ՊՆ ՌՈ կարգապահական վաշտի, ընդունիչ-բաշխիչ բաժնի եւ կարգապահական մեկուսարանի անձնակազմը[132]:

Ըստ ՊՆ գրության եւ 2020թ. կիսամյակային հաշվետվության՝ 2020թ. հուլիսի դրությամբ միջազգային գործընկերների հետ քննարկվել է վերապատրաստման դասընթացի ձեւաչափը[133]:

ՀՀ ՊՆ եւ ԵԽ գործակցության շրջանակներում միջազգային փորձագետների կողմից մշակվել է վերապատրաստման դասընթացի ծրագրի նախագիծը, որը 2020թ. սեպտեմբերի դրությամբ եղել է ուսումնասիրման փուլում[134]:

2020թ. ընթացքում միջազգային գործընկերների կողմից մշակվել են վերապատրաստման դասընթացի թեմաները և անցկացման ժամանակացույցը, սակայն, ռազմական գործողություններով պայմանավորված, 2020թ. չեն իրականացվել[135]:

ՄԻՊ աշխատակազմը Եվրոպայի խորհրդի հետ համագործակցությամբ մասնակցում է **«Մարդու իրավունքները զինված ուժերում»** HELP առցանց դասընթացի մշակման աշխատանքներին, որը որպես վերապատրաստման թիրախային լսարան է նախատեսում ոչ միայն զինծառայողներին, այլեւ սպայական կազմի ներկայացուցիչներին[136]:

Խոշտանգման արգելքի թեմայով ռազմական ոստիկանների վերապատրաստումներում եւ դրանց նյութերի մշակման գործում ՄԻԵԴ-ում ՀՀ ներկայացուցչի գրասենյակի ներգրավվածության մասին «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ն զեկույցի հրապարակման պահին տեղեկություններ չունի:

Վերապատրաստված ռազմական ոստիկանների գնահատում եւ հավաստագրերի տրամադրում ՄԻՊ ռազմավարությամբ նախատեսված չէ[137]:

Զեկույցի հրապարակման պահին «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ին տեղեկություններ չեն տրամադրվել խոշտանգումների արգելքի թեմայով ռազմական ոստիկանների վերապատրաստման համար օգտագործվող ուսումնական նյութերի, դրանց հեղինակների, մշակման գործում տեղական կամ միջազգային կազմակերպությունների ներգրավվածության, վերապատրաստման համար ընտրված կոնկրետ օղակի ռազմական ոստիկանների եւ նրանց ընտրության սկզբունքի, ինչպես նաեւ Արցախի պաշտպանության նախարարության ռազմական ոստիկաններին ընդգրկելու վերաբերյալ:

---

132. ՊՆ/510-ԳՔ/2711-20, 2 սեպտեմբերի, 2020թ.
133. ՊՆ/510-ԳՔ/2230-2020, 16 հուլիսի, 2020թ.; արդարադատության նախարարություն, 14.1/19846-20, 3 սեպտեմբերի, 2020թ., տես նաեւ՝ Կիսամյակային հաշվետվություն, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրով 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ, 20 հուլիսի, 2020 թ., էջ 26
134. ՊՆ/510-ԳՔ/2711-20, 2 սեպտեմբերի, 2020թ.
135. ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվություն, էջ 17
136. ՄԻՊ, 01/13.7/4678-20, 28 սեպտեմբերի, 2020թ.
137. ՊՆ/510-ԳՔ/2711-20, 2 սեպտեմբերի, 2020թ.

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ. ՔՆՆԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

2020թ. օգոստոսի 28-ի դրությամբ քննարկվում են խոշտանգումների արգելքի թեմայով քննիչների վերապատրաստումների ձեւաչափերը[138]:

Արդարադատության նախարարության գրության համաձայն՝ 2020թ. նախատեսվել է վերապատրաստել քննիչների 28,7%-ին[139]:

Քննիչների տարեկան վերապատրաստման ուսուցման 2020թ. ծրագրում ընդգրկվել է **«Քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր»** դասընթացը, որի առարկայական ծրագրում, որպես առանձին թեմա, նախատեսվել է քրեական իրավունքի և դատավարության ոլորտում խոշտանգումների և այլ դաժան վերաբերմունքի արգելքի, ռասիզմի և խտրականության արգելքի պաշտպանությանն առնչվող ՄԻԵԴ արդի նախադեպային իրավունքի վերաբերյալ թեմաները, ինչպես նաև ՀՀ նկատմամբ դրա կիրառման հիմնահարցերը[140]: ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվության համաձայն՝ 2020թ. հուլիս-դեկտեմբեր ամիսներին վերապատրաստվել է 5 քննիչ՝ 5,1%-ը[141]:

Ծրագրում ընդգրկվել է նաեւ **«Զինվորական ենթակայության կարգի եւ զինծառայողների կանոնագրքային փոխհարաբերությունների դեմ ուղղված հանցագործությունների քրեաիրավական խնդիրները»** վերտառությամբ դասընթաց: Այն ներառում է ՀՀ գործող քրեական օրենսգրքի եւ ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծի՝ զինվորական հանցագործություններ նախատեսող հանցակազմերի մանրամասն ներկայացումը, զինվորական կարգապահության խախտումների եւ զինվորական հանցագործությունների տարանջատման հարցերը, մասնավորապես՝ նույն արարքի համար կրկին պատասխանատվության չենթարկվելու սկզբունքի տեսանկյունից, զինվորական հանցագործությունների ընդհանուր եւ որակյալ հանցակազմերի որակման առանձնահատկությունները: Նախատեսվել է 2020թ. հուլիս-դեկտեմբեր ամիսներին վերապատրաստել 11 քննիչների՝ 11.3%-ին[142]:

ՀՀ հատուկ քննչական ծառայության ծառայողների տարեկան վերապատրաստման ուսուցման 2020 թվականի ծրագրի շրջանակում ընդգրկվել է **«Խոշտանգումների քրեաիրավական բնութագիրը և քննության առանձնահատկությունները»** վերտառությամբ դասընթացը, որի շրջանակներում ուսումնասիրվում են խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի չենթարկվելու իրավունքի պաշտպանության հիմնախնդիրները, խոշտանգումների վերաբերյալ գործերի քննության ՄԻԵԴ չափանիշները, խոշտանգման քրեաիրավական բնութագիրը, հարակից հանցակազմերից դրա սահմանազատման և որակման առանձնահատկությունները[143]: Նախատեսված է եղել

138. ՔԿ, 12/12/47261-20, 28 օգոստոսի, 2020թ.
139. ՀՀ արդարադատության նախարարության 2020թ. հոկտեմբերի 14-ի գրություն Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող դասընթացների վերաբերյալ
140. ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվություն, էջ 17-18
141. ՀՀ արդարադատության նախարարության 2020թ. հոկտեմբերի 14-ի գրություն Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող դասընթացների վերաբերյալ; ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվություն, էջ 17-18
142. ՀՀ արդարադատության նախարարության 2020թ. հոկտեմբերի 14-ի գրություն Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող դասընթացների վերաբերյալ
143. ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվություն, էջ 17-18

2020թ. փետրվարի 3-7-ը վերապատրաստել 5 ՀՔԾ քննիչների՝ 18,5%-ին[144], ինչը եւ, ինչպես տեղեկանում ենք ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվությունից, արվել է[145]:

Վերապատրաստումներ են իրականացվում նաև խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի թեմայով՝ **«Վատ վերաբերմունքի արգելք»** HELP հեռավար դասընթացի շրջանակներում[146]:

Ըստ ՄԻՊ ռազմավարության եւ ԳԾ 2020թ. առաջին կիսամյակային հաշվետվության՝ 2020թ. հուլիսի 20-ի դրությամբ Արդարադատության ակադեմիան անցկացրել է **«Զինված ուժերի համատեքստում խոշտանգումների, վատ վերաբերմունքի եւ մահվան դեպքերի արդյունավետ քննության վերաբերյալ»** վերտառությամբ սեմինար[147]: Սեմինարի անցկացման եւ մասնակիցների մասին մանրամասներ հաշվետվությունում ներկայացված չեն:

Եվրոպայի խորհրդի կայքից տեղեկանում ենք խոշտանգումների արգելքին նվիրված եւս մեկ դասընթացի մասին: 2020թ. հուլիսի 31-ին մեկնարկել է **«Վատ վերաբերմունքի դեմ պայքար»** թեմայով HELP հեռավար ուսուցման վեցշաբաթյա դասընթացը՝ իրավական ոլորտի 20 մասնագետների (այդ թվում՝ նաեւ 10 քննիչների) մասնակցությամբ: Դասընթացը հաջողությամբ ավարտած բոլոր մասնակիցներին նախատեսվել է շնորհել ավարտական վկայագրեր Եվրոպայի խորհրդի եւ Արդարադատության ակադեմիայի կողմից[148]: Ո՛չ արդարադատության նախարարությունից, ո՛չ գլխավոր դատախազությունից հղում չի կատարվել այս ծրագրին եւ դասընթացին: Զեկույցի հրապարակման պահին մշտադիտարկող խմբի համար պարզ չէ, թե որքանով է այս դասընթացը բխում ՄԻՊ ռազմավարությունից եւ 2020-2022թթ. ԳԾ-ից՝ վերջինիս 2020թ. հունվար-օգոստոս ամիսներին իրականացվելիք գործողություններից: Տեղեկություններ չկան նաեւ այն մասին, թե քննարկվե՞լ են, արդյոք, զինված ուժերում վատ վերաբերմունքի դեպքերը, կամ դասընթացին մասնակցած քննիչների շրջանում արդյո՞ք եղել են նաեւ ԶՔԳՎ քննիչներ: Ստացված պատասխան գրություններից պարզ չէ HELP ծրագիրը կապվա՞ծ է 2020-2022թթ. ՄԻՊ ԳԾ-ի հետ, թե՞ ոչ:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ. ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ըստ դատախազության տրամադրած տեղեկության՝ 2020թ. մարտի 12-ին զինվորական դատախազության 15 ներկայացուցիչ (զինվորական դատախազների 10,5%-ը) մասնակցել է ԵԽ երեւանյան գրասենյակի եւ Արդարադատության ակադեմիայի համատեղ կազմակերպած աշխատաժողովին՝ նվիրված զինված

144. ՀՀ արդարադատության նախարարության 2020թ. հոկտեմբերի 14-ի գրություն Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող դասընթացների վերաբերյալ
145. ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվություն, էջ 17-18
146. նույն տեղում
147. Կիսամյակային հաշվետվություն, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրով 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ, 20 հուլիսի, 2020 թ., էջ 27
148. ԵԽ երեւանյան գրասենյակ, Իրավական ոլորտի մասնագետների երկրորդ խումբը մասնակցում է «Վատ վերաբերմունքի դեմ պայքար» թեմայով HELP հեռավար ուսուցման դասընթացին, 31 հուլիսի, 2020թ.

ուժերում նաեւ խոշտանգումներին, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքին[149]: Եվրոպայի խորհրդի պաշտոնական կայքից տեղեկանում ենք, որ աշխատաժողովին մասնակցել է 14 դատախազ[150]: Այն անցկացրել (վարել) են ԵԽ միջազգային խորհրդատուներ Ու. Ջորդաշը, որը ներկայացրել է արդյունավետ քննության հարցերը, եւ Է. Դուբանը (ներկայացրել է կին զինծառայողներին ներառող գործերի քննության առանձնահատկությունները)[151]:

Ըստ արդարադատության նախարարության տրամադրած տեղեկության՝ ՀՀ Արդարադատության ակադեմիայի կողմից դատախազների համար իրականացվող 2020թ. տարեկան վերապատրաստման ուսուցման ծրագրում ներառվել է «ՀՀ քրեական իրավունքի արդի հարցեր» դասընթացը[152]: Վերջինով նախատեսված է եղել 2020թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին վերապատրաստել 32 դատախազ՝ 47%-ը: **«Զինվորական հանցագործությունների որակման եւ քննության մեթոդիկայի առանձնահատկությունները»** դասընթացը ներառվել է տարեկան վերապատրաստման ծրագրում՝ 2020թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին նախատեսելով վերապատրաստել 24 դատախազ՝ 35,2%-ը, ինչպես նաեւ **«ՀՀ քրեական դատավարության արդի հարցեր»** դասընթացը՝ վերապատրաստում նախատեսելով 9 դատախազի համար՝ 13,2%-ը (նույնպես 2020թ. սեպտեմբերից դեկտեմբեր ընկած ժամանակահատվածում): Խոշտանգումներին նվիրված թեմայում, մասնավորապես, ներառվել է **«Խոշտանգումների քրեաիրավական բնութագիրը եւ քննության առանձնահատկությունները»** դասընթացը, որը նախատեսվել էր անցկացնել 2020թ. ապրիլ-մայիս ամիսներին, սակայն, կորոնավիրուսի համաճարակով պայմանավորված, հետաձգվել է մինչեւ 2020թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներ[153]:

ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվությունից տեղեկանում ենք, որ 2020թ. սեպտեմբեր- դեկտեմբեր ամիսներին վերապատրաստվել է 32 դատախազ՝ 47%[154]:

«Խոշտանգումների քրեաիրավական բնութագիրը և քննության առանձնահատկությունները» վերտառությամբ դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի չենթարկվելու իրավունքի պաշտպանության հիմնախնդիրները, խոշտանգումների վերաբերյալ գործերի քննության ՄԻԵԴ չափանիշները, խոշտանգման քրեաիրավական բնութագիրը, հարակից հանցակազմերից դրա սահմանազատման և որակման առանձնահատկությունները[155]:

---

149. Դատախազություն, 44/6/19412-2020, 28 օգոստոսի, 2020թ.
150. ԵԽ երեւանյան գրասենյակ, Հայաստանի դատավորները եւ դատախազները մասնակցեցին զինված ուժերում խոշտանգումների, վատ վերաբերմունքի եւ մահվան դեպքերի արդյունավետ քննությանը նվիրված դասընթացին, 12 մարտի, 2020թ.
151. Դատախազություն, 44/6/19412-2020, 28 օգոստոսի, 2020թ.; ԵԽ երեւանյան գրասենյակ, Հայաստանի դատավորները եւ դատախազները մասնակցեցին զինված ուժերում խոշտանգումների, վատ վերաբերմունքի եւ մահվան դեպքերի արդյունավետ քննությանը նվիրված դասընթացին, 12 մարտի, 2020թ.
152. ՀՀ արդարադատության նախարարության 2020թ. հոկտեմբերի 14-ի գրություն Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող դասընթացների վերաբերյալ
153. նույն տեղում
154. ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվություն, էջ 18
155. նույն տեղում

Վերապատրաստում է իրականացվում նաև խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի թեմայով **«Վատ վերաբերմունքի արգելք»** HELP հեռավար դասընթացի շրջանակներում[156]:

Եվրոպայի խորհրդի կայքից տեղեկանում ենք խոշտանգումների արգելքին նվիրված եւս մեկ դասընթացի մասին. 2020թ. հուլիսի 31-ին մեկնարկել է **«Վատ վերաբերմունքի դեմ պայքար»** թեմայով HELP հեռավար ուսուցման վեցշաբաթյա դասընթացը՝ իրավական ոլորտի 20 մասնագետների (այդ թվում՝ նաեւ 10 դատախազների) մասնակցությամբ[157]: Դասընթացը հաջողությամբ ավարտած բոլոր մասնակիցներին նախատեսվել է շնորհել ավարտական վկայագրեր Եվրոպայի խորհրդի եւ Արդարադատության ակադեմիայի կողմից: Ո՛չ արդարադատության նախարարությունից, ո՛չ գլխավոր դատախազությունից հղում չի կատարվել այս ծրագրին եւ դասընթացին: Զեկույցի հրապարակման պահին մշտադիտարկող խմբի համար պարզ չէ, թե որքանով է այս դասընթացը բխում ՄԻՊ ռազմավարությունից եւ 2020-2022թթ. ԳԾ-ից՝ վերջինիս 2020թ. հունվար-օգոստոս ամիսներին իրականացվելիք գործողություններից: Տեղեկություններ չկան դասընթացի ընթացքում զինված ուժերում վատ վերաբերմունքի դեպքերի վերաբերյալ քննարկման, նաեւ՝ դասընթացին զինվորական դատախազների մասնակցության վերաբերյալ:

Ըստ ՄԻՊ ռազմավարության եւ ԳԾ 2020թ. առաջին կիսամյակային հաշվետվության՝ 2020թ. հուլիսի 20-ի դրությամբ Արդարադատության ակադեմիան անցկացրել է **«Զինված ուժերի համատեքստում խոշտանգումների, վատ վերաբերմունքի եւ մահվան դեպքերի արդյունավետ քննության վերաբերյալ»** վերտառությամբ սեմինար[158]: Սեմինարի անցկացման եւ մասնակիցների մասով հաշվետվությունում մանրամասներ ներկայացված չեն:

«Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ն գլխավոր դատախազություն է դիմել նաեւ զինվորական դատախազների վերապատրաստումների համար օգտագործվող ուսումնական նյութերի մասին մանրամասներ ստանալու նպատակով: Դատախազությունից նշել են, որ ուսումնական նյութերը գտնվում են հետագա մշակման եւ/կամ վերամշակման փուլում, այդպիսով՝ հրապարակման կամ տրամադրման ենթակա չեն[159]: Զեկույցի հրապարակման պահին մշտադիտարկող խմբին պարզ չէ, թե ինչու են 2020թ. օգոստոսի դրությամբ վերապատրաստման նյութերը գտնվում մշակման կամ վերամշակման փուլում, եթե Արդարադատության ակադեմիան տվյալ տարվա ուսումնական ծրագրերը որոշած պետք է լիներ նախորդ տարի, ո՞րն է դրանք լրամշակելու անհրաժեշտությունը: Եթե դասընթացը վերամշակվում է, նշանակում է եղել է դրա մեկ այլ, նախնական տարբերակ, որը եւս չի տրամադրվել «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ին:

ՀՀ արդադատության ակադեմիան ԵԽ-ի հետ գործակցությամբ մշակել եւ ՀՀ

---

156. ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվություն, էջ 19
157. ԵԽ երեւանյան գրասենյակ, Իրավական ոլորտի մասնագետների երկրորդ խումբը մասնակցում է «Վատ վերաբերմունքի դեմ պայքար» թեմայով HELP հեռավար ուսուցման դասընթացին, 31 հուլիսի, 2020թ.
158. Կիսամյակային հաշվետվություն, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրով 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ, 20 հուլիսի, 2020 թ., էջ 27-28
159. Դատախազություն, 44/6/19412-2020, 28 օգոստոսի, 2020թ.

իրավական համակարգի համար հարմարեցրել է **«Վատ վերաբերմունքի արգելքը»** HELP հեռավար ուսուցման դասընթացը[160]:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ. ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

2020թ. Արդարադատության ակադեմիայում դատավորների եւ դատավորների թեկնածուների վերապատրաստման ծրագրում ընդգրկված է եղել **«Խոշտանգումների քրեաիրավական բնութագիրը և քննության առանձնահատկությունները»** վերտառությամբ դասընթացը, որի շրջանակներում ուսումնասիրվում են խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի չենթարկվելու իրավունքի պաշտպանության հիմնախնդիրները, խոշտանգումների վերաբերյալ գործերի քննության ՄԻԵԴ չափանիշները, խոշտանգման քրեաիրավական բնութագիրը, հարակից հանցակազմերից դրա սահմանազատման և որակման առանձնահատկությունները[161]:

Ըստ ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվության՝ 2020թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին վերապատրաստվել է 24 դատավոր՝ 30,76%[162]:

Վերապատրաստման ուսուցման ծրագրում ընդգրկվել է նաև **«Քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր»** դասընթացը, որի ծրագրում որպես առանձին թեմա նախատեսվել է քրեական իրավունքի և դատավարության ոլորտում խոշտանգումների և այլ դաժան վերաբերմունքի արգելքի, ռասիզմի և խտրականության արգելքի պաշտպանությանն առնչվող ՄԻԵԴ արդի նախադեպային իրավունքի վերաբերյալ թեմաները, ինչպես նաև ՀՀ նկատմամբ դրա կիրառման հիմնահարցերը[163]:

Վերապատրաստում է իրականացվում նաև խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի թեմայով **«Վատ վերաբերմունքի արգելք»** HELP հեռավար դասընթացի շրջանակներում[164]:

Եվրոպայի խորհրդի կայքից տեղեկանում ենք, որ 2020թ. ապրիլի 8-ին քրեաիրավական մասնագիտացմամբ 10 դատավոր մասնակցել է **«Քրեական գործերով կայացվող դատական ակտերի պատճառաբանումը»** թեմայով HELP հեռավար ուսուցման ութշաբաթյա դասընթացին: Թեման առնչվել է նաեւ ՄԻԵԿ-ի խոշտանգումների արգելքին նվիրված 3-րդ հոդվածի համատեքստում՝ քրեական գործերով ներպետական դատարանների կողմից կայացվող դատական ակտերի պատճառաբանմանը: Նախատեսված է եղել դասընթացը հաջողությամբ ավարտած բոլոր մասնակիցներն շնորհել ավարտական վկայագրեր Եվրոպայի խորհրդի եւ Արդարադատության ակադեմիայի կողմից[165]: **«Քրեական գործերով**

---

160. Կիսամյակային հաշվետվություն, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրով 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ, 20 հուլիսի, 2020 թ., էջ 27
161. ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվություն, էջ 19
162.նույն տեղում
163. նույն տեղում
164. նույն տեղում
165. ԵԽ երեւանյան գրասենյակ, Դատավորներն ու դատական ծառայողները բարեհաջող ավարտեցին HELP նոր հեռավար դասընթացը, 8 ապրիլի, 2020թ.

կայացվող դատական ակտերի պատճառաբանումը» թեմայով HELP հեռավար ուսուցման երկրորդ դասընթացը տեղի է ունեցել 2020թ. մայիսի 12-ին, որտեղ եւս քննարկվել է նաեւ ՄԻԵԿ խոշտանգումների արգելքին նվիրված քրեական գործերով դատական ակտերի պատճառաբանումը: Այս անգամ մասնակցել է քրեաիրավական մասնագիտացմամբ 17 դատավոր: Դասընթացը տեւել է ութ շաբաթ, եւ հաջողությամբ ավարտած մասնակիցներին այս անգամ եւս շնորհվել են հավաստագրեր[166]: Զեկույցի հրապարակման պահին «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ին հայտնի չէ՝ արդյոք նշված HELP հեռավար ուսուցման դասընթացները բխում են ՄԻՊ ռազմավարությունից եւ 2020-2022թթ. ԳԾ-ից: Տեղեկություններ հայտնի չեն նաեւ այն մասին, թե որքանով են այս դասընթացներն անդրադարձել (եթե, իհարկե, անդրադարձել են) առանձին զինված ուժերում խոշտանգումների արգելքին վերաբերող գործերի շրջանակներում պատճառաբանման նրբություններին:

Զինված ուժերում խոշտանգումների եւ վատ վերաբերմունքի արգելքին նվիրված վերապատրաստում, մասնավորապես, տեղի է ունեցել 2020թ. մարտի 12-ին, որին, ըստ ԵԽ երեւանյան գրասենյակի կայքի, մասնակցել է վերաքննիչ քրեական դատարանի, Երեւանի եւ Հայաստանի այլ մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների ութ դատավոր: Դասընթացը կազմակերպվել է **«Մարդու իրավունքները զինված ուժերում»** ԵԽ ծրագրի շրջանակներում՝ ՀՀ Արդարադատության ակադեմիայի հետ գործակցությամբ: Քննարկվել են զինված ուժերում խոշտանգումների, վատ վերաբերմունքի եւ մահվան դեպքերի արդյունավետ քննությանն առնչվող հարցեր: Դասընթացը վարել են Եվրոպայի խորհրդի փորձագետներ Ու. Ջորդաշը եւ Է. Դուբանը, որոնք անդրադարձել են զինված ուժերում խոշտանգումների, վատ վերաբերմունքի եւ մահվան դեպքերի արդյունավետ քննության հարցերին, ինչպես նաեւ կին զինծառայողների մասնակցությամբ գործերի քննության առանձնահատկություններին[167]:

Վերապատրաստումների իրականացման գործում միջազգային եւ տեղական կազմակերպությունների հետ համագործակցության մասին «Խաղաղության երկպոսություն» ՀԿ-ի հարցմանը Դատավորների ընդհանուր ժողովի ուսումնական հարցերի հանձնաժողովը պատասխանել է, որ ի հավելումն վերոնշյալ կառույցների՝ Երեւանում ԱՄՆ դեսպանատան թմրամիջոցների դեմ պայքարի եւ իրավապահ համագործակցության (ԹՊԻՀ) գրասենյակի, Նիդեռլանդների Հելսինկյան կոմիտեի, Լայդենի համալսարանի եւ Հաագայի տեղական կառավարման ակադեմիայի հետ համատեղ, Դատավորների միջազգային միության (IAJ), Եվրոպական խորհրդին առընթեր Ապաստանի աջակցման եվրոպական գրասենյակի, Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի (EBRD), ինչպես նաեւ ՀՀ դատախազության, Հատուկ քննչական ծառայության, Ազգային անվտանգության ծառայության եւ այլ ներպետական կառույցների եւ ստորաբաժանումների մասնակցությամբ, դատավորների հետ պարբերաբար կազմակերպվել եւ կազմակերպվում են

166. ԵԽ երեւանյան գրասենյակ, Դատավորներն երկրորդ խումբը մասնակցում է «Քրեական գործերով կայացվող դատական ակտերի պատճառաբանումը» թեմայով HELP հեռավար ուսուցման դասընթացին, 12 մայիսի, 2020թ.
167. ԵԽ երեւանյան գրասենյակ, Հայաստանի դատավորները եւ դատախազները մասնակցեցին զինված ուժերում խոշտանգումների, վատ վերաբերմունքի եւ մահվան դեպքերի արդյունավետ քննությանը նվիրված դասընթացին, 12 մարտի, 2020թ.

տարբեր իրավական հիմնահարցերի շուրջ սեմինարներ, վերապատրաստումներ, աշխատաժողովներ, գիտաժողովներ, կլոր սեղաններ եւ գործուղումներ արտերկիր[168]:

ՀՀ Արդարադատության ակադեմիան անցկացրել է **«Զինված ուժերի համատեքստում խոշտանգումների, վատ վերաբերմունքի եւ մահվան դեպքերի արդյունավետ քննության վերաբերյալ»** վերտառությամբ սեմինար[169]:

ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻ ԱՐԳԵԼՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

- *Սահմանել խոշտանգումների դեպքերը որպես այդպիսին համարելու, բացահայտված կամ չբացահայտված լինելու հստակ չափանիշներ եւ դրանց հիման վրա հրապարակել վիճակագրական տվյալներ:*

- *Ապահովել խոշտանգման դեպքերի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 309.1 հոդվածի համաձայն գործերի քննությունը եւ մեղավորների դատապարտումը:*

- *Իրականացնել զորամասերում եւ զինկոմիսարիատներում ոչ միայն կյանքի իրավունքին, այլ նաեւ խոշտանգումներից եւ վատ վերաբերմունքի այլ ձեւերից զերծ մնալու իրավունքի վերաբերյալ իրազեկման միջոցառումներ:*

- *Իրականացնել վերապատրաստումներ խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի թեմայով նաեւ հրամանատարների եւ սպաների համար:*

- *Փաստաբաններին եւս ներգրավել զինված ուժերում խոշտանգումներից եւ վատ վերաբերմունքի այլ ձեւերից զերծ մնալու իրավունքի թեմայով վերապատրաստումներում:*

- *Մշակել եւ կիրառել միջոցներ, այդ թվում առցանց, COVID-19 համավարակի պայմաններում վերապատրաստումներն ու դասընթացներն անվտանգ իրականացնելու նպատակով:*

---

168. ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի ուսումնական հարցերի հանձնաժողով, N-00/20-Ու, Ե-6451, 11 սեպտեմբերի, 2020թ.
169. Կիսամյակային հաշվետվություն, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրով 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ, 20 հուլիսի, 2020 թ., էջ 28-29

ԳՈՐԾԻ ԱՐԴԱՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՄԻՊ ռազմավարությունը շեշտում է, որ գործի արդարացի քննության իրավունքը ժողովրդավարական հասարակությունում մարդու իրավական անվտանգության երաշխիքն է[170]: Այս ռազմավարությունը եւ 2020-2022թթ. ԳԾ-ն առավելապես թիրախավորում են քրեական արդարադատության ոլորտում գործերի արդարացի քննությունը, մասնավորապես, նախնական քննության կատարելագործման նպատակով իրականացվող միջոցառումներով:

2020-2022թթ. ԳԾ-ն նպատակ է դնում նվազեցնել գործի արդար քննության իրավունքի ենթադրյալ խախտմամբ ՄԻԵԴ ներկայացված բողոքների քանակը, իսկ որպես խնդիր մատնանշել է մեղադրյալ անձանց նկատմամբ մարդու իրավունքների խախտումների քանակի եւ բողոքների նվազումը: Ցավոք, սակայն, ո՛չ ՄԻՊ ռազմավարությունը, ո՛չ էլ 2020-2022թթ. ԳԾ-ն չեն ներկայացնում կառավարության որոշման ընդունման պահին այդպիսի խախտումների հասանելի քանակական տվյալներ: Հետեւաբար, արդար քննության իրավունքի եւ, հատկապես, մեղադրյալի այդ իրավունքի խախտման դեպքերի նվազումը չափելն անհնար է դառնում:

170. ՄԻՊ ռազմավարություն, էջ 23

Գործողություն 27

Ապահովել քննչական եւ դատավարական գործողությունների տեսաձայնագրումը

ՄԻՊ 2020-2022թթ. ԳԾ-ի գործի արդար քննության իրավունքին նվիրված 27-րդ գործողությամբ նախատեսվել է մինչեւ 2022թ. առաջին կիսամյակն ապահովել քննչական եւ դատավարական գործողությունների տեսաձայնագրումը:

Ակնկալվում է, որ մինչեւ սահմանված վերջնաժամկետը ՀՀ քննչական կոմիտեի 85 ստորաբաժանումներում առկա կլինեն տեսաձայնագրման միջոցներ, իսկ Հատուկ քննչական ծառայությունում նախատեսվող տեսաձայնագրման միջոցների թիվ չի նշվում:

ՀՀ քննչական կոմիտեում տեսաձայնագրման միջոցների տեղադրման պատասխանատու մարմինը ՀՀ քննչական կոմիտեն է՝ համաձայնությամբ, իսկ ՀՔԾ-ում դրանց տեղադրման համար՝ ՀՔԾ-ն՝ եւս համաձայնությամբ: Համակատարող մարմին չի սահմանվել:

Ֆինանսավորումը կատարվելու է պետական բյուջեից եւ օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Քանի որ տվյալ գործողության կատարման վերջնաժամկետը 2022թ. առաջին կիսամյակն է, մշտադիտարկող խումբը 2020թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին դրա կատարման վիճակի հետ կապված մշտադիտարկում չի իրականացրել:

Գործողություն 28

Քննչական բաժինները կահավորել այնպես, որ ճանաչման ներկայացնելու եւ առերեսման քննչական գործողությունը հնարավոր լինի իրականացնել մասնակիցների՝ միմյանց տեսողական ընկալումից դուրս գտնվելու պայմաններում

ՄԻՊ 2020-2022թթ. ԳԾ-ի գործի արդար քննության իրավունքին նվիրված 28-րդ գործողությամբ նախատեսվել է քննչական բաժինները կահավորել այնպես, որ ճանաչման ներկայացնելու եւ առերեսման քննչական գործողությունը հնարավոր լինի իրականացնել մասնակիցների՝ միմյանց տեսողական ընկալումից դուրս գտնվելու պայմաններում:

Ակնկալվում է մինչեւ 2021թ. առաջին կիսամյակը ՀՀ քննչական կոմիտեի 10 ստորաբաժանումներում, իսկ մինչեւ 2022թ. առաջին կիսամյակը՝ Հատուկ քննչական ծառայության 2 ստորաբաժանումներում ստեղծել ճանաչման ներկայացնելու եւ առերեսման քննչական գործողությունները մասնակիցների միմյանց տեսողական ընկալումից դուրս իրականացման համար նախատեսված սենյակ:

ՀՀ քննչական կոմիտեում նման սենյակի ստեղծման համար պատասխանատու մարմին է նախանշվել ՀՀ քննչական կոմիտեն, իսկ ՀՔԾ-ում սենյակի ստեղծման համար՝ ՀՔԾ-ն (եւս համաձայնությամբ): Համակատարող մարմին երկու դեպքում էլ չի սահմանվել:

Ֆինանսավորումը կատարվելու է պետական բյուջեից եւ օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Զեկույցի հրապարակման պահի դրությամբ՝ 2020թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին ՀՀ քննչական կոմիտեի եւ Հատուկ քննչական ծառայության ստորաբաժանումներում ճանաչման ներկայացնելու եւ առերեսման քննչական գործողությունները մասնակիցների՝ միմյանց տեսողական ընկալումից դուրս իրականացման համար նախատեսված սենյակի ստեղծման կապակցությամբ մշտադիտարկող խումբը տվյալների չի տիրապետում:

Գործողություն 34

Ռազմական ոստիկանների, քննիչների, դատախազների, դատավորների համար իրականացնել միջազգային չափանիշներին համապատասխան վերապատրաստումներ գործի արդարացի քննության իրավունքի թեմայով

ՄԻՊ 2020-2022թթ. ԳԾ-ի գործի արդար քննությանը նվիրված 34-րդ գործողությամբ նախատեսվել է վերապատրաստումներ իրականացնել գործի արդարացի քննության իրավունքի թեմայով՝ միջազգային չափանիշներին համապատասխան, այդ թվում՝

- ռազմական ոստիկանների,
- քննիչների,
- դատախազների,
- դատավորների համար:

Ակնկալվում է 2020-2022թթ. ընթացքում վերապատրաստել
ռազմական ոստիկանների 30%-ին,

- ՀՔԾ քննիչների 11%-ին,
- դատախազների 25%-ին,
- դատավորների 41%-ին:

Ակնկալվում է, որ ռազմական ոստիկանների եւ դատախազների վերապատրաստումների արդյունքում կնվազեն գործի արդարացի քննության իրավունքի խախտման դեպքերը քրեական գործի քննության մինչդատական վարույթում, ՀՔԾ քննիչների վերապատրաստումների արդյունքում՝ քրեական գործի նախաքննության փուլում, ինչպես նաեւ քրեական, քաղաքացիական եւ վարչական գործերով՝ դատավորների վերապատրաստումների արդյունքում:

Ռազմական ոստիկանների վերապատրաստման հարցում պատասխանատու մարմինը ՀՀ պաշտպանության նախարարությունն է, իսկ համակատարող մարմին չի սահմանվել:

ՀՔԾ քննիչների, դատախազների ու դատավորների վերապատրաստման համար պատասխանատու մարմինը ՀՀ արդարադատության նախարարությունն է: ՀՔԾ քննիչների վերապատրաստումների համար որպես համակատարող մարմիններ են նախանշվել ՀՀ Արդարադատության ակադեմիան՝ համաձայնությամբ, ՀՀ քննչական կոմիտեն՝ համաձայնությամբ, եւ Հատուկ քննչական ծառայությունը՝ համաձայնությամբ:

Դատախազների վերապատրաստումների համար համակատարող մարմիններն են ՀՀ Արդարադատության ակադեմիան՝ համաձայնությամբ, եւ ՀՀ գլխավոր դատախազությունը՝ եւս համաձայնությամբ:

Դատավորների վերապատրաստումների համար համակատարող մարմիններն են ՀՀ Արդարադատության ակադեմիան՝ համաձայնությամբ, եւ Դատավորների ընդհանուր

ժողովի ուսումնական հարցերի հանձնաժողովը՝ համաձայնությամբ:

Ֆինանսավորումը կատարվելու է պետական բյուջեից եւ օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

2020թ. ընթացքում գործի արդար քննության թեմայով ռազմական ոստիկանության, քննիչների համար վերապատրաստումներ չեն իրականացվել՝ կորոնավիրուսի համաճարակային միջոցառումների, սահմանափակումների հետ կապված[171]:

Համաձայն ՀՀ-ում արտակարգ դրություն հայտարարելու մասին ՀՀ կառավարության 2020թ. մարտի 16-ի որոշման՝ արտակարգ դրության ամբողջ ընթացքում դադարեցվել է ուսումնական կազմակերպություններում ուսումնական գործընթացը (բացառությամբ հեռավար ուսուցման)[172]:

ՀՀ Արդարադատության ակադեմիան իրականացնում է տարեկան վերապատրաստումներ քննիչների, դատախազների, դատավորների համար: ՀՀ Արդարադատության նախարարությունն այս դասընթացներին է հղում կատարել՝ որպես 2020-2022թթ. ԳԾ-ով սահմանված արդար քննության իրավունքի թեմայով վերապատրաստումներ: Այդ դասընթացներն անդրադարձ են կատարում ՀՀ քրեական իրավունքի մի շարք, այդ թվում՝ գործի արդար քննության իրավունքի որոշ հարցերի:

ՀՀ օրենսդրության համաձայն՝ ՀՀ Արդարադատության ակադեմիան քննիչների, դատախազների, դատավորների վերապատրաստումներն իրականացնում է՝ օրենքով սահմանված ժամկետներում հաստատելով ուսուցման ծրագրերը եւ մասնակիցների ցանկերը: Յուրաքանչյուր տարվա համար որոշումը կայացվում է նախորդ տարի[173]:

Մարդու իրավունքների ազգային ռազմավարությունը եւ դրանից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագիրը ՀՀ կառավարության թիվ 1978-Լ որոշմամբ հաստատվել է 2019թ. դեկտեմբերի 26-ին: Վերապատրաստվող քննիչներին ու դատախազներին ներգրավելու եւ ուսուցման ծրագրերի վերաբերյալ որոշումները կայացվում են ավելի շուտ: Դա նշանակում է, որ թեմաների եւ մասնակիցների շրջանակը սահմանվել են ՄԻՊ ռազմավարության եւ ԳԾ ընդունումից առաջ եւ անկախ ՄԻՊ ռազմավարությունից ու ԳԾ-ից: Վկայակոչված վերապատրաստումները, հետեւաբար, չեն կարող հանդիսանալ որպես 2020-2022թթ. ԳԾ-ից բխող կատարված գործողություն:

Բացի այդ, ինչպես տեղեկացել ենք Դատավորների ընդհանուր ժողովի ուսումնական հարցերի հանձնաժողովից, այն 2020թ. տարեկան վերապատրաստման համար, դատավորների, դատավորների թեկնածուների ուսուցման ծրագրերում ներառելու

171. ՄԻՊ 01/13.7/4678-20, 28 սեպտեմբերի, 2020թ.
172. «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 298-Ն որոշում, 16 մարտի, 2020թ.
173. Տե՛ս՝ «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենք, հոդված 14(1)(3), հոդված 19(2)(2) եւ 19(2)(3), հոդված 19 (6.1), հոդված 19 (7.1), հոդված 20(1) եւ (2), հոդված 21(6); «Դատախազության մասին» ՀՀ օրենք, հոդված 38.1

նպատակով, Արդարադատության ակադեմիա է ներկայացրել առարկայական կուրսերի (թեմաների) վերաբերյալ իր առաջարկությունները դեռեւս 2019թ. հուլիսի 31-ի որոշմամբ, այսպիսով՝ վերոնշյալ գործողությունները չէին կարող ներառված լինել 2020-2022թթ. ԳԾ-ում[174]:

Ինչպես նշել է արդարադատության նախարարությունը, գործի արդար քննության թեմայով քննիչների, դատախազների, դատավորների վերապատրաստումներն իրականացվելու են

- Եվրոպայի խորհրդի,
- ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի,
- ՅՈՒՆԻՍԵՖ-ի,
- ՄԱԿ-ի զարգացման ծրագրի,
- Եվրոպական միության,
- Միջազգային զարգացման իրավունքի կազմակերպության (IDLO),
- Միջազգային համագործակցության գերմանական ընկերության (GIZ),
- Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ),
- Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի (EBRD) հետ համագործակցությամբ[175]:

Այդ համագործակցությունների ձեւաչափերի եւ բովանդակության հետ կապված մանրամասնություններ չեն տրամադրվել[176]:

Ըստ արդարադատության նախարարության տրամադրած տվյալների՝ Արդարադատության ակադեմիայում քննիչների, դատախազների, դատավորների վերապատրաստման նպատակով յուրաքանչյուր դասընթացի վերաբերյալ ունկնդիրներին տրամադրվում է տեսական գրականության եւ դատական նախադեպային որոշումների ցանկ, որոնք պատրաստիր են ուսումնասիրության համար: Տեսական գրականության հեղինակները հենց դասընթացավարներն են կամ ոլորտի ակնառու իրավաբան-գիտնականներ[177]:

Արդարադատության նախարարությունը վերապատրաստումներին ԶՔԳՎ կոնկրետ օղակի քննիչների, զինվորական դատախազների եւ կոնկրետ ատյանի դատավորների մասնակցության, նրանց ընտրության սկզբունքի վերաբերյալ «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ի հարցին ի պատասխան հղում է կատարել ՀՀ օրենսդրությանը՝ նշելով, որ վերապատրաստմանը քննիչները, դատավորները մասնակցում են առանց առանձնացված մասնագիտացումների, իսկ դատավորները՝ անկախ ատյանից[178]:

Ինչպես նշել ենք վերեւում, Արդարադատության ակադեմիայում քննիչների,

---

174. Դատավորների ընդհանուր ժողովի ուսումնական հարցերի հանձնաժողով, N-00/20-Ու, Ե-6451, 11 սեպտեմբերի, 2020թ.
175. ՀՀ արդարադատության նախարարության 2020թ. հոկտեմբերի 14-ի գրություն Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող դասընթացների վերաբերյալ
176. նույն տեղում
177. նույն տեղում
178. ՀՀ արդարադատության նախարարության 2020թ. հոկտեմբերի 14-ի գրություն Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող դասընթացների վերաբերյալ; «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքի, հոդված 24(1); «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենք, հոդված (36)(1); «Դատախազության մասին» ՀՀ օրենք հոդված (48)(1)(7), հոդված 51(1); «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենք, հոդված (70(2)(9).

դատախազների, դատավորների օրենքով սահմանված տարեկան եւ պարբերական վերապատրաստումները դուրս են ՄԻՊ 2020-2022թթ. ԳԾ շրջանակներից, քանի որ դրանք (համենայնդեպս, 2020-2021թթ. ընթացքում) իրականացվում են անկախ ԳԾ-ի պահանջներից:

Արդարադատության նախարարությունը, կրկին անդրադառնալով Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող դասընթացներին, նշել է, որ ուսումնական նյութերի պատրաստման աշխատանքներում ներգրավված են.

- Արդարադատության ակադեմիան,
- ՀՀ դատախազությունը,
- Ֆինանսական դիտարկումների կենտրոնը (ՖԴԿ),
- ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամը,
- ՅՈՒՆԻՍԵՖ-ը,
- ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը,
- Եվրոպական միությունը,
- Եվրոպայի խորհուրդը:

Կազմակերպությունների ներգրավվածության վերաբերյալ հավելյալ մանրամասներ չեն տրամադրվել[179]:

Վերապատրաստված քննիչների, դատախազների ու դատավորների գնահատման հարցի առնչությամբ արդարադատության նախարարությունը եւս հղում է կատարել **«Արդարադատության ակադեմիայի մասին»** ՀՀ օրենքին, որի համաձայն՝ քննիչը, դատախազը, դատավորը համարվում են վերապատրաստումը կամ լրացուցիչ վերապատրաստումն անցած, եթե մասնակցել են վերապատրաստման կամ լրացուցիչ վերապատրաստման համապատասխան առարկայական կուրսի բոլոր ժամերին[180], կամ որպես դասախոս ներգրավված են եղել ակադեմիայում 14-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված անձանց ուսուցման գործընթացին[181]: Այսինքն՝ օրենքով նախատեսված չէ քննիչների, դատախազների ու դատավորների վերապատրաստման արդյունքների գնահատում[182]: Հավաստագրեր եւս չեն տրամադրվում[183]:

Գործի արդար քննության թեմայով Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող վերապատրաստումների նյութերը, այդ թվում՝ հրապարակային ուսումնական ձեռնարկները, հասանելի են Արդարադատության ակադեմիայի պաշտոնական կայքում՝ հետեւյալ էջում. http://www.justiceacademy.am/#143: Արդարադատության նախարարությունը չի տրամադրել չհրապարակված ուսումնական նյութերը՝ դա պատճառաբանելով հեղինակային իրավունքներով[184]:

---

179. ՀՀ արդարադատության նախարարության 2020թ. հոկտեմբերի 14-ի գրություն Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող դասընթացների վերաբերյալ
180. «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենք, հոդված 28 (4)
181. ՀՀ արդարադատության նախարարության 2020թ. հոկտեմբերի 14-ի գրություն Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող դասընթացների վերաբերյալ; «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենք, հոդված 21(8); «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենք, հոդված 28(4), հոդված 14(1)(3)
182. ՀՀ արդարադատության նախարարության 2020թ. հոկտեմբերի 14-ի գրություն Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող դասընթացների վերաբերյալ; տե՛ս նաեւ՝ ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի ուսումնական հարցերի հանձնաժողով, N-00/20-Ու, Ե-6451, 11 սեպտեմբերի, 2020թ.
183. ՀՀ արդարադատության նախարարության 2020թ. հոկտեմբերի 14-ի գրություն Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող դասընթացների վերաբերյալ
184. ՀՀ արդարադատության նախարարության 2020թ. հոկտեմբերի 14-ի գրություն Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող դասընթացների վերաբերյալ

Արդարադատության նախարարությունից «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ին նաեւ տեղեկացրել են, որ Արցախի Հանրապետության քննիչները եւ դատախազները եւս ընդգրկվում են վերապատրաստման դասընթացներում, հավելյալ մանրամասներ, սակայն, չեն ներկայացրել[185]:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ. ՌԱԶՄԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ըստ ՊՆ տրամադրած տեղեկատվության՝ 2020թ. մայիսի դրությամբ քննարկվել է վերապատրաստման դասընթացների ուսումնական ծրագրերի մշակման ձեւաչափը եւ ռազմական ոստիկանների ներգրավվածության շրջանակը՝ ըստ վերապատրաստման թեմայի նպատակահարմարության[186]: Վերապատրաստում անցնող կոնկրետ օղակների աշխատակիցների ընդգրկման մասին այլ տեղեկություններ չեն հայտնվել:

Ավելի ուշ՝ 2020թ. ընթացքում, միջազգային գործընկերների կողմից մշակվել են վերապատրաստման դասընթացի թեմաները և անցկացման ժամանակացույցը, սակայն, ռազմական գործողություններով պայմանավորված, վերապատրաստումներ չեն իրականացվել[187]: ՄԻՊ ԳԾ 2020թ. առաջին կիսամյակային հաշվետվության համաձայն՝ 2020թ. հուլիսի դրությամբ վերապատրաստման դասընթացի ձեւաչափը քննարկվել է միջազգային գործընկերների հետ: Միջազգային կամ տեղական կազմակերպությունների եւ նրանց հետ համագործակցության մասին տվյալներ «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ին չեն տրամադրվել:

Տեղեկություններ չեն տրամադրվել նաեւ վերապատրաստման ժամանակացույցի, նյութերի, դրանց հեղինակների, նյութերի մշակման գործում միջազգային կազմակերպությունների ներգրավվածության, վերապատրաստում իրականացնող անձանց կամ կազմակերպությունների ընտրության չափանիշների, վերապատրաստում անցնող ռազմական ոստիկանների գնահատման, հավաստագրերի տրամադրման, ինչպես նաեւ վերապատրաստումների արդյունավետության գնահատման վերաբերյալ:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ. ՀՔԾ ՔՆՆԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Չնայած այն բանին, որ տվյալ գործողության անմիջական արդյունքում նշված է վերապատրաստումների անցկացումը միայն ՀՔԾ քննիչների համար, այս գործողությամբ սահմանված գործի արդար քննության թեմայով վերապատրաստումներում ներգրավվել են նաեւ ՀՀ քննչական կոմիտեի քննիչները: Այս մասին «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ին հայտնել են ՀՀ քննչական կոմիտեից[188]:

2020թ. օգոստոսի 28-ի դրությամբ քննարկվում էր վերապատրաստումների

185. ՀՀ արդարադատության նախարարության 2020թ. հոկտեմբերի 14-ի գրություն Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող դասընթացների վերաբերյալ
186. ՊՆ/510-ԳՔ/374, 19 մայիսի, 2020թ.
187. ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվություն, էջ 24
188. ՀՀ ՔԿ հատուկ հանձնարարությունների, կազմակերպական-վերլուծական եւ քրեագիտական գլխավոր վարչություն, N 12/12/47261-20, 28 օգոստոսի, 2020թ.

ձեւաչափը[189]: Արդարադատության նախարարության գրության համաձայն՝ նախատեսվել է 2020թ. վերապատրաստել քննիչների 28,7%-ին[190]:

Ըստ ՄԻՊ 2020թ. տարեկան հաշվետվության՝ ՀՀ քննչական կոմիտեի ծառայողների (քննիչների) վերապատրաստման ուսուցման 2020թ. ծրագրում ընդգրկված **«Քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր»** վերտառությամբ դասընթացի ծրագրում որպես ինքնուրույն թեմա նախատեսվել են արդար դատաքննության իրավունքի պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ արդի նախադեպային իրավունքը և ՀՀ նկատմամբ դրա կիրառման հիմնահարցերը[191]: 2020թ. հուլիս-դեկտեմբեր ամիսներին դասընթացի շրջանակներում վերապատրաստվել է 5 քննիչ՝ 5.1%-ը: Տարեկան հաշվետվությունը հղում չի կատարում կոնկրետ դասընթացի, այնտեղ միայն վերացական նշվում է, որ անցել են վերապատրաստում[192]:

Քննիչների վերապատրաստման ծրագրում ընդգրկվել է նաեւ **«Զինվորական ենթակայության կարգի եւ զինծառայողների կանոնագրքային փոխհարաբերությունների դեմ ուղղված հանցագործությունների քրեաիրավական խնդիրները»** վերտառությամբ դասընթաց: Վերջինս ներառում է ՀՀ գործող քրեական օրենսգրքի եւ ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծի՝ զինվորական հանցագործություններ նախատեսող հանցակազմերի մանրամասն ներկայացումը, զինվորական կարգապահության խախտումների եւ զինվորական հանցագործությունների տարանջատման հարցերը, մասնավորապես՝ նույն արարքի համար կրկին պատասխանատվության չենթարկվելու սկզբունքի տեսանկյունից, զինվորական հանցագործությունների ընդհանուր եւ որակյալ հանցակազմերի որակման առանձնահատկությունները: Նախատեսված է եղել 2020թ. հուլիս-դեկտեմբեր ամիսներին վերապատրաստել 11 քննիչների՝ 11.3%-ին[193]:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ. ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ըստ արդարադատության նախարարության տրամադրած տեղեկության՝ ՀՀ արդարադատության ակադեմիայի կողմից դատախազների համար իրականացվող 2020թ. տարեկան վերապատրաստման ուսուցման ծրագրում ներառվել է **«ՀՀ քրեական իրավունքի արդի հարցեր»** դասընթացը[194], որի շրջանակներում քննարկվում են նաեւ արդար դատաքննության իրավունքը եւ դրա բաղադրատարրերի էությունն ու քրեական վարույթում դրանց ապահովման հիմնախնդիրները, այդ հարցերի առնչությամբ ՄԻԵԴ պրակտիկան[195]: Այս դասընթացով նախատեսված է

189. ՔԿ, 12/12/47261-20, 28 օգոստոսի, 2020թ.
190. ՀՀ արդարադատության նախարարության 2020թ. հոկտեմբերի 14-ի գրություն Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող դասընթացների վերաբերյալ
191. ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվություն, էջ 24-25
192. ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվություն, էջ 24-25
193. ՀՀ արդարադատության նախարարության 2020թ. հոկտեմբերի 14-ի գրությունն Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող դասընթացների վերաբերյալ
194. ՀՀ արդարադատության նախարարության 2020թ. հոկտեմբերի 14-ի գրությունն Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող դասընթացների վերաբերյալ
195. Կիսամյակային հաշվետվություն, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրով 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ, 20 հուլիսի, 2020 թ., էջ 32-33; ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվություն, էջ 25

եղել 2020թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին վերապատրաստել 32 դատախազ՝ 47%-ը:

Ծրագրում ներառվել է նաեւ **«Մարդու իրավունքների միջազգային իրավունքի արդի հարցեր»** թեման, որով դատախազների վերապատրաստումը նախատեսված է եղել անցկացնել 2020թ. ապրիլ-մայիս ամիսներին, սակայն, COVID-19 համաճարակով պայմանավորված, հետաձգվել է մինչեւ նույն տարվա վերջը[196]: **«Զինվորական հանցագործությունների որակման եւ քննության մեթոդիկայի առանձնահատկությունները»** դասընթացը ներառվել է տարեկան վերապատրաստման ծրագրում՝ նախատեսելով 2020թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին վերապատրաստել 24 դատախազ՝ 35,2%-ը, ինչպես նաեւ **«ՀՀ քրեական դատավարության արդի հարցեր»** դասընթացը՝ վերապատրաստում նախատեսելով 9 դատախազի համար՝ 13,2%-ը (նույնպես 2020թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին)[197]:

Ըստ ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվության՝ 2020թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին վերապատրաստվել է 9 դատախազ՝ 13,2%-ը[198]:

«Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ն նաեւ դիմել է գլխավոր դատախազություն՝ մանրամասներ ստանալու զինվորական դատախազների վերապատրաստումների համար օգտագործվող ուսումնական նյութերի մասին: Դատախազությունից նշել են, որ COVID-19-ի համաճարակի պատճառով վերապատրաստումներն արդար քննության թեմայով տեղի չեն ունեցել, իսկ ուսումնական նյութերը գտնվում են հետագա մշակման եւ (կամ) վերամշակման փուլում, ուստի հրապարակման կամ տրամադրման ենթակա չեն[199]: Զեկույցի հրապարակման պահին մշտադիտարկող խմբի համար պարզ չէ, թե ինչու են 2020թ. օգոստոսին վերապատրաստման նյութերը գտնվում մշակման կամ վերամշակման ընթացքում, եթե Արդարադատության ակադեմիան տվյալ տարվա ուսումնական ծրագրերը որոշած պետք է լիներ նախորդ տարի: Անհայտ է, թե ինչու է մշակման կամ վերամշակման անհրաժեշտություն առաջացել: Բաց այդ, եթե դասընթացը վերամշակման է ենթարկվել, նշանակում է, որ առկա է եղել դրա մեկ այլ տարբերակ, որը եւս չի տրամադրվել «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ին:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ. ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ըստ ՄԻՊ ռազմավարության եւ ԳԾ 2020թ. կիսամյակային ու տարեկան հաշվետվությունների՝ ՀՀ արդարադատության ակադեմիայի տարեկան վերապատրաստման ուսուցման 2020թ. ծրագրում ընդգրկվել են **«ՀՀ քրեական դատավարության արդի հարցեր»**, **«ՀՀ վարչական դատավարության արդի հարցեր»**, **«ՀՀ քաղաքացիական դատավարության արդի հարցեր»** վերտառությամբ դասընթացները, որոնց շրջանակներում, ի թիվս այլնի,

196. Դատախազություն, 44/6/19412-2020, 28 օգոստոսի, 2020թ.; տե՛ս նաեւ՝ ՀՀ արդարադատության նախարարության 2020թ. հոկտեմբերի 14-ի գրությունն Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող դասընթացների վերաբերյալ
197. ՀՀ արդարադատության նախարարության 2020թ. հոկտեմբերի 14-ի գրությունն Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող դասընթացների վերաբերյալ
198. ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվություն, էջ 25
199. ՀՀ գլխավոր դատախազություն, 6/6/21492-2020, 13 հոկտեմբերի, 2020թ.

քննարկման առարկա են հանդիսանում քրեական, վարչական եւ քաղաքացիական ոլորտներում գործի արդարացի քննությանն առնչվող իրավահարաբերությունները եւ այդ վարույթներում քննարկվող իրավունքի ապահովման հիմնահարցերը, այդ թվում՝ արդար դատաքննության իրավունքի իրավական բնույթը, արդարացի լսումներ, մրցակցության սկզբունք, հրապարակային քննության ողջամիտ ժամկետներ, ՄԻԵԴ-ի մոտեցումներում որպես **«զենքերի հավասարություն»** ամրագրված կողմերի հավասարությունը[200]: Արդարադատության ակադեմիայի 2020թ. ծրագրում ընդգրկված **«Քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր»** վերտառությամբ դասընթացի ծրագրում, որպես ինքնուրույն թեմա, նախատեսվել են արդար դատաքննության իրավունքի պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ արդի նախադեպային իրավունքը եւ ՀՀ նկատմամբ դրա կիրառման հիմնահարցերը[201]: Վերապատրաստումները նախատեսված են եղել իրականացնել 2020թ. սեպտեմբերից դեկտեմբեր ամիսներին[202]:

Ինչպես տեղեկանում ենք ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվությունից, 2020թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին «ՀՀ քրեական դատավարության արդի հարցեր» դասընթացի շրջանակներում վերապատրաստվել է 24 դատավոր՝ 30.76%-ը, «ՀՀ վարչական դատավարության արդի հարցեր» դասընթացում՝ 23 դատավոր (48.93%-ը), և «ՀՀ քաղաքացիական դատավարության արդի հարցեր» դասընթացի շրջանակներում՝ 119 դատավոր (98.34 %-ը)[203]:

Եվրոպայի խորհրդի կայքից տեղեկանում ենք, որ 2020թ. ապրիլի 8-ին քրեական մասնագիտացմամբ 10 դատավոր մասնակցել է **«Քրեական գործերով կայացվող դատական ակտերի պատճառաբանումը»** թեմայով HELP հեռավար ուսուցման ութշաբաթյա դասընթացին: Թեման առնչվել է նաեւ ՄԻԵԿ-ի՝ գործի արդար քննությանը նվիրված 6-րդ հոդվածի համատեքստում քրեական գործերով ներպետական դատարանների կողմից կայացվող դատական ակտերի պատճառաբանմանը: Նախատեսված է եղել դասընթացը հաջողությամբ ավարտած բոլոր մասնակիցներին շնորհել ավարտական վկայագրեր Եվրոպայի խորհրդի եւ Արդարադատության ակադեմիայի կողմից[204]: **«Քրեական գործերով կայացվող դատական ակտերի պատճառաբանումը»** թեմայով HELP հեռավար ուսուցման երկրորդ դասընթացը տեղի է ունեցել 2020թ. մայիսի 12-ին, որտեղ եւս քննարկվել

---

200. Կիսամյակային հաշվետվություն, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրով 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ, 20 հուլիսի, 2020 թ., էջ 33; ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվություն, էջ 25; տես նաեւ՝ ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի ուսումնական հարցերի հանձնաժողով, N-66/20-Ու, Ե-7343, 22 հոկտեմբերի, 2020թ.; Դատավորների ընդհանուր ժողովի ուսումնական հարցերի հանձնաժողով, N-00/20-Ու, Ե-6451, 11 սեպտեմբերի, 2020թ.; տես նաեւ՝ Ուսումնական ծրագիր, դատավորների եւ դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց տարեկան վերապատրաստման, Հավելված 1, Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի 2019թ. նոյեմբերի 29-ի թիվ ԿԽ-010/19/1 որոշման
201. Կիսամյակային հաշվետվություն, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրով 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ, 20 հուլիսի, 2020 թ., էջ 33; ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվություն, էջ 25
202. ՀՀ արդարադատության նախարարության 2020թ. հոկտեմբերի 14-ի գրությունն Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող դասընթացների վերաբերյալ
203. ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվություն, էջ 25
204. ԵԽ երեւանյան գրասենյակ, Դատավորներն ու դատական ծառայողները բարեհաջող ավարտեցին HELP նոր հեռավար դասընթացը, 8 ապրիլի, 2020թ.

է ՄԻԵԿ գործի արդար քննությանը նվիրված քրեական գործերով դատական ակտերի պատճառաբանմանը: Այս անգամ մասնակցել է քրեաիրավական մասնագիտացմամբ 17 դատավոր: Դասընթացը տեւել է ութ շաբաթ, եւ հաջողությամբ ավարտած մասնակիցներին այս անգամ եւս հավաստագրեր են տրվել[205]: Զեկույցի հրապարակման պահին «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ին հայտնի չէ՝ արդյոք նշված HELP հեռավար ուսուցման դասընթացները բխում են ՄԻՊ ռազմավարությունից եւ 2020-2022թթ. ԳԾ-ից: Տեղեկություններ հայտնի չեն նաեւ այն մասին, թե որքանով են այս դասընթացներն անդրադարձել (եթե անդրադարձել են) առանձին զինված ուժերին վերաբերող քրեական գործերով արդար քննության գործերի շրջանակներում պատճառաբանման նրբություններին:

Վերապատրաստումների իրականացման գործում միջազգային եւ տեղական կազմակերպությունների հետ համագործակցության մասին «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ի հարցմանը Դատավորների ընդհանուր ժողովի ուսումնական հարցերի հանձնաժողովը պատասխանել է, որ ի հավելումն վերոնշյալ կառույցների՝ Երեւանում ԱՄՆ դեսպանատան Թմրամիջոցների դեմ պայքարի եւ իրավապահ համագործակցության (ԹՊԻՀ) գրասենյակի, Նիդեռլանդների Հելսինկյան կոմիտեի, Լայդենի համալսարանի եւ Հաագայի տեղական կառավարման ակադեմիայի հետ համատեղ, Դատավորների միջազգային միության (IAJ), Եվրոպական խորհրդին առընթեր Ապաստանի աջակցման եվրոպական գրասենյակի, Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի (EBRD), ինչպես նաեւ ՀՀ դատախազության, Հատուկ քննչական ծառայության, Ազգային անվտանգության ծառայության եւ այլ ներպետական կառույցների եւ ստորաբաժանումների մասնակցությամբ, դատավորների հետ պարբերաբար կազմակերպվել եւ կազմակերպվում են տարբեր իրավական հիմնահարցերի շուրջ սեմինարներ, վերապատրաստումներ, աշխատաժողովներ, գիտաժողովներ, կլոր սեղաններ եւ գործուղումներ արտերկիր[206]:

ԳՈՐԾԻ ԱՐԴԱՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

- *2020-2022թթ. ԳԾ-ն նպատակ է դնում նվազեցնել գործի արդար քննության իրավունքի ենթադրյալ խախտմամբ ՄԻԵԴ ներկայացված բողոքների քանակը, իսկ որպես խնդիր մատնանշել է մեղադրյալ անձանց նկատմամբ մարդու իրավունքների խախտումների քանակի եւ բողոքների նվազումը: Այդպիսի խախտումների վերաբերյալ ելակետային տվյալներ, սակայն, առկա չեն, ուստի հարկ է հրապարակել մեղադրյալ անձանց նկատմամբ մարդու իրավունքների խախտումների եւ դրանց կապակցությամբ ներկայացված բողոքների քանակի վերաբերյալ թվային տվյալներ:*

- *Անհրաժեշտ է մշակել եւ կիրառել միջոցներ, այդ թվում առցանց, COVID-19 համավարակի պայմաններում վերապատրաստումներն ու դասընթացներն անվտանգ իրականացնելու նպատակով:*

---

205. ԵԽ երեւանյան գրասենյակ, Դատավորներն երկրորդ խումբը մասնակցում է «Քրեական գործերով կայացվող դատական ակտերի պատճառաբանումը» թեմայով HELP հեռավար ուսուցման դասընթացին, 12 մայիսի, 2020թ.
206. ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի ուսումնական հարցերի հանձնաժողով, N-00/20-Ու, Ե-6451, 11 սեպտեմբերի, 2020թ.

ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ, ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՔ

Ըստ ՄԻՊ ռազմավարության՝ ՀՀ-ի համար շարունակում է գերակա նշանակություն ունենալ իրավահավասարության ապահովման օրենսդրական երաշխիքների ստեղծման եւ դրանց արդյունավետ կիրառման խնդիրը: Կանանց եւ տղամարդկանց իրավահավասարության հիմնախնդիրների առնչությամբ ՄԻՊ ռազմավարությունը հղում է կատարում **«Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարությանը եւ միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին»** ՀՀ կառավարության որոշմանը եւ նշում, որ կանանց եւ տղամարդկանց միջեւ փաստացի հավասարության խթանումը կառավարության առաջնահերթություններից է[207]:

2020-2022թթ. ԳԾ-ում իրավահավասարության, խտրականության արգելքի գործողությունների կատարման նպատակ է սահմանվել Իրավահավասարության խորհուրդ ներկայացված բողոքների քանակի աճը, որտեղ ելակետային տվյալը զրո է: Որպես խնդիր դրվել է իրավահավասարության ապահովմանն ուղղված իրավական մեխանիզմների առկայությունը[208]:

Ի տարբերություն տվյալ զեկույցում դիտարկված այլ իրավունքների՝ իրավահավասարությանը, խտրականության արգելքին նվիրված բաժինը ներկայացրել է ելակետային տվյալ, որը, ինչպես նշվեց վերեւում, զրո է եղել: Այստեղ,սակայն, խնդիրն այն է, թե արդյո՞ք Իրավահավասարության խորհրդին ներկայացված բողոքների քանակի ավելացումը վկայում է իրավահավասարության ապահովման եւ խտրականության դեմ պայքարի գործում պետության իրականացրած միջոցառումների արդյունավետության մասին:

207. ՄԻՊ ռազմավարություն, էջ 39
208. ՄԻՊ 2020-2022թթ. ԳԾ, էջ 26

Գործողություն 48

Խրախուսել կանանց ներգրավումը զինված ուժերում

ՄԻՊ 2020-2022թթ. ԳԾ-ի իրավահավասարությանն ու խտրականության արգելքին նվիրված 48-րդ գործողությամբ նախատեսվել է խրախուսել կանանց ներգրավումը զինված ուժերում:
Ակնկալվում է մինչեւ 2022թ. առաջին կիսամյակը

- կատարել ուսումնասիրություն՝ զինված ուժերում կանանց ծառայության անցնելու, այն շարունակելու կամ դադարեցնելու դրդապատճառները պարզելու նպատակով,
- նախատեսել կին զինծառայողների իրավունքների խթանման եւ պաշտպանության հարցերով զբաղվող պաշտոնի ավելացում,
- մշակել եւ զանգվածային լրատվության միջոցներով տարածել զինված ուժերում կանանց ծառայության վերաբերյալ 5 տեսաձայնագրություն:

Ակնալվում է, որ վերոնշյալ գործողությունները կնպաստեն զինված ուժերում կին զինծառայողների թվի ավելացմանը: Կատարման համար պատասխանատու մարմինը ՀՀ պաշտպանության նախարարությունն է, իսկ համակատարող մարմին չի սահմանվել:

Ֆինանսավորումը կատարվելու է պետական բյուջեից եւ օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

2020թ. փետրվարի դրությամբ՝ ԳԾ փոփոխությունների նախագծով առաջարկվել է տվյալ գործողության կատարման վերջնաժամկետը 2022թ. առաջին կիսամյակից տեղափոխել 2022թ. երկրորդ կիսամյակ:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Ըստ ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվության՝ 2020թ. ընթացքում թվով 30 զորամասերում կին զինծառայողների հետ անցկացվել են անանուն սոցիոլոգիական հարցումներ, անհատական և խմբային զրույցներ՝ ծառայության վերաբերյալ վերջիններիս պատկերացումների, հարմարման և ծառայությունը դադարեցնելու դրդապատճառների վերաբերյալ: Արդյունքներն ամփոփվել են, համապատասխան առաջարկություններով ներկայացվել վերադաս հրամանատարությանը[209]:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ. ՊԱՇՏՈՆ

Ըստ ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվության՝ ՀՀ ԶՈՒ ԳՇ պետի 30.01.2020թ. հրամանով կանոնակարգվել է զորամասերում կանանց խորհուրդների ձևավորումն ու գործունեությունը: Նպատակներն են՝ Զինված ուժերում կանանց ներգրավումը

209. ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվություն, էջ 53-54

խրախուսելու գործողության համատեքստում կին զինծառայողների իրավունքների խթանման եւ պաշտպանության հարցերով զբաղվող պաշտոնի ավելացման նախատեսման հետ կապված մշտադիտարկում չի կատարվել 2020թ. առաջին կիսամյակում, քանի որ գործողության կատարման վերջնաժամկետը սահմանվել է 2022թ. առաջին կիսամյակը: Զինվորական կոլեկտիվներում, զինծառայողների ընտանիքներում կայուն բարոյահոգեբանական մթնոլորտի պահպանումը, զինծառայողներին հասարակական գործունեության մեջ ներգրավումը, կին զինծառայողներին ծառայությանն արդյունավետ ինտեգրումը, կարգապահության ամրապնդումը, ինչպես նաև զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանությունը, հայրենասիրական դաստիարակության կազմակերպման գործում զորամասի հրամանատարությանն աջակցություն ցուցաբերելը[210]:

«Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ի համար պարզ չէ, նախ, թե ինչ կապ ունի վերոնշյալ կանանց խորհրդի ստեղծումը ԳԾ-ով նախատեսված կին զինծառայողների իրավունքների խթանման ու պաշտպանության հարցերով զբաղվող պաշտոնի ավելացման հետ: Պարզ չեն նաեւ կանանց խորհուրդների լիազորությունները, այդ թվում՝ որոշումների կայացման գործում. կին զինծառայողների իրավունքների խթանման եւ պաշտպանության հարցերով զբաղվող պաշտոնը ենթադրում է որոշումներ կայացնելու լիազորություններ, կանանց խորհուրդների դեպքում՝ այս հարցը միանշանակ չէ:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ. ՏԵՍԱԶԱՅՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ըստ ՊՆ գրության՝ 2020թ. հուլիսի 16-ի դրությամբ միջազգային գործընկերների եւ ՀՀ ՄԻՊ գրասենյակի հետ համատեղ իրականացվում են աշխատանքներ զինված ուժերում կանանց ծառայության վերաբերյալ տեսաձայնագրությունների պատրաստման ուղղությամբ[211]:

Պաշտպանության նախարարությունը գրությամբ տեղեկացրել է, որ 2020թ. հուլիսի դրությամբ մշակվել եւ զանգվածային լրատվական միջոցներով տարածվել է մեկ տեսաձայնագրություն, իսկ երկրորդն ընթացքի մեջ է[212]:

ԵԽ երեւանյան գրասենյակը 2020թ. մայիսի 29-ին իր պաշտոնական կայքում հայտնել է, որ արտադրվել է **«Հայաստանում զինվորական ծառայությունը կանանց համար»** խորագրով անիմացիոն ներածական ֆիլմը[213]: Երկրորդ տեսանյութը, նվիրված Հայաստանում ռազմական կրթություն ստանալու հավասար իրավունքին, թողարկվել է 2020թ. հուլիսի 29-ին[214]: Դրա նպատակն է՝ բարձրացնել հասարակության լայն շրջանակների իրազեկվածությունը ռազմական կրթություն ստանալու եւ ռազմական կարիերայում առաջխաղացման հարցում տղամարդկանց եւ կանանց հավասար

210. ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվություն, էջ 54
211. ՊՆ/510-ԳՔ/2230-2020, 16 հուլիսի, 2020թ.
212. ՊՆ/510-ԳՔ/2230-2020, 16 հուլիսի, 2020թ.
213. ԵԽ երեւանյան գրասենյակ, Արտադրվել է «Հայաստանում զինվորական ծառայությունը կանանց համար» խորագրով ներածական ֆիլմը, 29 մայիսի, 2020թ.
214. ԵԽ երեւանյան գրասենյակ, Թողարկվել է «Հայաստանում ռազմական կրթություն ստանալու հավասար իրավունքի մասին» տեսաֆիլմը, 29 հուլիսի, 2020թ.

հնարավորությունների մասին: Տեսանյութերը պատրաստվել են ՀՀ պաշտպանության նախարարության եւ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի հետ համագործակցության արդյունքում, Հայաստանում կանանց համար զինվորական ծառայության վերաբերյալ են[215]:

ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվությունից տեղեկանում ենք, որ 2020թ. ընթացքում զինված ուժերում կանանց ծառայության վերաբերյալ հանրության իրազեկումն ապահովելու նպատակով նախապատրաստվել և ցուցադրվել է երեք տեսաձայնագրություն, հրատարակվել է զինված ուժերում կանանց իրավունքների վերաբերյալ տեղեկատվական գրքույկը, ինչպես նաև իրազեկիչ այլ նյութեր են ուղարկվել զորքեր: Աշխատանքներ են իրականացվում չորրորդ տեսաձայնագրության պատրաստման ուղղությամբ[216]:

Մշտադիտարկող խմբին չի հաջողվել դիտել նշված տեսաձայնագրությունները, քանի որ ՊՆ-ի կողմից տրամադրված եւ ԵԽ կայքում նշված հղումները հասանելի չեն եղել[217]: Հաշվի առնելով, որ առաջին հղումը «Ֆեյսբուք» սոցիալական ցանցից էր վերցված, ապարդյուն փորձ է արվել գտնել նշված տեսանյութը նաեւ այնտեղ:

215. ԵԽ երեւանյան գրասենյակ, Արտադրվել է «Հայաստանում զինվորական ծառայությունը կանանց համար» խորագրով ներածական ֆիլմը, 29 մայիսի, 2020թ.
216. ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվություն, էջ 54
217. ԵԽ երեւանյան գրասենյակի հղումները՝ տեղադրված եմ կայքում

COVID-19

Ապահովել 2020 թվականի ամառային զորակոչի նախապատրաստական, քաղաքացիների առողջական վիճակի հետազոտման եւ բժշկական փորձաքննության, ինչպես նաեւ զինված ուժերի համալրման աշխատանքների կազմակերպման ընթացքում նոր կորոնավիրուսի (COVID-19) տարածման եւ զինված ուժեր ներթափանցման դեպքերի կանխարգելման անհրաժեշտ միջոցառումների իրականացումը

2020թ. սկզբից COVID-19 համավարակի տարածմամբ պայմանավորված՝ դրա դեմ պայքարելու եւ կանխարգելիչ գործողություններ կատարելու նպատակով մի շարք սահմանափակումներ եւ միջոցառումներ են կիրառվել:

«Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ն դիմել է ՀՀ ՊՆ՝ պարզելու համար, թե ինչ միջոցառումներ են նախատեսված եղել զինված ուժերի համալրման աշխատանքների կազմակերպման ընթացքում նոր կորոնավիրուսի (COVID-19) տարածման եւ զինված ուժեր ներթափանցման դեպքերի կանխարգելման նպատակով: Պատասխան գրության[218] մեջ, մասնավորապես, նշվել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության զորակոչային եւ զորահավաքային համալրման ծառայության պետի կողմից տարածքային ստորաբաժանումների ղեկավարներին կարգադրվել է զորակոչի աշխատանքները կազմակերպել՝ խստագույնս պահպանելով COVID-19 անվտանգության կանոնները, այն է՝ տարածքային ստորաբաժանման բժշկական հանձնաժողովի եւ կենտրոնական բժշկական հանձնաժողովի փորձաքննությանը ներկայացող յուրաքանչյուր զորակոչիկին հատկացնել դիմակ եւ ձեռքերն ախտահանելու համար ախտահանիչ նյութեր՝ Alcogel, ապահովել յուրաքանչյուր բժիշկ-մասնագետի մոտ միայն մեկ զորակոչիկի ներկայությունը, բացառել տարածքային ստորաբաժանման ընդհանուր օգտագործման տարածքում զորակոչիկների կամ նրանց հարազատների կուտակումները:

Մշտադիտարկող խումբը զորակոչի ընթացքում COVID-19 համավարակի տարածման կանխման նպատակով կիրառված միջոցառումների վերաբերյալ զինկոմիսարիատներում, զորակոչիկների շրջանում, հարցումներ է անցկացրել:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Զինկոմիսարիատներում եւ բուժհաստատություններում հերթում սպասելիս միմյանցից հեռավորություն պահելու հարցին 196 հարցվածներից 112-ը (57%) դրական է պատասխանել, իսկ 84-ը (43%)՝ բացասական (տես՝ նկ. 6) :

---

218. ՊՆ/510-ԳՔ/1719-20, 27 մայիսի, 2020թ.

ՆԿ.6. ԶԻՆԿՈՄԻՍԱՐԻԱՏՆԵՐՈՒՄ և ԲՈՒԺՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԵՐԹՈՒՄ ՍՊԱՍԵԼԻՍ ՄԻՄՅԱՆՑԻՑ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՐՈՂԱՑԵ՞Լ ԵՔ ՊԱՀԵԼ: (N=196)



Զինկոմիսարիատներում եւ բուժհիմնարկներում հերթին սպասելիս մարդկանց կուտակման հարցին 99 զորակոչիկ (51%) պատասխանել է, որ կուտակումներ եղել են, իսկ 97-ը (49%)՝ որ չեն եղել (տես նկ. 7):

ՆԿ.7. ԶԻՆԿՈՄԻՍԱՐԻԱՏՈՒՄ ԵՒ/ԿԱՄ ԲՈՒԺՀԻՄՆԱՐՈՒՄ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿՈՒՏԱԿՈՒՄՆԵՐ ԿԱՅՒՆ (N=196)

ՆԿ.8. ԻՍԿ ՄՅՈՒՍ ԶՈՐԱԿՈՉԻԿՆԵՐԸ ՊԱՀՊԱՆՈՒ՞Մ ԷԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ (ԴԻՄԱԿ, ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ): (N=196)



Հարցվածները տեղյակ են եղել վարակից պաշտպանվելու միջոցների մասին: Հարցվածներից 75-ը (38%) նշել է դիմակը՝ որպես իր պաշտպանման միջոց: Երկրորդ տեղում է եղել ձեռքերի ախտահանումը՝ պատասխանների 13,3%-ը (26 հոգի):

Հարցվածներից 165-ը (84%) նկատել է, որ իրենց հետ սպասող այլ զորակոչիկները եւս պահպանել են հակահամաճարակային անվտանգության կանոնները (տե՛ս նկ. 8):

Հարցման մասնակիցներից որեւէ մեկին անհատական պաշտպանության միջոցներ՝ դիմակ եւ ձեռքերն ախտահանելու միջոց չեն տրամադրվել:

Հարցվածներից 158-ը (81%) նշել է, որ բժշկական զննության ժամանակ բժիշկները եղել են դիմակներով եւ ձեռնոցներով, իսկ 36-ը (19%) ասել է, որ բժիշկները միայն դիմակ են կրել:

Ինչպես «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ին հայտնել են ՊՆ-ից[219], հանրապետական հավաքակայանում զորակոչիկների թեստավորում անցկացվելու է միայն անհրաժեշտության դեպքում: Մշտադիտարկող խմբի հարցումներից պարզվել է, որ հարցվածներից 167-ը (85%) նշել է, որ իրենցից թեստ չեն վերցրել, իսկ 29-ը (15%)՝ որ վերցրել են (տե՛ս նկ. 9):

219. ՊՆ/510-ԳՔ/1827-20, 09 հունիսի, 2020թ.

ՆԿ.9. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ԹԵՍՏ ՀԱՆՁՆԵԼ ԵՔ: (N=196)



ՄԻՊ ռազմավարության եւ դրանից բխող 2020-2022թթ. ԳԾ-ի վերաբերյալ ընդհանուր եզրակացություններ եւ առաջարկներ

ԶԻՆՎԱԾ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-ԻՑ ՆՈՅԵՄԲԵՐԻ 9-Ը, 2020Թ.

Զինված ուժերում մարդու իրավունքների ապահովման համատեքստում ՄԻՊ ռազմավարությունում և 2020-2022թթ. ԳԾ-ում հաշվի չեն առնվել պատերազմի վերսկսման կամ սահմանային լարվածության ավելացման ռիսկերը: 2020թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից Արցախի և Հայաստանի դեմ սանձազերծված պատերազմի հետևանքով լրջագույն մարտահրավերներ են առաջացել հատկապես ԶՈւ-ում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում: Այդ խնդիրները ներառում են պատերազմական գործողությունների հետևանքով նոր խոցելի խմբերի՝ տեղահանված քաղաքացիների, պատանդների, գերիների, ռազմագերիների, անհայտ կորած անձանց, նրանց ընտանիքի անդամների, վիրավոր զինծառայողների և (կամ) կամավորների առաջացումը և նրանց իրավունքների ապահովումը, բայց չեն սահմանափակվում միայն դրանցով:

Պատերազմի հետևանքով 2020թ. ընթացքում ՄԻՊ ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրով նախատեսված որոշ միջոցառումներ չեն իրականացվել կամ իրականացվել են մասամբ[220]:

Հարկ է իրականացնել խորքային վերլուծություն՝ պատերազմի հետեւանքով մարդու իրավունքների հետ կապված նոր առաջնահերթությունների եւ խնդիրների ձեւակերպման, որոշել նոր թիրախային խմբեր եւ բացահայտել դրանց կարիքները՝ նոր ռազմավարություն մշակելու նպատակով: Օրինակ՝ պատերազմական գործողությունների արդյունքում տեղահանված քաղաքացիներ, պատանդներ, գերիներ եւ ռազմագերիներ, անհայտ կորած անձանց ընտանիքների անդամներ, վիրավոր զինծառայողներ ու (կամ) կամավորներ եւ այլն:

Վերանայել եւ արդիականացնել Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության փաստաթուղթը, ինչպես նաեւ արդիականացնել ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագիրը՝ հաշվի առնելով պատերազմի հետեւանքներով պայմանավորված մարդու իրավունքների ոլորտի մարտահրավերները եւ այդ գործոնների ազդեցությունը ԳԾ-ով նախատեսվող գործողությունների արդյունավետության վրա:

---

220. Արդարադատության նախարարություն, № /14.1/3262-2021 գրություն, 12 փետրվարի, 2021թ.

ՉԱՓԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՒ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Ըստ ՄԻՊ ռազմավարության՝ գործողությունները ձեւակերպվել են դրանց չափելիությունը եւ հաշվելիությունն ապահովելու հեռանկարով[221]: ՄԻՊ ռազմավարությունից եւ 2020-2022թթ. ԳԾ-ից, սակայն, պարզ չէ, թե ինչ չափորոշիչներով է ստուգվելու գործողությունների կատարման արդյունավետությունը: Օրինակ՝ ինչպե՞ս է չափվելու զորամասերում ու զինկոմիսարիատներում մարդու իրավունքների պաստառների արդյունավետությունը զինծառայողների ու զորակոչիկների իրազեկվածության բարձրացման հարցում: Նույնը վերաբերում է նաեւ բանակում մահվան դեպքերի թվերի փոփոխության վրա զինկոմիսարիատներում ու զորամասերում իրազեկման ակցիաների, տեղեկատվական նյութերի եւ ԶԼՄ-ներով դրանց վերաբերյալ տեսաձայնագրությունների տարածման ազդեցության գնահատմանը:

Հարկ է մշակել եւ կիրառել հստակ չափորոշիչներ՝ չափելու համար կատարվող միջոցառումների ազդեցությունը/արդյունավետությունը գործողության կատարման, ինչպես նաեւ գործողության կատարման ազդեցությունը՝ սահմանված նպատակին հասնելու գործում:

ՄԻՊ ռազմավարության համաձայն՝ իշխանության մարմինների կողմից իրավունքահեն քաղաքականություն վարելու դեպքում ռազմավարական պլանավորման հիմքում պետք է լինի, ի թիվս այլոց, ՀՀ մարդու իրավունքների ոլորտում առկա իրավիճակի սթափ եւ համապարփակ գնահատականը[222]:

Գործողությունների ծրագրում մի շարք գործողությունների կատարման ազդեցություն է նախանշվել իրավունքների խախտումների նվազումը: Ըստ 2020-2022թթ. ԳԾ-ի, մասնավորապես, կյանքի իրավունքի, խոշտանգումների արգելքի եւ արդար քննության իրավունքի թեմաներով հրամանատարների, ռազմական ոստիկանների, քննիչների, դատախազների եւ դատավորների վերապատրաստումները, ռազմական ոստիկանությունում տեսաձայնագրման միջոցների տեղադրումը, քննչական եւ դատավարական գործողությունների տեսաձայնագրման ապահովումը, քննչական բաժինները տեսողական հատուկ միջոցներով կահավորելը, խոշտանգման հանցանքի նկատմամբ վաղեմության ժամկետի կիրառման սահմանափակումների ամրագրումը եւ անանուն հաղորդումներ ներկայացնելու մեխանիզմի ներդրումը հանգեցնելու են զինված ուժերում մահվան դեպքերի, ինչպես նաեւ քրեական դատավարության տարբեր փուլերում մարդու իրավունքների խախտումների նվազմանը: Զինված ուժերում մահվան դեպքերի նվազման ազդեցություն է ակնկալվում նաեւ զորակոչիկների եւ զինծառայողների իրազեկման արդյունքում, ինչպես նաեւ հանդուրժողականության եւ փոխադարձ հարգանքի մթնոլորտի ամրապնդումը, որի շնորհիվ պետք է նվազեն ոչ կանոնադրային հարաբերությունների հետեւանքով մահվան դեպքերը: Նույն տրամաբանությունն է նաեւ իրավահավասարության ապահովման եւ խտրականության արգելքի համատեքստում զինված ուժերում կանանց ներգրավվածության խրախուսման գործողության հիմքում, որում որպես ազդեցություն նշվում է կին զինծառայողների թվի ավելացումը:

---

221. ՄԻՊ ռազմավարություն, էջ 15
222. ՄԻՊ ռազմավարություն, էջ 3

Սակայն, ոչ ՄԻՊ ռազմավարությունում, ոչ էլ 2020-2022թթ. ԳԾ-ում առկա չեն ելակետային տվյալներ կամ դրանց վերաբերյալ վերլուծություն, որը կցուցադրեր, թե մինչ ՄԻՊ ԳԾ-ով նախանշված գործողությունների իրականացումը որքան է կազմել ՀՀ զինված ուժերում մահվան դեպքերի քանակը եւ այդ դեպքերի քանի տոկոսն է տեղի ունեցել ոչ կանոնադրային հարաբերությունների արդյունքում, կամ որքան են եղել քրեական դատավարության տարբեր փուլերում մարդու իրավունքների խախտումների դեպքերը: Բացակայում են նաեւ այդ դեպքերի ելակետային տվյալների հավաքագրման չափանիշները: Տվյալներ չեն ներկայացվում ներկա պահին զինված ուժերում կանանց ներգրավվածության մասով եւս: Ելակետային տվյալների բացակայության պայմաններում տուժում է միջոցառումների ազդեցության չափելիությունը: Հետեւաբար, կարելի է եզրակացնել, որ ռազմավարությամբ նշված ՀՀ մարդու իրավունքների ոլորտում առկա իրավիճակի սթափ եւ համապարփակ գնահատման պահանջն արտահայտում չի գտել գործողությունների ծրագրում:

Մշակել եւ ներկայացնել ելակետային տվյալներ մարդու իրավունքների խախտումների իրավիճակի վերաբերյալ:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԵՒ ՄԻԵԴ-ՈՒՄ ՀՀ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի եւ ՄԻԵԴ-ում ՀՀ ներկայացուցչի գրասենյակները հիմնականում ներգրավված են որպես համակատարող մարմիններ ՄԻՊ ռազմավարության 2020-2022թթ. ԳԾ իրականացման գործում: ՄԻՊ գրասենյակը, սակայն, կյանքի իրավունքի թեմայով հրամանատարների, ռազմական ոստիկանների, քննիչների, դատախազների ու դատավորների, խոշտանգումների արգելքի թեմայով դատավորների եւ գործի արդար քննության թեմայով քննիչների վերապատրաստումների իրականացման եւ դրանց նյութերի պատրաստման գործում չի նշվել որպես համակատարող մարմին: Դրա փոխարեն ՄԻՊ-ը որպես համակատարող մարմին ներգրավված է խոշտանգումների արգելքի թեմայով ռազմական ոստիկանների, քննիչների, դատախազների, իսկ արդար քննության թեմայով՝ ռազմական ոստիկանների, դատախազների ու դատավորների վերապատրաստումներում: ՄԻՊ ներգրավվածության այս տարանջատումը հասկանալի չէ: Բացի այդ՝ ՄԻՊ-ն արդեն իսկ ներգրավված է HELP առցանց դասընթացների մշակման գործում: ՄԻՊ-ը, լինելով մարդու իրավունքների ոլորտի մասնագիտացված մարմին, իր ներգրավվածությամբ կնպաստեր գործողությունների պատշաճ եւ համակարգային կատարմանը: Հենց ՄԻՊ ռազմավարությունն ինքնին շեշտադրում է մասնավորապես խոշտանգումների դեմ պայքարում մարդու իրավունքների պաշտպանի, որպես խոշտանգումների կանխարգելման ազգային մեխանիզմի, դերն ու նշանակությունը:

Ինչ վերաբերում է ՄԻԵԴ-ում ՀՀ ներկայացուցչի գրասենյակին, ապա այն չի ներգրավվել որպես համակատարող մարմին գործի արդար քննության թեմայով քննիչների վերապատրաստումներում: ՄԻԵԴ-ում ՀՀ-ի դեմ բողոքների մեծ մասը, սակայն, վերաբերում է հենց ՄԻԵԿ 6-րդ հոդվածով պաշտպանվող այս իրավունքին:

Ներգրավել մարդու իրավունքների պաշտպանին 2020-2022թթ. ԳԾ-ով կյանքի իրավունքի, խոշտանգումների արգելքի եւ գործի արդար քննության բոլոր

վերապատրաստումների նախապատրաստման եւ անցկացման գործում՝ որպես համակատարող մարմին:

ՄԻԵԴ-ում ՀՀ ներկայացուցչի գրասենյակին որպես համակատարող մարմին ներգրավել գործի արդար քննության թեմայով քննիչների վերապատրաստումներում:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1, 26, 34-ԻՑ ԲԽՈՂ՝ ՔՆՆԻՉՆԵՐԻ, ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ԵՒ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ

ԱՐԴՅՈ՞Ք ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ 2020-2022ԹԹ. ԳԾ-Ի ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԵՆ

Արդարադատության նախարարությունը «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ին տրամադրել է տեղեկություններ Արդարադատության ակադեմիայում կազմակերպվող տարեկան վերապատրաստման դասընթացների վերաբերյալ՝ որպես ՄԻՊ 2020-2022թթ. ԳԾ-ով կյանքի իրավունքի (1) խոշտանգումների արգելքի (26), արդար քննության իրավունքի թեմաներով (34) գործողությունների շրջանակներում կատարվող միջոցառումներ: Այդ տարեկան վերապատրաստումների ծրագրերի վերաբերյալ որոշումները, սակայն, կայացվել են նախքան ՄԻՊ ռազմավարության եւ 2020-2022թթ. ԳԾ-ի հաստատման մասով կառավարության որոշման կայացումը: Հետեւաբար, հստակ չէ, թե արդյո՞ք այս գործողություններն իրականացվել են 2020-2022թթ. ԳԾ-ի շրջանակներում:

Մշակել եւ իրականացնել վերապատրաստումներ (դասընթացներ) քննիչների, դատախազների եւ դատավորների համար՝ նվիրված կյանքի իրավունքին, խոշտանգումների արգելքին եւ գործի արդարացի քննությանը միջազգային չափանիշների հիման վրա, որոնք ուղղակիորեն կկատարվեն ՄԻՊ ռազմավարության եւ 2020-2022թթ. ԳԾ-ի շրջանակներում:

Բացի այդ՝ Արդարադատության ակադեմիայում ներդրված ծրագրերից միայն խոշտանգումների արգելքին է 2020թ. համար նվիրվել առանձին դասընթաց: Կյանքի իրավունքի եւ արդար քննության իրավունքի մասով առանձին դասընթացներ չեն ներդրվել:

Իրականացնել վերապատրաստումներ հենց զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության եւ ապահովման համատեքստում՝ հաշվի առնելով նաեւ այն հանգամանքը, որ ՄԻՊ ռազմավարությամբ թիրախավորվում են հատկապես պետության հոգածության ներքո գտնվող եւ կյանքի համար վտանգավոր իրավիճակներում հայտնված անձինք՝ ի դեմս զինծառայողների[223]:

ՀԱԿԱՍԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ԹՎԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ն միմյանց հակասող տեղեկություններ է ստացել մի կողմից արդարադատության նախարարության, մյուս կողմից՝ գլխավոր դատախազության կողմից կյանքի իրավունքի եւ խոշտանգումների արգելքի

223. ՄԻՊ ռազմավարություն, էջ 19

թեմայով վերապատրաստված եւ վերապատրաստման ենթակա դատախազների թվի վերաբերյալ: Արդարադատության նախարարությունից, մասնավորապես, տեղեկացել ենք, որ 2020թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին նախատեսվել է վերապատրաստել 32 դատախազ՝ 47%-ը[224], իսկ գլխավոր դատախազության տրամադրած տեղեկության համաձայն՝ 2020թ. մարտի 12-ին զինվորական դատախազության 15 ներկայացուցիչ, զինվորական դատախազների 10,5%-ը, մասնակցել է ԵԽ երեւանյան գրասենյակի եւ Արդարադատության ակադեմիայի համատեղ կազմակերպած աշխատաժողովին՝ նվիրված զինված ուժերում նաեւ մահվան եւ խոշտանգումների դեպքերի արդյունավետ քննությանը[225]: Եթե 32 դատախազն ընդհանուր դատախազների թվի 47%-ն է, նշանակում է, որ դատախազների ընդհանուր թիվը 68 է: Եթե 15 զինվորական դատախազը կազմում է ընդհանուր զինվորական դատախազների 10,5%-ը, նշանակում է՝ ՀՀ-ում կա 143 զինվորական դատախազ, որն ավելի մեծ թիվ է կազմում, քան արդարադատության նախարարության նշած դատախազների ընդհանուր թիվը: Դատախազների նույն թիվն արդարադատության նախարարության կողմից տրամադրվել է նաեւ գործի արդար քննության թեմայով վերապատրաստումների համատեքստում:

Ճշտել եւ հստակեցնել վերապատրաստման ենթակա դատախազների եւ զինվորական դատախազների թիվը:

224. ՀՀ արդարադատության նախարարության 2020թ. հոկտեմբերի 14-ի գրություն Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող դասընթացների վերաբերյալ
225. Դատախազություն, 44/6/19412-2020, 28 օգոստոսի, 2020թ.

COVID-19

Զինված ուժերում մարդու իրավունքների ապահովման համատեքստում ՄԻՊ ռազմավարությունում և 2020-2022թթ. ԳԾ-ում հաշվի չեն առնվել COVID-19 համաճարակով պայմանավորված ռիսկերը:

Վերանայել եւ արդիականացնել Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության փաստաթուղթը, ինչպես նաեւ արդիականացնել ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագիրը՝ հաշվի առնելով նոր տիպի կորոնավիրուսի (COVID-19) համաճարակով պայմանավորված մարդու իրավունքների ոլորտի մարտահրավերները եւ այդ գործոնների ազդեցությունը ԳԾ-ով նախատեսվող գործողությունների արդյունավետության վրա:

Ինչպես տեղեկացրել են գործողությունների կատարման համար համապատասխան պատասխանատու եւ (կամ) համակատարող պետական մարմիններից՝ 2020թ. ընթացքում մի շարք միջոցառումներ, COVID-19 համաճարակով պայմանավորված, չեն իրականացվել[226]: Այդպիսի միջոցառումներից են եղել կյանքի իրավունքի թեմայով հրամանատարների, ռազմական ոստիկանների, քննիչների, խոշտանգումների արգելքի թեմայով՝ ռազմական ոստիկանների ու քննիչների, գործի արդար քննության թեմայով՝ քննիչների ու դատախազների վերապատրաստումները: Այս առումով հարկ է, սակայն, նշել, որ արտակարգ դրության ընթացքում, համաձայն ՀՀ-ում արտակարգ դրություն հայտարարելու մասին ՀՀ կառավարության 2020թ. մարտի 16-ի որոշման, դադարեցվել է ուսումնական կազմակերպություններում ուսումնական գործընթացը՝ բացառությամբ հեռավար ուսուցման: Այս սահմանափակումը չի տարածվել ռազմական ուսումնական հաստատությունների վրա[227]: COVID-19-ի պատճառով է նաեւ, որ ըստ ՊՆ-ի՝ ԶՈՒ-ում անհանդուրժողականության դրսեւորումների պատճառների, նպաստող գործոնների եւ դրանց հաղթահարման ուղիների վերաբերյալ ուսումնասիրությունը չի կատարվել[228], իսկ 2020թ. առաջին կիսամյակում զորամասերում չեն իրականացվել հոգեբանների դասընթացները:

Մշակել եւ կիրառել միջոցներ՝ COVID-19 համավարակի պայմաններում վերապատրաստումներն ու ուսումնասիրություններն անվտանգ իրականացնելու նպատակով:

---

226. Արդարադատության նախարարություն, № /14.1/3262-2021 գրություն, 12 փետրվարի, 2021թ.
227. «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 298-Ն որոշում, 16 մարտի, 2020թ.
228. ՊՆ/510-ԳՔ/1793-20, 4 հունիսի, 2020թ.; ՊՆ/510-ԳՔ/2711-20, 2 սեպտեմբերի, 2020թ.